# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

37ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 42 (1842) ՇԱԲԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 11, 2017
VOLUME 37, NO. 42 (1842) SATURDAY, NOVEMBER 11, 2017

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### Պաշտպանել Ընտանեկան Բռնութեան Դէմ Օրէնքները

Աշխարհի գրեթէ բոլոր երկիրներուն մէջ ընտանեկան բռնութիւնը տարածուած ընկերային յոռի երեւոյթ մըն է, որուն դէմ կը պայքարին միջազգային կազմակերպութիւններ ու պետութիւններ: Աշխարհի 120 երկիրներու խորհրդարաններէն ներս օրէնսդրական քայլեր ձեռք առնուած են կանխելու համար ընտանիքներէ ներս ամէն տեսակի բռնութիւն՝ յատկապէս երեխաներու եւ կանանց նկատմամբ:

Վերջերս Հայաստանի Արդարադատութեան Նախարարութեան կողմէ մշակուած՝ «Ընտանեկան բռնութեան կանխարգելման եւ ընտանեկան բռնութեան ենթարկուած անձանց պաշտպանութեան մասին» օրինագիծ մը դրուեցաւ հրապարակային քննարկման: Ի զարմանս շատերու, այս օրինագիծին դէմ հանդէս եկողներու մեծ խումբ մը ի յայտ եկաւ, որ բաւական աղմուկ ստեղծելով առայժմ կը յաջողին խանգարել նման օրէնքի մը ընդունումը Ազգային Ժողովին կողմէ: Հանրային քննարկման մը ընթացքին, օրէնքին դէմ եղողները այնպիսի բուռն ձեւով կ՛ընդդիմանային, որ կարծէք թէ մահ ու կենաց հարց դարձած էր անոնց համար: Օրէնքին դէմ եղողները կը պնդեն, թէ այն թելադրուած է օտար երկիրներու կողմէ եւ որ Հայաստանի մէջ նման հասարակական պահանջ գոյութիւն չունի: Միւս կողմէ, օրէնքը պաշտպանող քաղաքացիական կազմակերպութիւնները կը յիշեցնեն որ, միայն վերջին հինգ տարիներուն 50 անձեր զոհ դարձած են ընտանեկան բռնութեան, իսկ աւելի քան 700 բռնութեան դէպքեր պաշտօնապէս արձանագրուած են:

Հակառակ որ Արդարադատութեան նախարար Դաւիթ Յարութիւնեան բազմիցս յայտարարած է, որ այս նախագծով երեխաներուն ծնողներէն վերցնելու որեւէ քայլեր չեն սահմանուած եւ կը միտի բացառապէս ընտանեկան բռնութեան ենթարկուած անհատներու պաշտպանութեան, այդուհանդերձ խումբ մը «գործիչներ» կը շարունակեն պնդել իրենց տեսակէտին վրայ:

Ընտանեկան բռնութիւններէ պաշտպանուիլը մարդկային իրաւանց տարրական իրաւունք մը է, որուն հետամուտ պէտք է ըլլան բոլորը եւ առաջին հերթին Հայաստանի իւրաքանչիւր քաղաքացի: Նման օրէնքները վեր են քաղաքական տարակարծութիւններէ եւ բոլորի մտահոգութեան առարկան պէտք է դառնան: Եթէ մեր երկիրը պիտի դասուի զարգացած հասարակութիւններու շարքին, պէտք է դուրս գալ կարծրատիպերէ ու ողջունել նման քայլերը:

**«ՄԱՍԻՍ»**

## Նալպանտեան Նեթանիահուին Ներկայացուցած է Արցախեան Հարցի Կարգաւորման Ներկայիս Վիճակը



Էտուարտ Նալպանտեան եւ Իսրայէլի վարչապետ Բենիամին Նեթանիահու հանդիպումի ընթացքին

*Նոյեմբերի 7-ին պաշտօնական այցով Իսրայէլ գտնուող Հայաստանի Արտաքին գործոց նախարար Էտուարտ Նալպանտեան հանդիպած է Իսրայէլի վարչապետ, արտաքին գործոց նախարար Բենիամին Նեթանիահուին:*

*Հանդիպումը մեկնարկած է ընդլայնուած կազմով՝ պատուիրակութիւններու մասնակցութեամբ, ապա շարունակուած՝ առանձնազրոյցի տեսքով:*

*Ողջունելով հիւրը՝ Իսրայէլի վարչապետը կարեւորած է Հայաստանի ԱԳ նախարարի այցը Իսրայէլ եւ նշած, որ Իսրայէլ պատրաստակամ է ընդլայնել յարաբերութիւնները Հայաստանի հետ՝ ընդգծելով, որ երկու երկիրներու միջեւ առկայ է համագործակցութեան մեծ ներուժ:*

*Նախարար Նալպանտեան Բենիամին Նեթանիահուին փոխանցած է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեանի ողջոյններն ու բարեմաղթանքները: Հայաստանի Արտաքին գործոց նախարարը գոհունակութեամբ նշած է, որ վերջին շրջանին հայ-իսրայէլական շփումներուն մէջ կը նկատուին աշխուժացում եւ համոզունք յայտնած է, որ հիմնուելով երկու ժողովուրդներու բարեկամական պատմական հարուստ աւանդոյթներուն վրայ, համատեղ ջանքերու շնորհիւ Հայաստանի եւ Իսրայէլի յարաբերութիւնները նոր լիցք կը ստանան:*

*Զրուցակիցները նշած են, որ խորհրդանշական է, որ այցը տեղի ունեցած է երկու երկիրներու միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման 25-ամեայ յոբելենական տարին, համոզմունք յայտնելով, որ այն լաւ հնարաւորութիւն է անցած ճանապարհը գնահատելու եւ յարաբերութիւններու զարգացման ուղղութեամբ նոր քայլեր ձեռնարկելու համար:*

*Իսրայէլի վարչապետը եւ Հայաստանի ԱԳ նախարարը անդրադարձած են Երուսաղէմի մէջ հայկական հարուստ պատմամշակութային ժառանգութեան:*

Շար.ը էջ 5

## Կարապետեան Կը Յայտնէ Որ Պայմանաւորուածութիւն Չկայ, Թէ 2018-ի Ապրիլէն Ետք ով Պիտի Ըլլայ Վարչապետ

*Վարչապետ եւ Հայաստանի Հանրապետական կուսակցութեան առաջին փոխնախագահ Կարէն Կարապետեան լրագրողներու հետ հանդիպման ընթացքին յայտարարած է, որ իշխող կուսակցութիւնը վարչապետի թեկնածու պիտի առաջարկէ 2018-ի Ապրիլին 9-էն ետք, իսկ թէ ով պիտի գլխաւորէ կառավարութիւնը ՀՀԿ-ի մէջ քննարկումներ չեն եղած եւ որեւէ պայմանաւորուածութիւն չկայ:*

*Մամուլի մէջ վերջերս յայտնուած տեղեկութեան համաձայն, նախագահ Սերժ Սարգսեան ու վարչապետ Կարէն Կարապետեան պայմանաւորուած են, որ 2018 թուականի Ապրիլէն ետք, երբ կ՛աւարտի նախագահ Սարգսեանի պաշտօնավարման երկրորդ ժամկէտը ու նոր սահմանադրութիւնը ամբողջովին կը մտնէ ուժի մէջ, Սերժ Սարգսեան պիտի զբաղեցնէ վարչապետի պաշտօնը, իսկ ներկայիս վարչապետը պիտի դառնայ փոխվարչապետ:*

*«Այսօրուայ մեր իրավիճակում Ապրիլի 9-ից յետոյ Հայաստանի Հանրապետական կուսակցութիւնը առաջարկելու է վարչապետի թեկնածութիւն՝ իր կոալիցիոն գործընկերոջ հետ համա-*

Շար.ը էջ 5

## Էրտողան . «Եթէ Փութին Իսկապէս Կեդրոնանայ Ղարաբաղեան Խնդրի Վրայ, Այն Շատ Հեշտութեամբ կը Լուծուի»

*Եթէ Փութին իսկապէս կեդրոնանայ ղարաբաղեան խնդրի վրայ, այն շատ հեշտութեամբ կը լուծուի, յայտարարած է Թուրքիոյ նախագահ Էրտողանը:*

*Ինչպէս յայտնած է «ԹԱՍՍ» գործակալութիւնը, Էրտողան նաեւ յայտնած է, որ եկող շաբաթ պիտի հանդիպի Ռուսաստանի նախագահի հետ՝ քննարկելու ղարաբաղեան խնդիրը:*

*Միւս կողմէ, Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ յայտարարած է, որ Մոսկուայի եւ Պաքուի միջեւ այսօր չկարգաւորուած հարցեր չկան:*

*Իսկ Ատրպէյճանի Արտաքին գործոց նախարար Էլմար Մամետիարով Պաքուի մէջ յայտարարած է, որ ռուսաստանցի պաշտօնակից Սերկէյ Լաւրովի հետ քննարկած է Մոսկուայի մէջ Ատրպէյճանի, Հայաստանի եւ Ռուսաստանի արտաքին արտաքին գործոց նախարարներու եռակողմ հանդիպում կազմակերպելու հնարաւորութիւնը, սակայն այն դեռ հարցականի տակ է:*

*Հոկտեմբերին Ատրպէյճանի Արտաքին գործոց նախարարը յայտարարած էր, որ Մինսկի Խումբի համանախագահները կը նախատեսեն Նոյեմբերի կէսերուն հանդիպիլ նաեւ Էտուարտ Նալպանտեանի հետ: Մամետիարով նաեւ ըսած էր, թէ Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներու վերջին հանդիպման ժամանակ որոշուած է արագացնել բանակցային գործընթացը:*

*Հայաստանի Արտաքին գործոց նախարարութիւնը, սակայն, առայժմ չէ հաստատած նման հանդիպման մասին տեղեկութիւնները: «Հանդիպման, անոր վայրի եւ ժամկէտներու մասին վերջնական պայմանաւորուածութեան առկայութեան պարագային այդ մասին նախապէս կը տեղեկացնենք», ըսած է Արտաքին գործոց նախարարութեան խօսնակ Տիգրան Բալայեանը:*

## ԱՐՏԵՐԿԻՐ ԱՊՐՈՂ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

2018 Մայիսին Լիբանանի մէջ տեղի պիտի ունենան խորհըրդարանական ընտրութիւններ:
Համաձայն խորհրդարանի նոր օրէնքին, արտերկիր ապրող լիբանանցիներուն իրաւունք պիտի տրուի իրենց բնակած երկիրներուն մէջ մասնակցելու այդ ընտրութիւններուն:
Հետեւաբար, կոչ կ՛ուղղենք արտերկիր ապրող լիբանանահայերուն՝ առցանց արձանագրուելու հետեւեալ կայքէջ մուտք գործելով.
www.diasporavote.mfa.gov.lb
Արձանագրութեան ժամկէտը կ՛աւարտի 20 Նոյեմբեր 2017-ին

**Ս.Դ.Հ.Կ. Ընտրական Կեդրոնական Գրասենեակ**

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Օլիգարխիան Ոչինչից Չի Վախենում, Բացի Փողի Վերջանալուց

ԿԱՐՊԻՍ ՓԱՇՈՅԵԱՆ

*Ո՞վ է դառնալու վարչապետ 2018 թուականին՝ Սերժ Սարգսեանը, թէ՞ Կարէն Կարապետեանը: Խօսակցութիւններ են շրջանառւում նաեւ երրորդ այլընտրանքային թեկնածուի մասին: Ահա սա է այն ելակէտային հարցադրումը, որը դրուած է Հայաստանի քաղաքական համակարգի առջեւ: Հարցադրում, որն այդպես էլ շարունակում է օդից կախուած մնալ, քանի որ գրեթէ բոլոր դերակատարները հրաժարւում են յստակ պատասխան տալ, իսկ հնարաւոր թեկնածուները ո՛չ ժխտում եւ ո՛չ էլ հաստատում են իրենց վարչապետ դառնալու հնարաւորութիւնը: Սերժ Սարգսեանը իր յաւակնութիւնները ներկայացնում է միջնորդաւորուած, իրեն հաւատարիմ ՀՀԿ-ականների միջոցով: Մասնաւորապէս՝ Շարմազանովը, Բաբլոյեանը, Աշոտյեանը պարբերաբար ընդգծում են Սերժ Սարգսեանի անսխալ առաջնորդ, քաղաքական հայր եւ անվտանգութեան երաշխաւոր լինելու փաստը, անգամ Նայիրի Սահակեանը՝ Արագածոտնի նախկին մարզպետի եղբայրն է ասում, թէ՝ նա երկրի տէր ու տիրականն է: Իսկ գործող վարչապետն ամէն կերպ խուսափում է յստակ պատասխանից, բայց ընդգծում է ապագայում երկրին ծառայելու իր ցանկութիւնն ու պատրաստակամութիւնը: Ամէն դէպքում հանրութեանը յուզող ամենաօրակարգային հարցը դեռեւս չունի յստակ պատասխան եւ մեզ մնում է միայն ենթադրութիւններ անել:*

*Իսկ վերջին օրերին տեղեկութիւններ են շրջանառւում, որ քանի դեռ Ղարաբաղեան հակամարտութիւնը չի կարգաւորուել, Սերժ Սարգսեանը չպիտի հեռանայ, քանի որ նա Ղարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորման համար դիտարկւում է որպէս վստահելի ու վերահսկելի գործընկեր: Շրջանառուող այս տեղեկութիւնը քաղաքագէտ Մանուէլ Սարգսեանը դիտարկում է որպէս հեքիաթ, մասնաւորապէս մեզ հետ զրոյցում նշելով. «Նման խօսակցութիւններ եղել են բոլոր նախագահների ժամանակ, իշխանութիւնները մշտապէս փայլուն կերպով օգտագործել են այդ հեքիաթը, փորձում են ցոյց տալ, թէ իրենք ինչ-ինչ որակներ ունեն ու անփոխարինելի են: Այս թէզը նորութիւն չէ, այն մշտապէս տիրապետող է եղել ներքին քաղաքականութեան մէջ, այսինքն այս կամ այն մարդու իշխանութիւնը փորձում են կապել Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման հետ»: Քաղաքագէտի համոզմամբ՝ այդ տեղեկութիւնն ու Սերժ Սարգսեանին վերագրուող անվտանգութեան երաշխաւոր եզրոյթը նոյն ժանրից են: Նպատակը մէկն է՝ հիմնաւորել Սարգսեանի իշխանութեան մնալու անհրաժեշտութիւնը:*

*Բացի այդ վերջին շրջանում Սերժ Սարգսեանը տնտեսագիտական վերլուծութիւններ է անում, իր ելոյթներում տնտեսութեան վերաբերեալ գնահատականներ է հնչեցնում: Տպաւորութիւն կայ, որ նա հանրութեանը նախապատրաստում է իր կողմից՝ վարչապետի պաշտօնը զբաղեցնելուն:*

*Նշենք նաեւ, որ Նոյեմբերի 2-ի մամուլի ասուլիսի ժամանակ Կարէն Կարապետեանն էլ ընդգծեց անվտանգութեան ոլորտում Սերժ Սարգսեանի կարեւոր ու բացառիկ դերի մասին: Արդեօ՞ք Կարապետեանը հաշտուել է Սերժ Սարգսեանի վարչապետ դառնալու մտքի հետ, թէ՞ իրեն է 2018 թ. տեսնում որպէս վարչապետ, իսկ Սարգսեանին՝ ԱԽՔ-ի պաշտօնում: Մանուէլ Սարգսեանը համոզուած է, որ Սերժ Սարգսեանը հաստատապէս դառնալու է վարչապետ. «Այդ հարցում ես որեւէ կասկած չունեմ, ո՞նց կարելի է պատկերացնել, որ Սերժ Սարգսեանը իր կամքով կը հեռանայ»,- նշեց նա: Քաղաքագէտի պնդմամբ՝ Կարէն Կարապետեանը գործող օլիգարխիկ համակարգում օտար տարր է եւ օլիգարխիան չի հանդուրժի Կարէն Կարապետեանին: «Օլիգարխիան փողի իշխանութիւն է, օլիգարխիան ոչնչից չի վախենում, բացի փողի վերջանալուց»,- եզրափակեց քաղաքագէտը:*

*Յիշեցնենք, որ 2014 թ. Ապրիլի 10-ին Սերժ Սարգսեանը ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական յանձնաժողովի անդամների հետ հանդիպման ժամանակ յայտարարել էր. «Եւ ձեր առաջ, քննարկումների փուլն սկսելուց առաջ, պաշտօնապէս յայտարարում եմ, որ ես՝ Սերժ Սարգսեանս, այլեւս երբեք չեմ առաջադրուելու Հայաստանի Հանրապետութեան Նախագահի պաշտօնի համար: Եթէ վերջնական քննարկումների արդիւնքում իմ ցանկութեանը չհամապատասխանող ուղի ընտրուի, նկատի ունեմ պառլամենտական կառավարման մոդելը, ապա ես չեմ յաւակնի նաեւ վարչապետի պաշտօնին»: Իսկ «Ալ Ջազիրա» հեռուստաընկերութեան՝ Հայաստանի մասին պատրաստած ֆիլմում լրագրողի հարցին, թէ «արդեօք դուք դիտարկո՞ւմ էք առաջադրուել վարչապետի պաշտօնում նոր Սահմանադրութեամբ», Սերժ Սարգսեանը պատասխանել էր. «Ես շատ վաղ եմ համարում այդ խօսակցութիւնները վարելը: Դա նոյնն է, որ մենք, դեռեւս ձուկը ջրում սկսենք խօսել նրա օգտագործման մասին: Ասելս ինչ է, որ մենք յաջորդ տարի ունենալու ենք խորհրդարանական ընտրութիւններ: Եւ որպէսզի ես այդպիսի տարբերակ դիտարկեմ, առնուազն մեր կուսակցութիւնը պէտք է ընտրութիւններում շատ լաւ քուէ ստանայ»:*

*Այսինքն 2014 թ.-ի վստահութիւնը «Ալ Ջազիրա»-ի հետ զրոյցում փոխակերպուել է երկմտանքի, հիմա էլ տնտեսագիտական վերլուծութիւններ է իրականացնում, իսկ կուսակիցները զբաղուած են Սերժ Սարգսեանի անձի պաշտամունքով: Փաստերի համալիր վերլուծութեամբ գծագրուող խճանկարը ամբողջանում է: Կանխատեսւում են երեք հիմնական սցենարներ: Առաջին սցենարի համաձայն Կարէն Կարապետեանը ջախջախիչ պարտութիւն կը կրի եւ կը հեռացուի ոչ միայն պաշտօնից, այլ նաեւ երկրից: Յաղթող կողմը նրա համար Երեւան-Մոսկուա յետադարձ տոմս կը գնի եւ կ'ուղարկի այնտեղ, որտեղից նա եկել է: Երկրորդ սցենարը շատ աւելի հաւանական է թւում, ըստ որի՝ Սերժ Սարգսեանն ու Կարէն Կարապետյանը հաշտութեան եզրեր կը գտնեն եւ Կարապետեանը կը դառնայ Սերժ Սարգսեանի տրանսֆորմացուող բուրգի մասնիկներից մէկը՝ առաջին փոխվարչապետի պաշտօնում: Եւ վերջին թերեւս ամենաանհաւանական սցենարը՝ Կարէն Կարապետեանը կարող է ռուսների եւ իրեն աջակցող ժողովրդի մի մասի միջոցով հեռացնել փոփոխութիւններ մերժող Սերժ Սարգսեանի համակարգը՝ միանձնեայստանձնելով երկրի կառավարման ղեկը: Իհարկէ բարդ է ասել, թէ որ սցենարը կեանքի կը կոչուի, բայց չի բացառւում, որ Սերժ Սարգսեանը չստանձնի վարչապետի պաշտօնը եւ կառավարի երկիրը ստուերից՝ որեւէ երկրորդական պաշտօն զբաղեցնելով: Միջազգային պրակտիկայում այդպիսի օրինակները բազմաթիւ են:*

«ՀՐԱՊԱՐԱԿ»

# Էրտողանի Ղարաբաղեան Մահակը՝ Պուտինին

ԹԱՄԱՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

*Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրտողանը այս շաբաթ հանդիպելու է Ռուսաստանի նախագահի հետ ու մինչ այս հանդիպումը, Էրդողանն ասել է, որ, եթէ Պուտինն իսկապէս կեդրոնանայ ղարաբաղեան խնդրի վրայ, այն շատ հեշտութեամբ կը լուծուի: Էրդողանը, փաստօրէն, յստակ հասկացրել է, որ այս շաբաթ Ռուսաստանի նախագահի հետ քննարկելու է ղարաբաղեան խնդիրը: Պուտինի դիրքորոշումը չափազանց կարեւոր է այս հարցում, «Սաբահ» պարբերականին ասել է Էրդողանը՝ Ատրպէյճան կատարած այցից յետոյ:*

*Սերժ Սարգսեանն ու Իլհամ Ալիեւը հանդիպեցին Հոկտեմբերի 16-ին՝ Ժնեւում: Բանակցութիւններից ժամեր անց հայ համայնքի հետ հանդիպմանը Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանն ասաց. «Ե՛ւ Ատրպէյճանի նախագահը, ե՛ւ ես խորապէս շահագրգռուած ենք, որ լարուածութիւնը թուլանայ»: Իսկ Հոկտեմբերի 26-ին ՀՀԿ-ի «Անդրանիկ Մարգարեան» քաղաքական դպրոցում Սերժ Սարգսեանը նշել էր. «Ցաւոտ լուծում է լինելու Արցախի հարցում: Չի կարող առանց փոխզիջումների լուծում լինել»:*

*Այսպէս, նախապատրաստւում է Պուտինի եւ Էրտողանի հանդիպումը: Ընդ որում, վերջին շրջանում Պուտինի եւ Էրդողանի երկխօսութիւնը կանոնաւոր բնոյթ է կրում. Սեպտեմբերի 28-ին նրանք Անկարայում անցկացրել են 1,5 ժամ տեւած բանակցութիւններ, որտեղ Պուտինը ժամանել էր աշխատանքային այցով, իսկ Հոկտեմբերի 21-ին հեռախօսազրոյցի ընթացքում քննարկել են երկկողմանի համագործակցութեան եւ Սիրիայի ճգնաժամի հարցերը:*

*Մնում է սպասել ու տեսնել, թէ Թուրքիա-Ատրպէյճան հերթական եւ նոր ակնկալիքները Պուտինից ինչ դրսեւորումներ կը ստանան, ինչ ազդեցութիւն կ'ունենան Հայաստանի նկատմամբ: Ըստ երեւոյթին, Նոյեմբերի կէսերին՝ Սերժ Սարգսեանի՝ Ռուսաստան կատարելիք այցի ժամանակ Սարգսեան-Պուտին հանդիպմանը կը քննարկուի ԼՂ խնդիրը եւ ի ցոյց կը դրուի, թէ որքան է լրջօրէն Պուտինը վերաբերել, կամ արհամարհել Թուրքիայի ակնկալիքների մասին Էրտողանի բարձրագոչ յայտարարութիւնը:*

*Հարկ է նկատել, որ Մոսկուան էլ իր հերթին սկսել է խօսել վերջին օրերին ԼՂ խնդրի մասին: ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդներն ակտիւօրէն աշխատում են Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման հարցով, Մոսկուայում ԵԱՀԿ գլխաւոր քարտուղար Թոմաս Գրեմինգերի հետ բանակցութիւններից առաջ ասել է ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լաւրովը: Նրա խօսքով՝ «Նման երկխօսութիւնը բոլորի համար ընդհանուր խնդիրների լուծման ժամանակ կոլեկտիւ որոշումներ կայացնելիս թոյլ կը տայ ներկայացնել ԵԱՀԿ շատ լուրջ ներուժը: Այդ ներուժը շատ կարեւոր է օգտագործել առաջին հերթին Ուկրաինայի հակամարտութեան, նաեւ Մերձդնեստրում հակամարտութիւնների կարգաւորման համար: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները ակտիւօրէն աշխատում են Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման հարցով: Մենք բարձր ենք գնահատում ԵԱՀԿ համանախագահութիւնը Անդրկովկասի հարցով Ժնեւի քննարկումներում: Կարեւոր ենք համարում չթուլացնել ԵԱՀԿ ուշադրութիւնը Բալկանների խնդրին», ... ասել է Լաւրովը՝ յաւելելով, որ Ռուսաստանը շահագրգռուած է հակամարտութիւնների կարգաւորման գործում:*

«ՀԱՅԵԼԻ»

Մասիս
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of **the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
*http://www.massisweekly.com*

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

### Խորհրդարանական Ընտրութիւններու Խախտումները Գրեթէ Նոյն Եղանակով Կրկնուած Են ՏԻՄ Ընտրութիւններու Ժամանակ

*«Ելք» դաշինքը, որ տեղական ինքնակառավարման մարմիններու (ՏԻՄ) անցեալ Կիրակի օրուայ ընտրութիւններուն յանձնաժողովի անդամներ ունեցած է բոլոր ընտրատեղամասերուն մէջ, կը փաստէ, որ այն ընտրախախտումները, որոնք տեղ գտած էին խորհրդարանական եւ Երեւանի աւագանիի ընտրութիւններուն, գրեթէ նոյն եղանակով կրկնուած են նաեւ ՏԻՄ ընտրութիւններուն:*

*Երեւանի աւագանիի «Ելք» խմբակցութեան ղեկավար Դաւիթ Խաժակեանի խօսքով, խախտումները ընտրատեղամասերուն մէջ կանխելը դժուար եղած է, որովհետեւ անոնք հիմնականին մէջ տեղի ունեցած են տեղամասերէն դուրս:*

*«Մարդկանց թէ՛ հարկադրաբար, թէ՛ համոզելով բերում էին ընտրատեղամասեր, ինչը որպէս խախտում դժուար է գնահատել, բայց միայն այն հանգամանքը, որ այդ մարդիկ իրենց կամքով չէին գալ ընտրատեղամաս, եւ որ տեղամաս բերելիս հնարաւորինս փորձում էին վերահսկել քուէարկութիւնը, ընդ որում անկախ տարիքից՝ բոլորին փորձում էին վերահսկել՝ քուէախուց փորձ անել մտնել, կամ մինչեւ քուէախուց ուղեկցելը իրեն ցոյց տալ, թէ ինչպէս պէտք է քուէարկի: Տեղամասեր են եղել, որտեղ այդ կողմի ու դէմի քուէարկութեան ձեւը իբրեւ ցոյց են տուել քուէախցիկում՝ կողմի մօտ քուէարկած, դա ուղղորդող բան է եղել: Հնարաւորինս փորձել ենք սրանք կանխել: Սխալմամբ մեր յանձնաժողովի նախագահը կանխել է կրկնակի քուէարկութեան փորձը, եւ դրա վերաբերեալ եւս գործ է յարուցուել: Իրականում այդ գործիքակազմը շարունակւում է, որոշ տեղերում՝ քողարկուած», - ըսած է Խաժակեան:*

### Սփիւռքի Նախարարը Հայրենադարձութեան Ծրագիր կը Նախաձեռնէ



Սփիւռքի Նախարար Հրանոյշ Յակոբեան

*Սփիւռքի նախարարութիւնը կը նախատեսէ 2018-ին հայրենադարձութեան ծրագիր սկսիլ, որու ծիրէն ներս հայեցակարգ ու նաեւ հայրենադարձութեան մասին օրէնք պիտի մշակուի: Այս մասին տեղեկացուցած է սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը՝ պատասխանելով «Ազատութեան» այն հարցին, թէ արդեօ՞ք իրատեսական կը համարէն նախագահ Սերժ Սարգսեանի՝ 2040-ին 4 միլիոն բնակիչ ունենալու տեսլականը:*

*Յակոբեանի փոխանցմամբ, պէտք է մանրակրկիտ ուսումնասիրել, թէ ինչպէս կարելի է մարդոց շահագրգռել՝ Հայաստան գալու, այստեղ աշխատելու եւ ապրելու համար:*

*«Ես կարծում եմ, որ եթէ հանրապետութեան նախագահը յայտարարել է, ուրեմն պատասխան նաեւ հաշուարկներ, մօտեցումներ, ճշգրտումներ արուել են: Ինչ վերաբերում է Սփիւռքին՝ մեխանիքական աճի առումով, ոչ միայն բնական աճի առումով, մենք 2018 թուականին նախատեսել ենք հայրենադարձութեան նախապատրաստական աշխատանքները, մենք, փաստօրէն, մշակելու ենք հայեցակարգ, ուսումնասիրել ենք միւսների փորձը, մշակելու ենք օրէնք հայրենադարձութեան մասին, մասնագիտական հայրենադարձութեան համար ենք փորձում աշխատանքներ իրականացնել», - «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ ըսած է Յակոբեան:*

*Ըստ սփիւռքի նախարարին, հայրենադարձութեան համար հայրենասիրութիւնը բաւարար չէ:*

### Մահացած է «27 Հոկտեմբեր»-ի Գործով Ցմահ Ազատազրկման Բանտարկուած Է. Գրիգորեանը

*Արդարադատութեան նախարարութեան քրէակատարողական ծառայութեան խօսնակ Գոռ Ղլէչեան «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ փոխանցած է, հիւանդանոցին մէջ մահացած է «27 Հոկտեմբեր»-ի գործով ցմահ ազատազրկման դատապարտուած Էդուարդ Գրիգորեանը:*

*Այսպիսով 27 Հոկտեմբերի գործով 7 դատապարտուածներէն 3-ը մահացած են, մէկը՝ Նաիրի Յունանեանի եղբայրը, ըստ տարբեր աղբիւրներու, հոգեկան հիւանդութիւն ձեռք բերած է: Եւս մէկ մեղադրեալ ալ նախաքննութեան ընթացքին մահացած էր, ըստ պաշտօնական վարկածի՝ Նուպարաշէնի մեկուսարանին մէջ ելեկտրահարուած էր:*

*«27 Հոկտեմբեր»-ի գործով քանի մը տարի տեւած դատական գործընթացը լուսաբանած «Առաւօտ» թերթի լրագրող Ռուզան Մինասեանի կարծիքով, Էդուարդ Գրիգորեան զինուած խումբի կարեւոր անդամներէն էր: Մինասեան վստահ է, որ եթէ Գրիգորեանը խօսէր, անոր ըսածները գործի շրջանակէն ներս աւելի կարեւոր կ'ըլլային, քան խումբի պարագլուխ Նայիրի Յունանեանինը:*

*Լրագրողի խօսքով՝ Էդիկ Գրիգորեանը, կարելի է ըսել, զինուած խումբի գաղափարական առաջնորդն էր: Դատավարութեան ընթացքին պարզ դարձած է, որ Նայիրի Յունանեանէն եւ անոր եղբօրմէն ետք խորհրդարանի մէջ ծրագրուող ահաբեկչութեան մասին իմացած է Գրիգորեանը:*

### ԵՊՀ-ի Ուսանողները Դասադուլ Յայտարարած Են Պահանջելով Պահել Տարկէտման Իրաւունքը



Երեւանի Պետական Համալսարանի գլխաւոր շէնքի դիմաց ուսանողները հաւաքուած են բողոքի ցոյցի

*Երեւանի Պետական Համալսարանի (ԵՊՀ) գլխաւոր շէնքի դիմաց Նոյեմբեր 7-ի առաւօտէն ուսանողները հաւաքուած են եւ բողոքի ցոյց իրականացուցած՝ դասադուլի կոչով:*

*Ուսանողները բողոքած են տարկէտման իրաւունքի վերացման դէմ, որ նախատեսուած է «Զինուորական ծառայութեան եւ զինծառայողի կարգավիճակի մասին» նոր օրէնքի նախագիծով, որ ընդունուած է առաջին ընթերցմամբ:*

*Ուսանողները շրջած են ԵՊՀ բոլոր բաժինները դասադուլի կոչով դիմած բոլոր այն ուսանողներուն, որոնք կը կիսեն իրենց մտավախութիւնը՝ կապուած օրէնքի փոփոխութեան հետ:*

*Համալսարանի անվտանգութեան աշխատակիցները փակած են շէնքի դռները եւ թոյլ չեն տուած ներսը գտնուողներուն դուրս գալ: Ուսանողները կը պահանջէին բանալ համալսարանի դռները եւ թոյլ տալ ուսանողներուն միանալ իրենց ցոյցին:*

*ԵՊՀ շէնքէն դուրս եկած է Աշխարհագրութեան եւ երկրաբանութեան բաժնի տնօրէն Գրիգորեանը, որ նախ յանձնարարած է բաց թողել դուռը եւ թոյլ տալ ուսանողներուն դուրս գալ: Ան ընդգծած է, որ տարկէտման իրաւունքը ընկերային արդարութեան խախտում է, բոլորը պէտք է ծառայեն բանակ. Գրիգորեանի խօսքով, իր բոլոր ուսուցիչները, դասախօսները կռուած են պատերազմին, վերադարձած են, դարձած են գիտնականներ, փրոֆեսորներ. «Գիտութեամբ զբաղուող մարդուն ծառայութիւնը չի խանգարում, աւելին՝ կոփում է մարդուն: Որոշ ուժեր փորձում են այս վիճակը քաղաքականացնել, ստեղծել ըմբոստ վիճակ»:*

*Նշենք, որ յիշեալ օրէնքի նախագիծով տարկէտում կը տրուի միայն այն ուսանողներուն, որոնք Պաշտպանութեան Նախարարութեան հետ կը կնքեն պայմանագիր, ըստ որուն համալսարանը աւարտելէ ետք պէտք է ծառայեն ոչ թէ 2, այլ 3 տարի ժամկէտով, բայց որպէս սպայ:*

### Ձեւաւորուած Է «Յանուն Հայաստան Պետութեան» Ճակատ

*Օրերս «Յանուն Հայաստան Պետութեան» ճակատի նախաձեռնող խումբը ընդունած է հռչակագիր: Հռչակագիրը ստորագրած են հասարակական, քաղաքական, մշակութային յայտնի գործիչներ՝ Հայաստանէն, Արցախէն, Սփիւռքէն:*

*Այդ առթիւ մամլոյ ասուլիս հրաւիրած էին Ալեք Ենիգոմշեանը, դերասանուհի Թամար Յովհաննիսեանը, Արմէն Յովհաննիսեանը եւ Դաւիթ Սանասարեանը:*

*Ալեք Ենիգոմշեանը նշած է, որ այդ հռչակագիրի շուրջ համախմբուած են ժողովուրդի կողմէն չմերժուած մարդիկ: Ան կարծիք յայտնած է, որ պիտի ստեղծուի վստահութեան մթնոլորտ, մեր քաղաքացիները պիտի կազմակերպուին:*

*Անդրադառնալով իշխանութիւններուն, Ալեք Ենիգոմշեան ըսած է, որ անոնք չեն կրնար իրավիճակը փոխել, եւ պէտք է ապահովել քաղաքացիական զօրաշարժ: Ան համոզմունք յայտնած է, որ ժողովուրդին կարելի է հանել անելանելիութեան վիճակէն:*

*Դաւիթ Սանասարեան նկատած է, որ թէեւ կան ընդդիմադիր ուժեր, սակայն անոնք չեն կրնար յայտ ներկայացնել: Ան ըսած է, որ ամէն օր Արցախի հարցով կրնայ իրականացուիլ խայտառակ քաղաքականութիւն: Եւ, ըստ անոր, պէտք չէ թոյլ տալ, որ անոնք իրականացնեն այդ քաղաքականութիւնը: Ան յիշեցուցած է, որ այդ նախաձեռնութեան միացած են հասարակական, քաղաքական, մշակութային գործիչներ:*

*Արմէն Յովհաննիսեանն ալ ըսած է, որ իրենց նպատակը զանգուածային շարժում ստեղծելն է: Մամլոյ ասուլիսի ժամանակ հարց հնչած է այն մասին, թէ ինչպէս կը պատրաստուին համախմբել այն ժողովուրդը, որ ընտրակաշառքով ընտրեց ՀՀԿ-ին: Ասուլիսին մասնակիցները ըսած են, որ պէտք չէ մեղադրել ժողովուրդը, քանի որ անոր հասցուցած են այդ վիճակին: Արմէն Յովհաննիսեանը ըսած է, որ պէտք է ձեռք մեկնել քաղաքացիին, քանի որ ան տարբեր ժամանակներու ընթացքին պայքարած է:*

*Թամար Յովհաննիսեանն ալ նկատած է, որ ժողովուրդը տարբեր մեթոտներով պայքարած է եւ ենթարկուած բռնութեան, ինչի պատճառով դժուար պիտի ըլլայ անոր ոտքի հանելն ու յոյս ներարկելը:*

*Ասուլիսի մասնակիցները հաւաստիացուցած է, որ իրենք դիւանագիտութիւն պիտի չխաղան, ինչը մինչ օրս քաղաքական դաշտի մէջ յանգեցուցած է աղիտալի վիճակի:*

## ԼՈՒՐԵՐ

# «Կրին Քարտ»-ի Վիճակահանութեան Օրէնքներու Փոփոխութեան Ազդեցութիւնը Հայաստանի Վրայ

*Հայաստանեան «Փաստ» օրաթերթը անդրադառնալով ամերիկեան «Կրին քարտ»-ի վիճակահանութեան օրէնքներու սպասուող փոփոխութիւններուն կը գրէ որ, ԱՄՆ-ի նախագահ Տանըլտ Թրամփ որոշած է փոխել ամերիկեան «Կրին քարտ»ի խաղարկութեան քաղաքականութիւնը: Դեռ ամիսներ առաջ ան յայտարարած էր, որ մշտական բնակութեան, աշխատանքի իրաւունքի անկանոն այդ խաղարկութեան համակարգը հինցած է եւ մօտ ապագային պէտք է վերանայ: Ըստ ԱՄՆ նախագահին, խաղարկութեան փոխարինող նոր համակարգը ներգաղթելու հնարաւորութիւն կու տայ առաւել կրթուած եւ հմուտ անձնաւորութիւններու:*

*Նոյեմբերի սկիզբը յայտնի դարձաւ, որ Նիւ Եորքի մէջ ահաբեկչութիւն կատարածը ուզպէքստանցի 29-ամեայ Սաիֆուլլօ Սաիպովն է, որ «Կրին քարտ» շահած էր եւ այդ միջոցաւ յայտնուած էր ԱՄՆ: Ահաբեկչութենէն ետք գործող վիճակախաղի վերաբերեալ Թրամփ կրկին իր կոշտ գնահատականը տուած է:*

*Գաղտնիք չէ, որ «Կրին քարտ»ի խաղարկութիւնը ՀՀ քաղաքացիներուն համար եւս ԱՄՆ յայտնուելու ամենատարածուած ճանապարհներէն է:*

*Ժողովրդագէտ Արտակ Մարկոսեանի խօսքով, Արեւելեան Եւրոպայի երկիրներու ցանկին մէջ «Կրին քարտ»ի խաղարկութեան մասնակցութեան թուաքանակով Հայաստանը 4-րդ տեղը կը գրաւէ. «Միայն 2015 թուականին 2500 ՀՀ քաղաքացի «Կրին քարտ» է շահել ու մեկնել Հայաստանից: Իսկ ընդհանուր առմամբ վերջին տարիներին մօտ 55-ից 60 հազար մարդ է դիմել խաղարկութեանը: Խօսքը 2014, 2015, 2016 թթ. մասին է»:*

*Անոր խօսքով՝ ԱՄՆ-ն Անգլիոյ ճանապարհով կ'երթայ:*

*«Անգլիան դեռ 17 տարի առաջ փոխեց ներգաղթի քաղաքականութիւնը եւ յայտարարեց, որ իրենց պէտք չեն սեւագործ բանուորներ, որոնք կատարում են ցածրակարգ աշխատանք: Հիմա ԱՄՆ-ն է յայտարարում, որ իրեն բարձրակարգ մասնագէտներ են պէտք, ովքեր կը տիրապետեն անգլերէնին, կարող են օգուտ բերել տնտեսութեանը եւ ինտեգրուել ամերիկեան աշխատաշուկայում»,- «Փաստ»-ի հետ զրոյցի ժամանակ ըսած է ժողովրդագէտը:*

*Հարցին, թէ փոփոխութիւնը չի՞ նպաստեր արդեօք, որ Հայաստանէն պարզապէս «ուղեղներու արտահոսք» ըլլայ, Ա. Մարկոսեան պատասխանած է. ««Ուղեղների արտահոսք» միշտ էլ եղել է: Մի պահ կանգ էր առել, բայց այս պահին որոշակիօրէն կայ այդ արտահոսքը: Այդ պատճառով փաստը չեմ ուզում կապել նշուած խաղարկութեան հետ: Բարձրակարգ մասնագէտները ՀՀ-ից ոչ միայն ԱՄՆ, այլեւ ուրիշ երկրներ են հեռանում: Այդ փաստը աւելի շատ կը կապէի մեր ներքին քաղաքականութեան հետ: Օրինակ՝ Հարկային օրէնսգիրք է փոխւում, աշխատավարձ ստացողների դրոյքաչափերն են բարձրանում, սա եւս կարող է նպաստել: Խաղարկութիւնն, իհարկէ, փոփոխութիւն կը բերի Հայաստանից ԱՄՆ մեկնողների համար: Էլի կը մեկնեն, չեմ ասում չեն մեկնի, բայց արդէն կը մեկնեն որակեալ մասնագէտները»:*

# 2015-2017-ին ՀՀ Քաղաքացիութենէն Հրաժարելու 10,194 Դիմում Ստացուած է

*2015-2016 թուականներուն եւ 2017 թուականի վերջին 9 ամիսներուն ՀՀ քաղաքացիութեան դադարեցման համար ՀՀ ոստիկանութեան Անձնագրային եւ վիզաներու վարչութիւն դիմած է 10 հազար 194 քաղաքացի: Նոյն ժամանակահատուածին ՀՀ քաղաքացիութիւն ստանալու համար դիմած է 24 հազար 284 քաղաքացի: Այս մասին «Tert.am»-ի հետ զրոյցի ժամանակ ըսած է ՀՀ անձնագրային եւ վիզաներու վարչութեան պետ Մնացական Բիչախչեանը:*

*Հարցին, թէ թիւերը մտահոգիչ չե՞ն, քանի որ քաղաքացիութեան դադարեցման համար դիմումներու աճի միտում կայ, Մնացական Բիչախչեան պատասխանած է, որ աճի միտում կայ, բայց թիւերը մտահոգիչ չեն. «Քաղաքացիութիւն ստանալն ու դադարեցնելը «փրոկրէս» ապրող գործընթաց է: Բայց այն հանգամանքը, որ աննախադէպ աճ կայ, անհանգստացնող է իրավիճակը եւ այլն, ես որպէս մասնագէտ այդ կարծիքին չեմ, թուերը մտահոգիչ չեն: Բացի դրանից՝ հարցին պէտք է նայել նաեւ քաղաքացիութիւն ստանալու տեսանկիւնից: Օրինակ՝ 2015 թուականի ընթացքում ՀՀ քաղաքացիութիւն ստանալու համար Անձնագրային եւ վիզաների վարչութիւն է դիմել 10 հազար 189 քաղաքացի, 2487 քաղաքացի դիմել է ՀՀ քաղաքացիութիւնից հրաժարուելու համար: 2016 թուականի ընթացքում 7229 քաղաքացի դիմել է ՀՀ քաղաքացիութիւն ստանալու, իսկ 3863-ը՝ քաղաքացիութեան դադարեցման համար»:*

*Ինչ կը վերաբերի ընթացիկ տարուան, Բիչախչեան ըսած է, որ 2017 թուականի 9 ամիսներու ընթացքին ՀՀ քաղաքացիութենէն հրաժարելու դիմում ներկայացուցած է 3844 անձ, իսկ քաղաքացիութիւն ստանալու համար դիմում ներկայացուցած է 6866 մարդ:*

*Մնացական Բիչախչեանի խօսքով, ՀՀ քաղաքացիութենէն հրաժարելու հիմնական պատճառը որոշ այլ երկիրներու մէջ երկքաղաքացիութեան մասին օրէնքի բացակայութիւնն է. «ՀՀ քաղաքացիները դիմում են այլ երկրի քաղաքացիութիւն ստանալու համար, եւ այդ երկրից ուղղակի պահանջ է որպէսզի հրաժարուեն այն երկրի քաղաքացիութիւնից, որի քաղաքացին հանդիսանում են: Ոչ թէ նրանք հեռանում են ՀՀ-ից, այլ ուղղակի անձն այլ երկրի քաղաքացիութիւն ստանալու իրաւունք ունի եւ օգտւում է այդ իրաւունքից: ՀՀ քաղաքացիութիւնից հրաժարուելու 99 տոկոսը պայմանաւորուած է այլ երկրի քաղաքացիութիւն ստանալու հանգամանքով»:*

# Սերժ Սարգսեանը Հանդիպումը Հնդկաստանի Վարչապետ Նարենտրա Մոտիի Հետ



Սերժ Սարգսեան եւ Հնդկաստանի վարչապետ Նարենտրա Մոտի՝ Նիւ Տէլիիի մէջ կայացած հանդիպումի ընթացքին

*ՀՀ նախագահ Սերժ Սարգսեան Հնդկաստան կատարած աշխատանքային այցի ծիրէն ներս հանդիպում ունեցած է վարչապետ Նարենտրա Մոտիի հետ:*

*Հանդիպման սկիզբը վարչապետ Մոտին շնորհակալութիւն յայտնած է Հանրապետութեան Նախագահին այցի հրաւէրն ընդունելու եւ համաժողովին մասնակցելու համար, յոյս յայտնելով, որ Սարգսեանի այցը նոր խթան պիտի հաղորդէ հայ-հնդկական յարաբերութիւններուն եւ բարձրացնէ նոր մակարդակի: Վարչապետը նշած է, որ եւրասիական տարածքին մէջ Հայաստանը կը հանդիսանայ Հնդկաստանի վստահելի եւ կարեւոր գործընկերը: Անոր խօսքով, հայ վաճառականները առաջիններէն էին, որ եկան Հնդկաստան եւ խթանեցին առեւտրային կապերը Հնդկաստանի ու տարբեր երկրներու միջեւ:*

*Սարգսեանը շնորհակալութեամբ ընդունած է հրաւէրը եւ ուրախ է Հնդկաստանի նման հրաշալի երկրի մէջ գտնուելու համար եւ իր տպաւորութիւնները ներկայացուցած է առաւօտեան բացուած Հնդկաստանի պարէնի համաշխարհային համաժողովէն եւ ցուցահանդէսէն: Սարգսեան ընդգծած է, որ հիացած է աշխարհի ամենաարագ զարգացող տնտեսութիւններէն մէկը համարուող Հնդկաստանի յաջողութիւններով՝ յատկապէս ժողովրդավարութեան՝ իննդարդինաբերութեան բնագաւառին մէջ գրանցած առաջընթացով եւ ընդգծած, որ Հայաստանը խորապէս շահագրգռուած է Հնդկաստանի հետ խորացնելու յարաբերութիւնները բոլոր ոլորտներու մէջ՝ քաղաքական, տնտեսական, մարդասիրական:*

*Փոխգործակցութեան ընդլայնման հարցով Սերժ Սարգսեան եւ Նարենտրա Մոտին կարեւորած են Հայ-հնդկական միջկառավարական յանձնաժողովի գործունէութիւնը՝ անհրաժեշտ համարելով յանձնաժողովի նիստերը համալրել նոր, առաւել թիրախաւորուած օրակարգով:*

*Սարգսեան նշած է, որ Հայաստանը պատրաստ է նպաստաւոր պայմաններ ապահովել հնդկական ընկերութիւններու գործունէութեան համար: Սարգսեանը նաեւ հնդկական կողմի ուշադրութիւնը հրաւիրած է Իրանի հետ Հայաստանի սահմանին ստեղծուող Մեղրիի ազատ տնտեսական գօտիին վրայ, որ եւս կրնայ համագործակցութեան արդիւնաւէտ հարթակ դառնալ:*

*Զրուցակիցները անդրադարձած են Հարաւային Կովկասի տարածաշրջանի իրավիճակին եւ առկայ մարտահրաւէրներուն, այդ շարքին՝ ԼՂ հիմնախնդրի կարգաւորման բանակցային գործընթացին:*

# Ռուսաստան Հայաստանին Ռազմական Սարքերու Նոր Խմբաքանակ Պիտի Մատակարարէ

*Ռուսիա օրերս Հայաստան պիտի մատակարարէ զէնքի խմբաքանակ՝ գործող պայմանագրի ծիրէն ներս: Իսկ 100 միլիոն տոլարի նոր, արդէն ստորագրուած վարկային համաձայնագրի իրականացումը պիտի սկսի, երբ բոլոր միջպետական մակարդակներու վրայ հաստատուի: Այդ մասին «Ռիա Նովոսթի»-ին տուած հարցազրոյցի ժամանակ ըսած է Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Սերժ Սարգսեան:*

*«Մինչեւ այս տարուան վերջ մենք պիտի իրականացնենք դեռ նախորդ պայմանագիրը: Օրերս մենք կը սպասենք նոր մատակարարումներու, եւ մինչեւ տարուան վերջը մենք պիտի փակենք նախորդ պայմանագրի հետ կապուած բոլոր հարցերը»,- ըսած է Սերժ Սարգսեան:*

*«Մենք արդէն Երեւանի մէջ ստորագրած ենք նոր պայմանագիր, ան պէտք է անցնի բոլոր ռուսական եւ հայկական ատեանները, այնուհետեւ՝ վաւերացման ընթացակարգը, իսկ արդէն ատկէ ետք մենք պիտի սկսինք աշխատանքի ռուսական կողմէն համապատասխան արտադրողներու հետ այդ ծրագրի իրականացման համար: Ատիկա, ցաւօք, այդքան արագ չ'ըլլար»,- աւելցուցած է Հայաստանի Նախագահը:*

*2015-ի Յունիսին ստորագրուած է Ռուսիոյ կողմէ Հայաստանին 200 միլիոն տոլարի պետական վարկ տրամադրելու մասին համաձայնագիր՝ ռուսական արտադրութեան ռազմական արտադրանք ձեռք բերելու համար: Համաձայն նոր համաձայնագրի նախագիծին, որուն Հայաստանի կառավարութիւնը հաւանութիւն տուած է 2017-ի Հոկտեմբեր 12-ին, Ռուսիան հայկական կողմին պիտի տրամադրէ 100 միլիոն տոլարի պետական արտահանման վարկ՝ ռուսական արտադրութեան ռազմական նշանակութեան արտադրանքներու մատակարարումները ֆինանսաւորելու համար:*

## ՍԴՀԿ Թեկնածուն Յաղթական Անի Համայնքէն Ներս



Նոյեմբեր 5-ին, Հայաստանի մէջ կայացած Տեղական Ինքնակառավարման Մարմիններու (քաղաքներ եւ գիւղեր) ընտրութիւնները, որուն ՍԴՀԿ Հայաստանի շրջանի Վարիչ Մարմինն առաջադրած էր երկու թեկնածուներ: Անի համայնքէն ներս, որ կ'ընդգրկէ Մարալիկ քաղաքն ու յարակից 16 գիւղերը, ինչպէս նաեւ Կապան քաղաքն ու յարակից 12 գիւղերը:

Անի համայնքէն առաջադրուած ՍԴՀԿ անդամ Ագուն Սաղաթելեան 36 թեկնածուներուն մէջ գրաւած է 4-րդ՝ դառնալով Անիի քաղաքապետարանի անդամ:

## Թուրքիան Պաքուին Պիտի Չարտայանձնէ Ղարաբաղ Այցելած Թուրք Մտաւորականները

Ատրպէյճանցի քաղաքական գործիչներն ու լրագրողները անհանգստացած են, թէ ինչու Թուրքիան ատրպէյճանական դատարանի դատին չի յանձներ Արցախի Հանրապետութիւն այցելած 4 Թուրք մտաւորականները: Այս մասին գրած է Թուրքական «Aydinlik» թերթի կայքը:

Ատրպէյճանի «Ժամանակակից մարտավարական հետազօտութիւններու կեդրոնի» նախագահ Սեյմուր Սուլէյմանով իր գրաւոր մտահոգութիւնը յայտնած է Թրքական թերթին՝ նշելով Թուրք մտաւորականներու ղարաբաղեան այցէն ծագած ճգնաժամի մասին: Սուլէյմանով նշած է, որ Ատրպէյճանի մէջ մեծ հիասթափութիւն առաջացուցած է այն հանգամանքը, որ Թուրքիան չարտահանձներ 22 սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղ այցելած քաղաքական գործիչ Ուֆուք Ուրասը, գրող Սաիթ Չեթինօղլուն, լրագրողներ Ալի Բայրամօղլուն եւ Էրոլ Քաթըրճըօղլուն:

«Ատրպէյճանի այսօրուայ օրակարգին մէջ այն հարցն է, թէ ինչու Թուրքիան, որուն եղբայր կը համարենք, դեռ մինչեւ օրս չէ արտայանձնած իր 4 քաղաքացիները»,- գրած է Սուլէյմանով, յիշեցնելով, որ Ատրպէյճանի գլխաւոր դատախազութիւնը հետաքննութիւն սկսած է վերոնշեալ 4 Թուրք մտաւորականներու դէմ եւ Թուրքիայէն պահանջած է արտայանձնել այդ անձանց: «Աւաղ, Ատրպէյճանը այս հարցին մէջ շատ վիրաւորուած է: Ամենամտերիմ ընկեր ու եղբայր Թուրքիայէն անյապաղ արտայանձնում կ'ակնկալուէր: Բայց Անգարան, չես գիտեր ինչու, շատ սառն կը վերաբերի դէպքին հետ: Ատրպէյճանցի քաղաքական գործիչներուն կողմէն վերջին շրջանին ամէնէն յաճախ օգտագործուող արտայայտութիւնը «Թուրքիայէն նման բան չէինք սպասեր» արտայայտութիւնն է», գրած է ատրպէյճանցի գործիչը:

Սուլէյմանով յիշեցուցած է, որ Ատրպէյճանը կը սպասէ Թուրք գործիչներու արտայանձնումը եւ յոյս յայտնած է, որ երկու երկիրներու միջեւ այս խնդիրը շուտափոյթ հանգուցալուծում կը ստանայ:

## Թուրքիոյ Մէջ Պատմական Հայկական Տուները Վերածուած են Հիւրանոցներու

Թուրքիոյ Այնթապ քաղաքի պատմական հայկական տուները վերածուած են հիւրանոցներու: Թրքական «Հապերլէր» լրատուական կայքը, անդրադառնալով թեմային, կը գրէ, որ դարաւոր պատմութիւն ունեցող հայկական տուները, որոնք ձմրան տաք պահող, իսկ ամրան զովութիւն ապահովող քարերով կառուցուած են, այսօր քաղաք այցելող զբօսաշրջիկներու կողմէ մեծ հետաքրքրութեան կ'արժանանան:

Աղբիւրին համաձայն, տուները, որոնք այսօր վերածուած են հիւրատուներու, 200-300 տարուան պատմութիւն ունին: Հիւրատուներէն մէկու տնօրէն Զէյնել Օզքարամանը պատմած է, որ պատմական յուշարձաններ հանդիսացող այս տուները հայերէն մնացած են. տուներէն մէկուն վրայ նոյնիսկ հայերէն մակագրութիւն կայ: Օզքարամանը նշած է, որ հիւրատունը մեծ պահանջարկ կը վայելէ, եւ գրեթէ միշտ շաբաթավերջին ազատ սենեակ չ'ըլլար: Հիւրատուներուն մէջ երկտողանոց սենեակի գիշերակացը, նախաճաշը ներառեալ, արժէ 150-200 (մօտ 20000 դր.) լիրա:

## Նալպանտեան եւ Նեթանիահու

Շարունակուած էջ 1-էն

Վարչապետ Նեթանիահուն ու Նախարար Նալպանտեանը միտքեր փոխանակած են տարածաշրջանային եւ միջազգային հրատապ խնդիրներու, մերձաւորարեւելեան զարգացումներու շուրջ:

Էտուարտ Նալպանտեան ներկայացուցած է ղարաբաղեան հիմնախնդրի բացառապէս խաղաղ կարգաւորման ուղղութեամբ Հայաստանի եւ ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահ երկիրներու ջանքերը:

Նալպանտեան հանդիպում ունեցած է նաեւ խորհրդարանի՝ Քնեսեթի խօսնակ Եուլի Էդելշտեյնի հետ, որ ընդգծած է, որ Իսրայէլի օրէնսդիր մարմինը պատրաստ է աջակցութիւն ցուցաբերել Հայաստանի հետ յարաբերութիւններու համակողմանի զարգացման:

Նալպանտեան նաեւ հանդիպում ունեցած է Երուսաղէմի Հայոց պատրիարք Նուրհան արքեպիսկոպոս Մանուկեանի հետ:

## Պոլսոյ Պատրիարքի Ընտրութիւնները Տապալման Ուղղութեամբ Կ'երթան

Պոլսոյ պատրիարքի ընտրութիւնները մտած են փակուղի: Պոլսոյ նահանգապետ Վասիփ Շահինի հետ հանդիպումէն ետք Պոլսոյ Հայոց պատրիարքի ընտրութիւններու կազմակերպմամբ զբաղուող նախաձեռնող խումբի երեք անդամ հրաժարական տուած է: Նահանգապետը նշած է, որ չի ճանչնար Գարեգին արքեպիսկոպոս Պեքճեանին որպէս տեղապահ եւ առաջարկած է Արամ արքեպիսկոպոս Աթէշեանին եւ Սահակ եպիսկոպոս Մաշալեանին միասնաբար այս գործընթացը սկսիլ սկիզբէն: «Ակօս» շաբաթաթերթի հայկական բաժնի խմբագիր Բագրատ Էստուկեան, «Lragir.am»-ի հետ զրոյցի ժամանակ նշած է, որ դեռ վերջնականապէս Պոլսոյ պատրիարքի ընտրութիւնները չեն տապալուած, բայց գործընթացը այդ ուղղութեամբ կ'երթայ: «Հաւանաբար այս պայքարի մէջ տեղապահ Գարեգին Պեքճեան առանձին պէտք է մնայ եւ թերեւս կրնայ ետ քաշուիլ»,-ըսած է Բագրատ Էստուկեան:

Ի դէպ, Վասիփ Շահինի հետ հանդիպումը նախաձեռնող խումբի հետ, տեղի ունեցած է այն ժամանակ, երբ Գարեգին սրբազանը կը գտնուէր Գերմանիա: Երկուշաբթի օր ան վերադարձած է Պոլիս եւ փակ ժողով գումարած. «Ընդհանրապէս այդ ժողովները դռնփակ կ'ընթանան եւ երդում կու տան, որ բացատրութիւն պէտք չէ փոխանցել դէպի դուրս: Այնպէս որ մենք ալ յստակ չենք գիտեր ինչ քննարկած են, բայց յառաջիկայ օրերուն տեղապահի որոշումը կը յստականայ»,-ըսած է Բագրատ Էստուկեան:

Գարեգին արքեպիսկոպոս Պեքճեանը յայտարարած էր, որ ինք ալ կը պատրաստուի հանդիպիլ Պոլսոյ նահանգապետին հետ, սակայն մինչ այս պահը հնարաւոր հանդիպման հետ կապուած նորութիւններ չկան. «Պոլսոյ հայկական Սուրբ Փրկիչ հիւանդանոցի հոգաբարձուներու խորհուրդի նախագահ Պետրոս Շիրինօղլուն չրջանցեց Պեքճեանին եւ հանդիպում կազմակերպեց անոր բացակայութեան ժամանակ: Շիրինօղլուն է նահանգապետի հետ կապ հաստատողը: Եւ շատ մեծ սադրանք կատարուած է Շիրինօղլուի ձեռքով», - ըսած է Բագրատ Էստուկեան:

Անոր խօսքով, նահանգապետի հետ Պեքճեանի հանդիպումը չըսենք անհնար, բայց շատ դժուար է կազմակերպելը եւ դժբախտաբար, այդ հանդիպումն ալ որեւէ արդիւնք չի կրնար տալ:

Պեքճեանի հրաժարականէն ետք ամէն ինչ պէտք է սկսիլ զերոյական կէտէ, նորէն կրօնական ժողովը պէտք է տեղապահ ընտրէ եւ այս անգամ նահանգապետի առաջարկած երկու եպիսկոպոսներէն՝ Արամ արքեպիսկոպոս Աթէշեան եւ Սահակ եպիսկոպոս Մաշալեան, մէկը պէտք է ընտրուի: Շիրինօղլուն, անոր խօսքով, կարեւոր գործօն է բոլորի համար եւ ան այս ամիսներուն աշխատած է յօգուտ Արամ սրբազանի եւ միջամտած ընտրական գործընթացին եւ եթէ ան ուզէր, դեկտեմբերին հնարաւոր կ'ըլլար ընտրութիւններ իրականացնել. «Ան իշխանութիւններու մօտ խոչընդոտեց գործընթացը: Իսկ նպատակը այն էր, որ ժողովուրդի վրայ ճնշում բանեցնեն, որ հասկնան, թէ ուրիշ ճար չունին, պէտք է Աթէշեանը տեղապահ ընտրեն, որպէսզի պետութեան հետ համերաշխութիւն ունենան: Այս է իրենց գաղափարը: Եւ պետութեան այս կեցուածքը իրենց կողմէ թելադրուած է»:

Այնուամենայնիւ, քիչ հաւանական է, Արամ սրբազանը դառնայ պատրիարք, քանի որ, ըստ Բագրատ Էստուկեանի, համայնքէն ներս ան ընդհանրապէս աջակցութիւն չունի: Չի բացառուիր որ յառաջիկայ օրերուն Գարեգին Պեքճեան հրաժարի:

## Հայամէտ Թուրք Գործիչ Օսման Քաւալան Կալանաւորուած է

Թուրքիոյ մէջ «Անատոլու Կուլտուր» հասարակական կազմակերպութեան նախագահ, գործարար, հասարակական գործիչ Օսման Քաւալան 13 օր ձերբակալուած մնալէ ետք կալանաւորուած է: Ինչպէս կը հաղորդէ «Արմէնպրէս»-ը, այս մասին կը յայտնէ թրքական «Bianet.org»-ը:

Ոստիկանութիւնը չէր յայտնած Օսման Քաւալային ձերբակալելու պատճառը, նշելով, սակայն, որ այն կ'իրականացուի գաղտնի հետաքննութեան ծիրէն ներս:

Ներքին գործոց նախարարութեան մի քանի աղբիւրներ հաղորդած էին, որ Քաւալան պիտի հարցաքննուի 15 յուլիս 2016-ի յեղաշրջման փորձէն առաջ ունեցած իր շարք մը հանդիպումներու համար:

Օսման Քաւալան յայտնի է իր հայամէտ դիրքորոշումներով: Ան եղած է Հայաստան, յայտարարած է, որ կը ճանչնայ Հայոց ցեղասպանութիւնը:

## Ապրիլէն Ետք ով Պիտի Ըլլայ Վարչապետ

Շարունակուած էջ 1-էն

տեղ: Նման քննարկումներ մենք չենք ունեցել, այդ իսկ պատճառով որեւիցէ պայմանաւորուածութեան մասին խօսելը ուղղակի ապարդիւն է», - նշած է Կարապետեան:

2016 թուականի Դեկտեմբերին, վարչապետի պաշտօնին իր նշանակումէն մօտ երեք ամիս անց, Կարէն Կարապետեան յայտարարած էր, որ եթէ իր գլխաւորած կառավարութիւնը արդիւնաւէտ ըլլայ, ապա 2018-էն ետք ալ իրեն կը տեսնէ վարչապետի պաշտօնին:

Լրագրողներէն մին հարցուցած է, թէ արդեօք վարչապետը կը կիսէ կուսակիցներու պնդումները, թէ Սերժ Սարգսեան անփոխարինելի է որպէս երկրի անվտանգութեան թիւ մէկ երաշխաւոր եւ ՀՀԿ նախագահ: Կարապետեանի պատասխանը. - «Ինչ վերաբերում է Սերժ Սարգսեանի՝ որպէս Հայաստանի Հանրապետութեան Նախագահի վարկանիշներին եւ յատկանիշներին որպէս անվտանգութեան երաշխաւոր, որպէս մեծ փորձ ունեցող ղեկավար, ես այդ պնդումների հետ լիարժէք համաձայն եմ: Մնացած մասնաւոր կարծիքների վերաբերեալ հարցրէք իրանցից»:

www.massisweekly.com

# Երեսփոխան Սեպուհ Գալփաքեան- Իրավիճակը Մտահոգիչ է. Լիբանան Կորսնցուց Վերականգնելու Ոսկեայ Առիթ մը



Լիբանանի գործող վարչապետ Սաատ Հարիրի 4 նոյեմբեր 2017ին ներկայացուց իր հրաժարականը՝ երկրի մը մէջ, ուր քաղաքական անցուդարձերը կը համարուին Միջին Արեւելքի ընդհանուր «տխակնոս»ը համարուող կարեւոր եւ ուշադրութենէ չվրիպող իրադարձութիւններ:

Այս առիթով «Արեւելք» հարցազրոյց մը ունեցաւ Լիբանանի պետական երեսփոխան Տիար Սեպուհ Գալփաքեանին հետ:

Յիշեցնենք, որ Սեպուհ Գալփաքեանը Սոցեալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան (Ս.Դ.Հ.Կ.) Լիբանանի վարիչ մարմնի ատենապետն է ու նաեւ անդամ է Վարչապետ Հարիրիի գլխաւորած «Ալ-Մուսթաքպալ» երեսփոխանական պլոքին:

Ստորեւ կը ներկայացնենք Սեպուհ Գալփաքեանի մեկնաբանութիւնը.

«Ճիշդ է, որ Սաատ Հարիրիի հրաժարականը անակնկալ էր, սակայն եղածը տրամաբանական էր»,-«Արեւելք»ին յայտնեց Սեպուհ Գալփաքեան:

Անոր կարծիքով. «Մէկ տարի առաջ վարչապետի ջանքերով ստեղծուած համախոհութիւնը, որուն որպէս արդիւնք ունեցանք հանրապետութեան նախագահ՝ յանձինս Միշէլ Աունի, միւս կողմէ կ'ենթադրէր քաղաքական մեծ զիջումներ եւ ատկէ ետք էր, որ կազմուեցաւ կառավարութիւնը: Անցնող տաս ամիսներուն համապատասխան փոխ զիջումներ չեղան, այլ անընդհատ կը պահանջուէր, որ վարչապետ Սաատ Հարիրի եւ իր խումբը զիջումներու երթան»:

Գալփաքեան Լիբանանի քաղաքական իրավիճակին մասին խօսելով ակնարկեց. «Երկրի քաղաքական իրավիճակը դարձած էր անընդունելի: Ըստ Թաէֆի համաձայնութեան, երկրի իշխանութիւնը ամբողջութեամբ կը գտնուէր նախարարաց խորհուրդին եւ վարչապետին առաջնորդութեան ներքոյ եւ այդ հաւասակշռութիւնը սկսած էր խախտիլ»: Ան նաեւ ըսաւ. «Ձեւով մը կը շահագործուէր Սաատ Հարիրիի բարեացակամութիւնը, կը շահագործուէր նաեւ անոր զգուշութիւնը ու վախը Լիբանանի անդորրը եւ խաղաղութիւնը պահպանելու համար: Անընդհատ աւելի զիջումներ կը պահանջուէին վարչապետ Հարիրիէն»:

Գալփաքեան նաեւ դիտել տուաւ. «Ալ տեղ մը հասաւ, որ բաժակը յորդեցաւ եւ դժբախ-տաբար, երկիրը այս ձեւով մտաւ մութ փապուղի մը: Եւ այն պահուն, երբ քաղաքական ուժերը կլանուած էին նախապատրաստուելու յառա-ջիկայ Մայիսին տեղի ունենալիք խորհրդարանական ընտրութիւններուն, ահաւասիկ հարց մը եւս յառաջացաւ եւ երկիրը մատնեց դժուար կացութեան: Մեծ հարց է այժմ, թէ այս վիճակին մէջ ո՛վ պիտի ստանձնէ վարչապետի պաշտօնը ու որքա՞ն ժամանակ կրնայ թափուր մնալ այդ աթոռը եւ այս բոլորը որքանո՞վ պիտի ազդեն երկրի արդէն իսկ ծանր տնտեսական վիճակին վրայ: Այս բոլորին պատասխանը պէտք չէ Սաատ Հարիրի տայ, այլ՝ անոնք, որոնք ստիպեցին, որ Սաատ Հարիրի այս քայլին դիմէ՝ առանց մտածելու, թէ ո՞ւր կրնայ հասնիլ երկիրը, եթէ ան ձեռք քաշէ իր բոլոր համախոհական աշխատանքներէն»:

Երեսփոխան Գալփաքեան յայտնեց, թէ արձանագրուած է վտանգաւոր փաստ մը, որ մութ ձեռքեր ծրագրած էին Սաատ Հարիրիի մահափորձը եւ անոնց, որոնց ձայները առաջին քանի մը ժամուան ընթացքին բարձրացան ըսելով, թէ ինչու Սաատ Հարիրի Լիբանանէն չի ներկայացներ իր հրաժարականը եւ այլ տեղէ՝ անոնք նախ պէտք է հետաքրքրուէին, թէ ինչ կը նիւթուէր Սաատ Հարիրիի անձին դէմ:

Ըստ Գալփաքեանի, ցաւալի է, որ Լիբանան կրկին կը կորսնցնէ ոսկեայ առիթ մը՝ վերականգնելու, վերակազմակերպուելու եւ դէպի պետականութիւն հաստատ քայլերով յառաջանալու հնարաւորութիւնը:

Ան մտահոգիչ համարեց դրութիւնը եւ ըսաւ. «Մտահոգուելու տեղիք կու տայ նաեւ այն փաստը, որ քաղաքական կողմերը չկրցան գնահատել, չկրցան արժեւորել Սաատ Հարիրիի ինքնամոռաց եւ թէկուզ քաղաքական առումով իր անձին վնաս հասցնելու գնով ցուցաբերած զիջումները, որ իրապէս ամէն ջանք ի գործ դրաւ, որպէսզի երկիրը հասցնէ լաւ մակարդակի»:

Գալփաքեան շեշտեց, որ այդ ուժերը կրկին անգամ պէտք է մտածեն, թէ որքանո՞վ շահագործեցին Սաատ Հարիրիի վստահութիւնը, բարեացակամութիւնը եւ անոր կատարած զիջումները:

«Ճիշդ է՝ երկրի տնտեսական վիճակը վատ է, սակայն ես առայժմ չեմ տեսներ այդ վտանգը եւ ես չեմ կարծեր, որ լիբանանեան թղթոսկին անկում կ՛ապրի եւ տնտեսական վիճակը կը դառնայ տագնապալի, որովհետեւ Լիբանան ասկէ շատ աւելի ծանր օրեր անցուցած է, սակայն վստահ եմ, որ Կեդրոնական դրամատունը, կանխարգելիչ այդ նախաքայլերը արդէն նկատի առած է եւ յստակ է, որ Լիբանանի վիճակով մտահոգ շրջանային եւ միջազգային կողմեր հետամուտ են, որ երկրի ապահովութիւնը չխախտուի ու երկիրը չներգրաւուի շրջանային արկածախնդրութ-իւններու մէջ»,- եզրակացուց երեսփոխան Սեպուհ Գալփաքեան:

# Արաբական Աշխարհ

## Խառնակ Վիճակ Սէուտական Արաբիոյ Մէջ 4 Նախարարներ Ձերբակալուած

Շաբաթավերջին Սէուտական Արաբիոյ մէջ ստեղծուած խառնակ վիճակը խոր ցնցում յառաջացուց արաբական աշխարհին մէջ: Անակնկալօրէն ձերբակալուեցան 11 արքայազուններ եւ չորս նախարարներ ու պաշտօնական անձնաւորութիւններ: Անոնք կը մեղադրուին դրամաշորթութեամբ եւ վարչական այլ յանցագործութիւններով:

Լարուած կացութիւն մը կը տիրէ նաեւ Եմէնի եւ Սէուտական Արաբիոյ միջեւ: Հրթիռներ ինկած են մայրաքաղաք Ռիատի վրայ: Փոխադարձաբար հրթիռակոծուած է նաեւ Եմէնի մայրաքաղաք Սաննայի մարզադաշտն ու պաշտպանութեան նախարարութեան շէնքը: Այս հարցով բուռն կերպով կ'ամբաստանուի Իրանի միջամտութիւնը:

Իրերու այս կացութեան ընթացքին Սէուտական ուղղաթիռ մը արկած ունենալով զոհ գացած են իշխան Մանսուր Պին Մուքրին եւ իր ինը հետեւորդները, որոնք բարձրաստիճան ղեկավարներ էին: Կ'ըսուի թէ իշխան Մանսուրը փոխադրող ուղղաթիռը զարնուած է լերան մը եւ ապա ինկած: Ուրիշ վարկած մըն ալ կ'ըսէ թէ ուղղաթիռը կրնայ ինկած ըլլալ Եմէնէն արձակուած հրթիռի մը հետեւանքով:

## Լիբանանի Վարչապետ Սաատ Հարիրի Անակնկալ Հրաժարականը

Անցնող շաբթուան արաբական աշխարհի գլխաւոր իրադրութիւններէն մին հանդիսացաւ նաեւ Լիբանանի վարչապետ Սաատ էլ Հարիրիի անակնկալ հրաժարականը: Ըստ իրեն ինք այս քայլն առած է քանի որ սպառնալիքներ ստացած է իր կեանքին դէմ եւ կ'ուզէ առաջքն առնել հաւանական մահափորձի մը: Սակայն այս կապակցութեամբ կը տրուին նաեւ քաղաքական տարբեր մեկնաբանութիւններ, որոնք աղերս ունին Հըզպալլա կուսակցութեան հետ:

Իր հրաժարականէն ետք Սաատ Հարիրի Սէուտական Արաբիա մեկնեցաւ կարեւոր խորհրդակցութեան համար: Խորհրդարանի նախագահ եւ կառավարութեան խօսնակ Նապիհ Պըրրի, Եգիպտոսէն վերադառնալէ ետք, իսկոյն տեսակցեցաւ Հանրապետութեան Նախագահ Միշէլ Աունի հետ: Վարչապետ Հարիրիի հրաժարականին անդրադառնալով յայտնեց թէ տակաւին կանուխ է Նախարարաց Խորհուրդը լուծարքի ենթարկելու մասին:

The Daily Star թերթին համաձայն Հարիրին Ռիատի մէջ Սէուտական Արաբիոյ վեհապետ Սալման Թագաւորին հետ հանդիպելէ ետք Պէյրութ պիտի վերադառնայ:

## Սուրիական Երկխօսութեան Համագումար

Սուրիոյ հարցով ՄԱԿի միջազգային պատուիրակ Սթեֆան Տը Մանթուրա յայտնած է թէ ներկայիս կապեր կը հաստատէ իրականացնելու համար երկխօսութեան համագումար մը: Շատ հաւանաբար վերոյիշեալ համագումարը տեղի ունենայ Ռուսիոյ Սոչի քաղաքին մէջ, Նոյեմբեր 18ին:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան համաձայն սոյն երկխօսութեան հրաւիրուած են 33 կուսակցութիւններեւ կազմակերպութիւններ:



# ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ՝ Ի ՊԱՏՈՒԻ



ԳԷՈՐԳ ՔԷՕՇԿԷՐԵԱՆ

*Չորեքշաբթի, 1 Նոյեմբեր, 2017-ը պատմական օր մը հանդիսացաւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Գեղարուեստական Ղեկավար Գրիգոր Սաթամեանի համար: Այդ օր՝ ան արժանացաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմէ շնորհուած Սբ. Սահակ, Սբ. Մեսրոպ շքանշանին:*

*Արդարեւ, պատմական այդ օրուայ արարողութիւնը եզակի էր նաեւ իր տեսակին մէջ՝ այն իմաստով որ Հայոց Հայրապետը ինքն էր որ իր ձեռամբ զետեղեց այդ շքանշանը, Սաթամեանի կուրծքին վրայ: Մայր Աթոռ Սբ. Էջմիածնէն դուրս, ընդհանրապէս Թեմակալ Առաջնորդներն են որ այդ շքանշանը կը փոխանցեն ստացողներուն:*

*Արհեստավարժ դերասան-բեմադրիչ Գրիգոր Սաթամեան աւելի քան կէս դար ծառայած է հայ մշակոյթին, Պէյրութէն սկսեալ մինչեւ Նիւ Եորք եւ ապա Լոս Անճելըս: Ան հիմնած է ՀԲԸ Միութեան պատկանող զանազան թատերախումբեր՝ «Արտաշատ» Նիւ Եորքի մէջ, «Յակոբ Պարոնեան» Պոստոնի մէջ, «Ուիլիամ Սարոյեան» Ֆիլատելֆիոյ եւ Պուէնոս Այրէսի մէջ, «Երուանդ Օտեան» Տիթրոյթի մէջ եւ վերջապէս «Արտաւազդ» Լոս Անճելըսի մէջ:*

*Գրիգոր Սաթամեան թատերական իր ուսումը ստացած է Անգլիոյ* "London School of Film Technique" *եւ* "Old Vic" *դպրոցներուն մէջ: Արհեստավարժ իր ուսումը աւարտելէ ետք 1968 թուականին, ան կ՛ստանձնէ Պէյրութի ՀԲԸ Միութեան Վահրամ Փափազեան Թատերախումբի բեմադրիչի պատասխանատու պաշտօնը: Միացեալ Նահանգներ գաղթելէ ետք, բեմադրիչի իր պաշտօնը կը շարունակուի ՀԲԸ Միութեան Նիւ Եորքի եւ ապա Լոս անճելըսի թատերախումբերուն հետ:*

*Սաթամեան ինքն է որ «Մենակատակախօսութիւն»ը* (Stand-up Comedy) *առաջին անգամ ըլլալով ներմուծած է Հայկական գեղարուեստական կեանքէն ներս, Նիւ Ճըրզիի մէջ՝ 1986 թուականին: Ան ցարդ՝ զանազան թատերախումբերու հետ բեմադրած է 75 թատրերգութիւններ, գլխաւոր դեր վերցուցած է 84 ներկայացումներու մէջ եւ Հայերէնի թարգմանած է 20 թատրերգութիւններ՝ Ֆրանսերէնէ եւ Անգլերէնէ:*

*Չորեքշաբթի իրիկուան շքանշանի տուուչութեան հանդիսաւոր եւ հոգեպարար արարողութիւնը տեղի ունեցաւ Առաջնորդարանի Արմէն Համբար հիւրասենեակին մէջ: Այս առթիւ հոն հաւաքուած էին՝ Գրիգորի, կնոջ՝Մատլէնի եւ զաւկին՝ Լեւոնի կողքին, ՀԲԸ Միութեան Կեդրոնական Վարչութեան Փոխ Նախագահ Սինան Սինանեանը, Գրիգորի հարազատները, ՀԲԸ Միութեան վարչութեանց անդամները, գրասենեակի անձնակազմն ու Սաթամեան թատերախումբի դերակատարները:*

*Տէրունական աղօթքով սկսաւ արարողութիւնը, որմէ ետք երգուեցաւ Հրաշափառն ու Առաջնորդական Փոխանորդ Հոգեշնորհ Տէր Բագրատ Ծայրագոյն Վարդապետ Պէրճէքեան ընթերցեց Վեհափառ Հայրապետի սրբատար կոնդակը: Հուսկ ապա՝ խորհրդաւոր այդ պահուն, Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսը Սբ. Սահակ, Սբ. Մեսրոպ շքանշանը զետեղեց Գրիգոր Սաթամեանի կուրծքին վրայ:*

*Յուզիչ, սակայն ուրախառիթ էր պահը երբ Գրիգոր ի սրտէ շնորհակալութիւն յայտնեց Վեհափառ Հայրապետին, Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տէր Յովնան Արք. Տէրտէրեանին, Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տէր Խաժակ Արք. Պարսամեանին, Տիար Սինան Սինանեանին, հարազատներուն, ինչպէս նաեւ միութենական իր գործակիցներուն եւ բոլոր անոնց որոնք ներկայ գտնուած էին այս հանդիսութեան:*

*Առաջնորդ Սրբազան Հայրը դիտել տուաւ որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Լոս Անճելըս կը գտնուէր՝ իր հովուապետական այցելութեամբ, նախագահելու Արեւմտեան Թեմի հաստատման 90-ամեակին առթիւ կազմակերպուած տօնակատարութեանց եւ թէ շքանշանի տուուչութեան այս արարողութիւնը կը մտնէր պաշտօնական այդ հանդիսութեանց ծիրէն ներս:*

*Հուսկ ապա Վեհափառ Հայրապետը խօսք առնելով, դրուատեց Գրիգոր Սաթամեանի բնածին տաղանդը եւ մանաւանդ անոր նախանձախնդրութիւնը՝ մշակոյթի միջոցաւ ծառայելու հայ ազգին, եւ յատկապէս մեր նոր սերունդին, որոնք այլապէս սահմանուած են ուծանալու օտար այս ափերուն վրայ:*

*Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց Սաթամեանի երկարամեայ նուիրումը թատերական շարժումին, որուն գերագոյն նպատակն է հայապահպանումը՝ հայ լեզուն սիրցնելով նոր սերունդին եւ գործածել տալով զայն բեմին վրայ եւ բնականաբար բեմէն անդին, առօրեայ իրենց կեանքերուն մէջ: Ան ապա երկար եւ առողջ կեանք մաղթեց Սաթամեանին, որ ան շարունակէ իր Աստուածահաճոյ առաքելութիւնը՝ ի սպաս հայ մշակոյթի բարգաւաճման:*

# Դոկտ. Փոլ Հայտոսեանի Ուշագրաւ Ներկայացումը Մերձաւոր Արեւելքի Մասին



Դոկտ. Կարպիս Տէր-Եղիաեան Դոկտ. Հայտոսեանին կը յանձնցնէ «Մաշտոց Գոլէճի» պատուոյ դոկտորայի տիտղոսը

*Փասատինայի Համալսարանական Ակումբի դասախօսական դահլիճէն ներս ելոյթ ունեցաւ Պէյրութի Հայկազեան Համալսարանի նախագահ Դոկտ., Փոլ Հայտոսեան, խօսելով Մերձաւոր Արեւելքի մէջ խաղաղութեան հաստատման կարելիութիւններու մասին: Միջոցառումը կազմակերպուած էր «Ռոթարի Միջազգային Ակումբի» Կարպիս Տէր-Եղիաեան Խաղաղութեան Ինստիտուտին կողմէ:*

*Իր ներածական խօսքին մէջ Մաշտոց Գոլէճի նախագահ Դոկտ. Տէր-Եղիաեան բարձր գնահատեց Դոկտ.. Հայտոսեանի բազմաթիւ ձեռքբերումներ՝ որպէս սփիւռքի միակ հայկական համալսարանի նախագահ, եկեղեցւոյ եւ համայնքի առաջնորդ, յայտնի գիտնական, հեղինակաւոր գրող, բանախօս եւ բոլոր եղանակներու մարդ:*

*Մերձաւոր Արեւելքի մէջ Հայ Աւետարանական Եկեղեցիներու կենտրոնական վարչութեան նախագահ եւ Լիբանանի Հայկազեան համալսարանի նախագահ Հայտոսեան ներկայացուց Մերձաւոր Արեւելքէն ներս խաղաղութեան հեռանկարները: Հետաքրքիր, տեղեկատուական եւ լուսաւոր դասախօսութեան միջոցաւ ան գրաւեց հանդիսատեսի ուշադրութիւնը:*

*Դոկտ.. Հայտոսեան անդրադարձաւ խաղաղութեան սահմանումին, խաղաղութեան եւ արդարութեան միջեւ կապի, խաղաղութիւնը որպէս յանձնառութիւն, ձախողուած խաղաղութիւն, խաղաղութիւն որպէս գերիշխանութիւն, պարտադիր խաղաղութիւն, խաղաղութեան օրինակներ, համաշխարհային խաղաղութիւն, խաղաղութեան հնարաւորութիւններու եւ կրթութեան դերի եւ խաղաղութեան միջեւ անմիջական կապի մասին:*

*Ելոյթի աւարտին ուշադիր հետեւող հայ եւ օտար լսարանը բազմաթիւ հարցումներ ուղղեց դասախօսին, ստանալով իրատես պատասխաններ:*

*Միջոցառման աւարտին Դոկտ. Տէր-Եղիաեան հիւր դասախօսին նուիրեց իր վերջերս տպագրուած լուսանկարներու ալպոմի առաջին պատճէնը՝ Արեւմտեան Հայաստանէն եւ Կիլիկիայէն:*

*Աւարտին, Դոկտ. Հայտոսեանին յանձնուեցաւ «Մաշտոց Գոլէճի» պատուոյ դոկտորայի տիտղոսը:*



## ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՈՒԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՅՑԸ ՄԵՔՍԻՔՕ



*Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսի գլխաւորած պատուիրակութիւնը Հոկտեմբեր 30-ին հովուապետական այցով ժամանած է Մեքսիքայի մայրաքաղաք Մեքսիքօ:*

*Օդակայանին մէջ Նորին Սրբութեանը դիմաւորեցին Մեքսիքայի մէջ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Արա Այվազեան, Մեքսիքայի Մարոնիտ Եկեղեցւոյ արքեպիսկոպոս Ճորճ Ապի Եունես, Մեքսիքայի հայ համայնքի հոգեւոր հովիւ Տ. Սասուն ծայրագոյն վարդապետ Զմրուխտեան, հայ համայնքի անդամներ: Այս մասին կը տեղեկացնէ Մայր Աթոռի տեղեկատուական համակարգը:*

*Օդակայանէն Նորին Սրբութիւնը ուղեւորուեցաւ ՀՀ դեսպանատուն, հանդիպում ունեցաւ դեսպանատան աշխատակիցներուն հետ: Այնուհետեւ Հայոց Հայրապետը այցելեց Կուատալուփէի եկեղեցի, ուր տեղի հոգեւորականներուն հետ աղօթք բարձրացուեցաւ առ Աստուած: Ան հանդիպեցաւ նաեւ Մեքսիքոյի քաղաքապետ Միկել Անխել Մանսեռային:*

*Այնուհետեւ Մեքսիքոյի կաթոլիկ Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ միջեկեղեցական աղօթք, որուն ներկայ էին Մեքսիքայի քարտինալ Նորպերթօ Ռիվերա Կառեռան, պապական նուիրակը, քոյր Եկեղեցիներու եւ պետական իշխանութիւններու ներկայացուցիչներ, բազմաթիւ հաւատացեալներ: Արարողութեան ընթացքին քառաձայն գեղեցիկ երգեցողութեամբ հանդէս եկաւ ԱՄՆ Հայոց Արեւմտեան Թեմի Սրբոց Ղեւոնդեանց եկեղեցւոյ երգչախումբը: Նորին Սրբութիւնը հանդէս եկաւ պատգամով՝ Հայրապետական իր օրհնութիւնն ու ողջոյնը բերելով ներկաներուն եւ ցաւ յայտնեց վերջերս Մեքսիքոյին պատուհասած երկրաշարժի կապակցութեամբ: Հայոց Հայրապետը քաջալերութիւն ու մխիթարութիւն մաղթեց Մեքսիքայի ժողովուրդին եւ աղօթեց զոհուածներու հոգիներու հանգստութեան համար:*

*Արարողութենէն ետք կաթողիկոսը այցելեց Մեքսիքոյի «Յիշողութեան եւ հանդուրժողականութեան Թանգարան», ուր ներկայացուած են 20-րդ դարու ցեղասպանութիւններու, որոնց մէջ նաեւ Հայոց Ցեղասպանութեան մասին պատմող ցուցանմուշներ: Թանգարանի հանդիսութիւններու սրահին մէջ ընդունելութիւն կազմակերպուած էր Մեքսիքոյի հայ համայնքին կողմէ:*

*Հանդիպման ներկայ էին նաեւ ՀՀ դեսպան Արա Այվազեան, քաղաքային իշխանութիւններու եւ քոյր Եկեղեցիներու ներկայացուցիչներ: Բարիգալստեան խօսք ըսաւ ՀՀ դեսպանը: Համայնքի անդամները հանդէս եկան ողջոյնի խօսքերով՝ իրենց խանդավառութիւնն ու ուրախութիւնը յայտնելով Վեհափառ Հայրապետի այցելութեան առիթով: Նորին Սրբութիւնը ողջունեց այս հանդիպման քոյր եկեղեցիներու ներկայացուցիչներու, պետական այրերու ներկայութիւնը, իր օրհնութիւնը բերաւ հայ համայնքին՝ արտայայտելով իր ուրախութիւնն ու ջերմ տպաւորութիւնները այցելութեան առիթով: Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց մեքսիքահայութեան հաստատուն մնալ իրենց եկեղեցանուիրման ու ազգանուիրման առաքելութեան մէջ:*

## ՀԱԼԷՊԻ ՄԷՋ ՄԵԾ ՇՈՒՔՈՎ ՆՇՈՒԱԾ Է ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 60 ԱՄԵԱԿԸ




*Շաբաթ 28 Հոկտեմբերին, Հալէպի մէջ հանդիսաւոր կերպով նշուած է Ն.Ս.Մ.Մ. հիմնադրութեան 60 ամեակը: Այս առթիւ կազմակերպուած ճաշկերոյթ-պարահանդէսը տեղի ունեցած է Հալէպի նշանաւոր «Ուաննէս» ճաշարանէն ներս:*

*Բացման խօսքը կատարած է Տիկ. Մարալ Խանզադեան, որ իր խօսքին մէջ անդրադարձած է Նոր Սերունդ Մշակութային Միութեան առաքելութեան, եւ կարեւորելով 60-ամեայ այս միութեան կատարած աշխատանքները, ան նաեւ յոյս յայտնած է, որ միութիւնը անտեսելով Հալէպի դժուարին պայմանները՝ պիտի շարունակէ իր առաքելութիւնն ու գործունէութիւնը:*

*Երեկոն անցած է բաւական ճոխ մթնոլորտի մէջ, ուր հանդէս եկած է նաեւ հալէպահայ յայտնի երգիչ Յակոբ Այնթէպլեան, որ իր ազգային եւ ժողովրդական երգերով խանդավառ մթնոլորտ մը ստեղծած է ներկաներուն համար:*

*Միջոցառման ընթացքին խօսք առած է հալէպահայ բեմադրիչ Գրիգոր Քէլէշեան, որ նաեւ նշած է, որ Ն.Ս.Մ.Մ.-ը հալէպահայ մշակութային կեանքին մէջ կարեւոր դեր ունեցած միութիւն է, նշելով, որ Նոր Սերունդի ճիգերով Հալէպի մէջ հիմնուած է հայկական առաջին թատերախումբը, որուն հետ ինք տարբեր առիթներով համագործակցած է: Քէլէշեան նաեւ յոյս յայտնած է որ միութիւնը կը շարունակէ իր հայանուէր գործունէութիւնը, կամուրջ հանդիսանալով Սուրիոյ հանրութեան եւ հայութեան միջեւ:*

*Աւարտին հանդէս եկած է Ն.Ս.Մ.Մ. Հալէպի ատենապետ Տիար Շահէ Մինասեան: Ան իր խօսքով կարեւորած է մշակութային գործունէութեան շարունականութիւնը, յաւելելով, որ յետայսու միութիւնը նոր եռանդով եւ նոր թափով պիտի շարունակէ իր աշխատանքները:*

*Մինասեան նաեւ ըսած է, Ն.Ս.Մ.Մ.-ը մեծ յարգանք կը վայելէ Սուրիոյ մշակութային շրջանակներուն մէջ եւ միութեան անունը ոսկի տառերով գրուած է Սուրիահայ համայնքի զարգացման գործին մէջ:*

*Հանդիսութեան աւարտին տեղի ունեցած է կարկանդակի հատում եւ բոլոր ներկաները շնորհաւորած են միութեան վարչական կազմը եւ պատասխանատուները, այս գեղեցիկ առիթին համար:*

*Նշենք, որ 60-ամեայ մշակութային միութիւնը յառաջիկային եւս հանդէս պիտի գայ յաւելեալ միջոցառումներով:*

*«Արեւելք»*

### Որմազդի (Poster) մրցում

Հայախօսութիւնը խրախուսելու նպատակով, ԱՄՆ Արեւմտեան Թեմի Ազգային Առաջնորդարանի Հայերէնի Վերաշխուժացման Մարմինը (ՀՎՄ), ընդարձակ քննարկումներէ եւ ուսումնասիրութիւններէ ետք, կազմած է մասնագիտական համապարփակ ծրագիր մը, որ ունի կարճ եւ երկար ժամկէտերով թիրախներ:

Ծրագիրներուն շարքին, Մարմինը որոշած է կազմակերպել որմազդի (poster) մրցում մը, նպատակ ունենալով նոր սերունդը քաջալերել հայերէն խօսելու:

Մրցումին կրնան մասնակցիլ երկրորդական վարժարանի աշակերտներ եւ համալսարանի ուսանողներ:

Նախագիծերու յանձնումի ժամկէտ է ճշդուած **26** Նոյեմբեր **2017**-ը:

Ստացուած որմազդերը կը քննարկուին յատուկ յանձնախումբի մը կողմէ:

Առաջին եւ երկրորդ հանդիսացողները կը ստանան պատշաճ պարգեւներ:

Մրցումին պայմաններուն եւ մանրամասնութիւններուն ծանօթանալու համար կարելի է դիմել http://ArmenianLanguageVitality.org/Poster կայքէջին:

*Հայերէնի Վերաշխուժացման Մարմին*

**Մասիս**
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**«Մասիս» Շաբաթաթերթի Օժանդակ Մարմինի Կազմակերպութեամբ՝**

# Նախաճաշ

**Պիտի Հրամցուի «Ֆուլ» եւ «Մամունիա»**

**Տեղի կ՛ունենայ Կիրակի, Նոյեմբեր 12, 2017, Առաւօտեան Ժամը 10-էն Սկսեալ ՀԿԲՄ-ի Կեդրոնի Սրահէն Ներս**

**Հասցէ՝**
**1060 N. Allen Ave. Pasadena CA. 91104**
**Մուտքի Նուէր 20 Տոլար**

# Massis Weekly

Volume 37, No. 42 Saturday, November 11, 2017


## Netanyahu Pledges to Improve Israel's Uneasy Relationship with Armenia



JERUSALEM (RFE/RL) — Israeli Prime Minister Benjamin Netanyahu pledged to improve Israel's uneasy relationship with Armenia after holding talks with Armenian Foreign Minister Edward Nalbandian in Jerusalem on Tuesday.

The two men were reported to have discussed not only Armenian-Israeli ties but also the situation in the Middle East and the Nagorno-Karabakh conflict zone, with Netanyahu expressing concern over Iran's "attempts to establish a military presence in the region."

"We'll strengthen relations between Israel and Armenia in tech, cyberspace and agriculture," the Israeli leader, who is also his country's foreign minister, tweeted after the talks.

The Armenian Foreign Ministry likewise said Netanyahu told Nalbandian that Israel is ready to "expand" its relations with Armenia and sees "great potential for cooperation" between the two nations.

According to a ministry statement, Nalbandian expressed confidence, for his part, that bilateral contacts will gain "new impetus." They have already intensified of late, he said during what was apparently his first-ever official visit to Israel.

The statement added that the two men explored ways of boosting modest bilateral trade and cooperating in the areas of agriculture, information technology, education and tourism.

Israel's Minister of Regional Cooperation Tzachi Hanegbi similarly sought to "strengthen our relationship" when he visited Yerevan in late July. Hanegbi and Nalbandian signed agreements on avoidance of double taxation and mutual lifting of visa re-

Continued on page 2

## Students Protest Against New Law On Military Service

YEREVAN -- At least a hundred university students in Yerevan boycotted classes on Tuesday in protest against the Armenian government's plans to largely abolish temporary exemptions from military service enjoyed by most of them.

The protesters rallied outside the main building of Yerevan State University (YSU), demanding a meeting with Education Minister Levon Mkrtchian. They marched to other YSU buildings after Mkrtchian and other Education Ministry officials declined to meet with their representatives.

Male students of state-run Armenian university eligible for government scholarships have until now been allowed to perform compulsory military service after completing their undergraduate, graduate or post-graduate studies.

Under a government bill passed by the Armenian parliament in the first reading late last month, draft deferments would be granted only to those students who would agree to undergo parallel military training and serve in the army as officers for three years after graduation. The Armenian Defense Ministry, which drafted the bill, says that that this would close a key loophole for evading military service and reduce "corruption risks" among military and university officials.

Government officials also argue that more than 80 percent of 18-year-old Armenian men enrolled in state universities are already drafted to the armed forces because they pay tuition fees. Letting the other students continue their studies uninterrupted is unfair, they say.

Critics say the measure would prevent many students from becoming scientists or scholars. They say it would also not stop the sons of many senior government officials, pro-government politicians and wealthy businesspeople from dodging military service.

The protesters, among them female students, tried to enter some YSU departments in a bid to get more students to join their campaign. They found the entrance doors of most of those departments locked from inside, however. Students attending classes there were thus unable to leave the buildings.

## Alexander Lapshin Exposes Baku's Secret Plan to Exchange Him with Azerbaijani Captives



YEREVAN — The authorities of Azerbaijan tried to reach an agreement with Russia in February, 2017, offering them to exchange the citizen of that country, blogger Alexander Lapshin with Azerbaijani saboteurs Shahbaz Guliyev and Dilgam Asgarov imprisoned in Artsakh, according to the blogger's website exposing the attempt of the secret deal.

"I will briefly remind that according to the Azerbaijani mass media the mentioned 2 persons were just tourists who had decided to visit the graves of their relatives in Karabakh, which is under the control of Armenians. They crossed the contact line in Aghdam region and started their journey to the graves of their relatives by killing an Armenian child".

"In Stepanakert they told during a trial that the child had seen them and they had to kill him not to be caught. Afterwards, they ran across a forest, hid, and then appeared near a village, killed there two people who tried to catch them. The third "tourist" was killed in a shooting with Armenians". Lapshin wrote in his blog.

"In brief, they were peaceful "tourists", who had arrived from Azerbaijan armed with Kalashnikovs", Lapshin reminded, noting that the Court of Artsakh has convicted them to life imprisonment.

The blogger told that after arresting him Azerbaijan tried to provoke Russia, saying that if Russia helped them in the negotiations for the return of those two "tourist-diversionists", it would accelerate the process of his own release. "In the words of a very high ranking official of the Russian Foreign Ministry, that situation was very embarrassing for Sergey Lavrov and Azerbaija proposal was rejected. The Russian side could in no way understand what could link the citizen of Russia and Israel, Lapshin, with

Continued on page 4

## President Sarkisian: Russia Will Supply New Batch of Weaponry to Armenia



YEREVAN (Panorama.am) -- Russia is set to supply a new batch of weaponry to Armenia in the near future as part of an agreement signed between the two states, President Serzh Sarkisian said Wednesday, adding the implementation of a new loan agreement worth $100 million will begin after its approval on all the intergovernmental levels.

"By the end of this year we will realize the previous contract. We are expecting new supplies in the coming days, and until the end of the year we will finalize all issues regarding the previous contract," Sarkisian said in an interview with RIA Novosti.

Back in June 2015, a $200 million agreement was signed between Armenia and Russia to finance supplies of Russian-made military products to Armenia.

"We have already signed a new contract in Yerevan, It needs to be considered by all the relevant agencies in Russia and Armenia and later undergo a ratification procedure. Afterwards we will embark on the implementation of the project in cooperation with Russian manufacturers. However, it will not be a rapid process," the president said.

Under the new draft agreement approved by the Armenian Government on 12 October, Russia will provide a state credit to Armenia to finance the supplies of Russian military products.

According to the agreement, the loan will be issued with a maturity date of 15 years, with an annual interest rate of 3%. Armenia can use the loan in the period from 2018 to 2022.

# Another Parliament Attack Convict Dies in Armenian Jail



YEREVAN (RFE/RL) -- A fourth person jailed in connection with a deadly 1999 attack on the Armenian parliament, which plunged the country into a serious political crisis, has died in prison.

The Armenian Justice Ministry said on Friday that, Eduard Grigorian, who was serving a life sentence in Yerevan's Nubarashen prison, complained of chest pains before being rushed to a nearby hospital and pronounced dead there early in the morning.

Gor Ghlechian, the spokesman for a ministry division managing Armenia's prisons, told RFE/RL's Armenian service (Azatutyun.am) that relevant authorities will conduct forensic tests to ascertain the cause of Grigorian's death.

A doctor by training, Grigorian was one of the five gunmen who burst into the National Assembly and sprayed it with bullets on October 27, 1999. Then Prime Minister Vazgen Sarkisian, parliament speaker Karen Demirchian and six other officials were killed in the shooting spree that thrust Armenia's government into turmoil.

The gunmen were led by Nairi Hunanian, an obscure former journalist who accused the government of corruption and misrule and called for regime change. They surrendered to police after overnight negotiations with then President Robert Kocharian.

Several other men were also arrested in the following days. One of them, Norayr Yeghiazarian, was charged with supplying weapons to the armed group, which also comprised Hunanian's younger brother Karen and uncle Vram Galstian.

Yeghiazarian was found dead in pre-trial detention in 2000. Law-enforcement authorities said at the time that Yeghiazarian, an electrician by profession, accidentally electrocuted himself to death while using a heating stove in his cell.

Galstian was found hanged in his Nubarashen prison cell in 2004 just months after an Armenian court sentenced him, the Hunanian brothers and the two other gunmen to life imprisonment. The prison administration claimed that he committed suicide.

Another man, Hamlet Stepanian, was sentenced in December 2003 to 14 years in prison on charges of helping the gunmen enter the parliament. Stepanian suddenly died in prison in 2010 of what officials called a heart attack.

Those prison deaths fueled more allegations of a high-level cover-up of the parliament shootings. Some relatives and supporters of the assassinated officials still suspect Kocharian and the current President Serzh Sarkisian (no relation to Vazgen), who was Armenia's national security minister in October 1999, of masterminding the killings to eliminate increasingly powerful rivals.

Hunanian insisted throughout his marathon trial that he himself had decided to seize the parliament and try to topple the government without anybody's orders. But many in Armenia believe that the ringleader and his accomplices had powerful sponsors outside the parliament building.

Ruzan Minasian, a journalist for the "Aravot" daily who covered the parliament attack trial, described Grigorian as the "ideological leader" of Hunanian's group. She suggested that the former pediatrician, who died on Friday, could have shed more light on the shootings.

A Facebook account opened in Eduard Grigorian's name in 2014 promised major "revelations" regarding the October 1999 attack. It was disabled just as mysteriously shortly after attracting Armenian media attention.

# Turkish Activist Osman Kavala Charged Over Attempted Coup

ISTANBUL - Prominent Turkish rights activist and businessman Osman Kavala has been jailed pending trial, charged with seeking to overthrow the government, state-run Anadolu news agency reported on Wednesday.



An Istanbul court remanded Kavala in custody as part of an investigation into the movement of US-based cleric Fethullah Gulen, which Ankara accuses of carrying out an attempted coup in July last year, the agency said.

It said Kavala was charged with "attempting to overthrow the constitutional order" and "attempting to overthrow the government of the Republic of Turkey".

Kavala, whose Anadolu Kultur organisation is involved in promoting culture and rights, was detained nearly two weeks ago at Istanbul's Ataturk Airport, prompting expressions of concern from Europe and the United States.

Osman Kavala is known for his pro-Armenian activities. He is one of the close friends of the Turkish-Armenian journalist Hrant Dink's family and is actively fighting for a fair trial on Dink's murder. On April 24 2016, Kavala visited the Armenian Genocide Memorial Complex and paid tribute to the memory of the innocent victims.

Since the failed putsch on July 15, 2016, more than 50 000 people have been jailed as they face trial and some 150 000 sacked or suspended from jobs in the civil service and private sector.

The US State Department described Kavala's initial detention as an example of a "very alarming trend" of detention of civil society leaders, journalists, academics and activists in Turkey.

The Turkish government says the measures are necessary due to the gravity of the threats it faces. Gulen has denied involvement in last year's attempted coup.

# Another Solar Plant Built In Armenia

Armenia's second major solar power plant was inaugurated on Tuesday in the presence of Prime Minister Karen Karapetian and other senior officials.

The 1-megawatt plant was built in Talin, a town 70 kilometers northwest of Yerevan, as part of a $1 million investment projected co-funded by a group of Armenian entrepreneurs and the German government.

One of the local investors, Hayk Chobanian, said the facility, already connected to the national power grid, can meet the energy needs of about 400 households. He described its launch as the start of "a parade of solar plants" that will increasingly spring up in Armenia.

"Our country's [solar energy] potential is great and I think that in the coming years we will introduce hundreds of megawatts of solar power capacity," Chobanian told reporters.

Deputy Energy Minister Hayk Harutiunian, who also attended the opening ceremony, reaffirmed the Armenian government's declared commitment to greater use of renewable sources of energy in the country. He said nine more small solar plants are now under construction.

Armenia's first major solar plant with a 0.5-megawatt capacity went on stream in late September. It was built by a company controlled by Samvel Karapetian, a Russian-Armenian billionaire businessman increasingly investing in the Armenian energy sector. A company representative said the "pilot project" could be a prelude to the construction of a much bigger facility of its kind that would also be financed by Karapetian.

# Netanyahu Pledges to Improve Relationship

**Continued from page 1**

quirements for holders of Armenian and Israeli diplomatic passports. The Israeli cabinet member, who is affiliated with Netanyahu's Likud party, also met with Prime Minister Karen Karapetian.

Armenian-Israeli relations have been frosty until now, reflecting differing geopolitical priorities of the two states. Armenia has maintained a warm rapport with Iran to ease its geographic isolation, while Israel has pursued strategic cooperation with Turkey and Azerbaijan.

Armenia has been particularly worried about Israel's large-scale arms deals with its arch-foe. In 2012, Israeli defense officials confirmed a reported deal to provide the Azerbaijani military with more weapons worth a combined $1.6 billion. The Azerbaijani army used some of these Israeli-made weapons, notably sophisticated anti-tank rockets, during April 2016 hostilities in Karabakh.

Just weeks after Hanegbi's trip to Yerevan, an Israeli Defense Ministry agency halted exports to Azerbaijan of "suicide" drones manufactured by an Israeli company accused of using them against an Armenian army position in early July. The export control agency launched an investigation into the alleged incident in August.

The Israeli daily "Maariv" reported at the time that representatives of the company, Aeronautics Defense Systems (ADS), traveled to Azerbaijan this summer to finalize a contract for the sale of Orbiter drones to the Azerbaijani military. The paper claimed that two Israeli drone operators working for the company rebuffed Azerbaijani officials' demand to demonstrate the use of the deadly drone by hitting the Armenian position with it. But other, more senior ADS executives agreed on launch the deadly craft on the target, according to "Maariv." ADS denied the report.

It was not clear whether Nalbandian discussed the alleged drone attack with Netanyahu. The Armenian Foreign Ministry statement said only that he briefed Netanyahu on Armenia's and international mediators' efforts to achieve a "solely peaceful" solution to the Karabakh conflict.

The ministry added that the two men also "exchanged views on pressing regional and international issues, developments in the Middle East."

A short statement by a spokesman for Netanyahu said: "The Prime Minister raised the issue of Iran's attempts to establish a military presence in the region and its negative influence." It did not elaborate.

# Armenian Studies Program Conference Held on Ottoman Empire



By Michael Rettig
Editor-Hye Sharzhoom

FRESNO -- The Armenian Studies Program held a two-day international conference on "Armenians, Greeks, and Kurds: A People's History of the Ottoman Empire" on the weekend of September 22-23. Professor Barlow Der Mugrdechian, Director of the Armenian Studies Program, and Dr. Ümit Kurt, visiting postdoctoral fellow at Harvard University, organized the Conference to highlight Ottoman history from the peripheries, rather than from the position of power. Scholars presented their research on the experiences of Armenians, Greeks, and Kurds from the late 19th century to World War I.

The Conference was co-sponsored by the College of Arts and Humanities and the Department of History with support from the Thomas A. Kooyumjian Family Foundation, the Leon S. Peters Foundation, and the M. Victoria Karagozian Kazan Fund for Armenian Studies.

Professor Der Mugrdechian provided historical context to the conference in his introduction. According to Der Mugrdechian, the Tanzimat Reforms in the nineteenth century disrupted the balance of power between the central Ottoman government and periphery. It gave hope to the oppressed but instilled jealousy in the ruling class. Der Mugrdechian stressed the importance of reexamining the relationship between Ottoman Turks and those they ruled by mastering the languages of the people, in this case, Armenian, Greek, and Kurdish.

Nilay Özok-Gündogan echoed this sentiment in her presentation, "Can One Save the Voices of the 'Ordinary' Kurds from the 'Enormous Condescension of Posterity?': Thoughts on Writing the Social History of the Kurds in the Ottoman Empire." According to Özok-Gündogan, when historians write about ordinary people, they often describe them as mobs with little agency. They overemphasize the power the Ottoman government exercised over the provinces because they "take the wording of the text for granted" rather than examine Kurdish and Armenian sources. Varak Ketsemanian described a similar problem in his study on "The Armenian Revolutionary Movement Between Ideologies and Paradoxes: A Case Study of the Hunchakian Party Program (1890-1896)." According to Ketsemanian, historians too often focus on the leadership of the Armenian Revolutionary movements rather than on ordinary members. Ketsemanian examined the Hunchakian party and the paradoxes between the intellectual ideologies and realities on the ground.

Owen Miller, in his presentation on "The Colonization of the Mountains: Sasun, Zeytun and Dersim at the End of the Ottoman Empire," described the central Ottoman government's attempt to subjugate mountainous strongholds in the eastern provinces. According to Miller, many of these eastern areas, such as Sasun, Dersim, and Zeytun, were historically controlled by local lords and princes with little interference from Constantinople. Miller noted that the government was not able to exercise complete control over many of these regions until 1915, while Dersim was not truly integrated until the 1930s. The government used modern weaponry to brutally conquer these semi-autonomous regions. Miller noted the danger of relying on official sources when studying these events, as the military elite tried to cover up the violence they committed. He stressed the importance of accumulating information from various sources, as "authoritarianism is ultimately the monopolization of legitimate truth."

David Gutman, in "The Sojourners of Harput (Kharpert): At the Intersection of the Local, Imperial, and the Global," discussed the unique situation of Kharpert by examining Armenian migration. Gutman stated that a majority of the estimated 35,000-40,000 Armenians who migrated to America between 1885-1908 were from Kharpert. Though migrating to America was illegal in the Ottoman Empire, Armenians in Kharpert could afford the sophisticated smuggling networks. According to Gutman, this attests to Kharpert's uniqueness, as the Armenians were more politically and economically stable and integrated than in other provinces. Because of this, Armenians bore the brunt of the Genocide as local Turks sought to destroy this successful community. Ümit Kurt similarly noted the role Armenian prosperity played in social relations in his study on "The Breakdown of a Previously Peaceful Coexistence: The Aintab Armenian Massacres of 1895." According to Kurt, peace between the Armenians and Muslims in Aintab dissolved as

Continued on page 4

# Celebrated Director Krikor Satamian Honored with St. Sahag-St. Mesrob Medal



BURBANK — On November 1, His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, bestowed St. Sahag-St. Mesrob Medal of Honor and Holy Encyclical upon popular actor and director Krikor Satamian who was honored for his lifelong dedication to the arts and contribution to Armenian theatre.

Surrounded by friends, family and colleagues at the Western Diocese of the Armenian Church, Satamian accepted the award, thanking His Holiness Karekin II and the Diocese. "Receiving this medal of honor is an unparalleled moment for me. It has been a great journey and I feel lucky to have had this unique opportunity to do what I love," said Satamian. "I am proud to serve the Armenian people through Armenian theatre and cultural programs of AGBU."

Satamian's decades-long commitment to his craft has had a significant impact on the development of theater across the diaspora. In 1960, he first joined the famous AGBU Vahram Papazian Theatre Company in Beirut, Lebanon, as a young actor and later was appointed as its artistic director. In the following years, he became AGBU's national artistic director in New York and had since established several AGBU theater companies in Boston, Detroit, New York, Philadelphia, Los Angeles and Buenos Aires. Since 2013, Satamian is the artistic director of the AGBU Krikor Satamian Theatre Group in Los Angeles, previously known as the AGBU Ardavazt Theatre Company.

Satamian has directed over 87 plays, three operettas and has acted in over 70 plays, shows and films, including "24," "Subterfuge," "Mad TV" and "Suddenly Susan." He also worked with celebrities like Brooke Shields, Joey Travolta and John Cusack. He also taught drama at the American University of Beirut (AUB), his alma mater, and the AGBU Manoogian-Demirdjian School in Canoga Park for thirteen years.

# Armenian Bar Association Appoints Gayane Khechoomian As Director of Operations

LOS ANGELES – With great upside implications, the Armenian Bar Association has announced the appointment of Los Angeles-based-attorney Gayane Khechoomian as its new Director of Operations. Gayane will occupy and build out the ground floor of the Association's day-to-day administrative functions, lending support and spirit to the various standing committees in order to facilitate organizational activities and community events.

The Director of Operations will tap into the multiple, positive platforms of the Armenian Bar Association, working closely with the Board of Governors and the nearly-dozen committees led by the nationwide membership's attorneys and students. Each and every year for nearly 30 years, the organization has hosted a continuing series of timely and interesting programs as part of its advocacy of issues which stand at the crux of the Armenian cause.

Importantly, the Association fosters the exchange of ideas and communications among attorneys, judges and law students in different stages of their careers, in different parts of the world, including the Diaspora and the Republics of Armenia and Artsakh.

Gayane will assume the directorial role while continuing to serve as a volunteer coach in the Armenian Bar Association's Mock Trial Program, which partners with Armenian secondary schools in the Los Angeles County area in a broad inter-scholastic moot court competition under the auspices of the Constitutional Rights Foundation. She has held the role of president of her alma mater's Armenian Law Students Association and has chaired numerous non-profit organizations during her law school and undergraduate studies.

Before joining the Armenian Bar Association, Gayane clerked at the United Nations criminal tribunal prosecuting genocide and crimes against humanity in Cambodia and worked on an international case filed in the Inter-American Commission on Human Rights. She has a background in civil litigation and experience working with start-ups and small businesses. Prior to her legal career, Gayane worked as editor of Yerevan Magazine, and founded the student-run publication, Armenian Chronicles, based out of UCLA, where she also obtained her bachelor's degree in History and Near Eastern Languages and Cultures.

# Rev. Dr. Paul Haidostian's Intriguing Presentation on the Middle East




PASADENA -- Rotary International leaders and Armenian American community representatives and members packed into Pasadena's University Club lecture hall on November 1st to hear Rev. Dr. Paul Haidoestian's presentation on "Is Peace Possible in the Middle East?" The event was organized by Rotary International District 5300 Garbis Der-Yeghiayan Peace Institute.

The audience was welcomed by Dr. Garbis Der-Yeghiayan, President of Mashdots College, Past District Governor of Rotary International and Chair-Elect of Rotarian Action Group for Peace. In his introductory remarks, Dr. Der-Yeghiayan spoke very highly of Rev. Dr. Haidostian and his numerous accomplishments as a visionary university president, dynamic church and community leader, distinguished scholar, prolific writer and speaker and a man for all seasons.

Rev. Dr.. Haidostian, President of Haigazian University in Beirut, Lebanon and Chair of the Central Committee of the Armenian Evangelical Churches in the Near East, presented a most intriguing, informative and enlightening lecture on the prospects of peace in the Middle East capturing the attention of the audience. The powerpoint presentation included fascinating statistical information on the region and covered the following topics: Does peace have a definition?, Peace and Justice, peace as surrender is a failed peace, peace as a domination is a forced peace, peace examples, global and local peace, peace and the evil enemy, peace and the good self, possibilities for peace and the role of education in promoting peace.

The attentive audience followed the presentation with great interest and actively participated in the question-answer session. Rev. Dr. Haidostian answered all the questions in great detail which was greatly appreciated by the audience.

At the conclusion of the event, Dr. Der-Yeghiayan presented the first copy of his recently published photo-album on Western Armenia and Cilicia to Rev. Dr. Haidostian thanking him for writing the superbly masterful preface in the book. He also expressed his admiration to him for his 15-year magnetic leadership of Haigazian University and the Armenian community in the Middle East by conferring upon him the Honorary Doctor of Humane Letters degree assisted by Dr. Varujan Gabuchian, Chairman of the Board of Trustees of Mashdots College.

Rev. Dr. Haidostian's incredible presentation will be long remembered by all those who had the privilege of attending this engaging and delectable event.

# AMAA Holds 98th Annual Meeting, Elects New Board Members



PARAMUS, NJ -- The 98th Annual Meeting and related activities of the Armenian Missionary Association of America (AMAA) took place in New Jersey, October 19-22, 2017.

On Thursday, October 20 two lectures were presented on the occasion of the 500th Anniversary of the Protestant Reformation. The event, which took place at the Armenian Presbyterian Church in Paramus, NJ, was attended by over 50 pastors, AMAA members, Board members, and staff from The United States and abroad.

Rev. Dr. Carnegie Calian, past President of the Pittsburgh Theological Seminary, lectured on "The Impact of the Reformation on Christianity and the World." He examined the impact of Martin Luther's movement and presented the socio-political, psychological and theological factors that played out in the early years of the Reformation. Luther's main theme was "repent," which meant to change and move out of one's comfort zone.

Rev. Dr. Vahan Tootikian, Executive Director of the Armenian Evangelical World Council and a prolific author of 40 books, spoke on the "Dawn of the Armenian Evangelical Church and its Impact on the Armenian Nation." He began his presentation by discussing the various 19th century factors that ushered in the Armenian Evangelical movement in the first half of the century – the intellectual enlightenment among Armenians, various educational institutions and the support of missionaries. This was followed by the key elements of the movement: Personal relationship with God, the priesthood of all believers, the importance of lay men and women, the liberty of individuals and the ultimate authority of the Bible. The last part of his lecture focused on the contribution of the Armenian Evangelical movement in the fields of education, evangelism, and leadership.

The Executive Board of the Armenian Evangelical World Council (AEWC) held its meeting on Thursday evening and Friday morning and on Friday evening, the AMAA held its regular Board of Directors meeting. Both meetings were held at the AMAA Headquarters in Paramus.

The 98th Annual Meeting of the Association was held on Saturday morning at the Teaneck Marriot at Glenpointe. AMAA President Dr. Nazareth Darakjian presided over the meeting, which was attended by 100 members and guests. Delegates of Armenian Evangelical Churches, Unions, Armenian Evangelical World Council, AMAA Committees and affiliated organizations shared their reports, their joys and concerns and praised God for another successful year. Before the conclusion of the meeting, Dr. Darakjian announced the results of the election for the AMAA Board Class of 2020: Edward Avedisian (MA), Nazareth Darakjian, M.D. (CA), Thomas Momjian, Esq. (PA), Jack Muncherian (CA), Vahe Nalbandian, Ph.D. (CA), Alan Philibosian, Esq. (NJ), Gary Phillips, Esq. (CA), Ann Karagozian Sarafian, Ph.D. (CA) and Eileen Chopourian Stephey, Ed.D. (PA).

The highlight of the weekend was the sold-out Centennial Celebratory Banquet on Saturday evening at the Teaneck Marriot at Glenpointe, where close 400 guests came together to celebrate the Centennial of the AMAA and honor two distinguished couples: Edward and Pamela Avedisian and Doreen and Charles (posthumously) Bilezikian.

The weekend culminated with a Worship Service held in the sanctuary of the Armenian Presbyterian Church of Paramus, NJ. A special moment of remembrance to honor the memory of those members and friends of the Association, who made the transition from this life to Life Eternal during the past year, was led by AMAA Board member Rev. Ara Guekguezian. The Armenian message, with the theme of "The Harvest is Plenty, But the Workers are Few," was offered by Rev. Joseph Garabedian, Pastor of the First Armenian Church of Belmont, MA. Rev. Dr. Avedis Boynerian, Pastor of the Armenian Memorial Church of Watertown, MA, offered the English sermon with the theme "Faithful to Our Legacy."

Rev. Dr. Vahan Tootikian, Executive Director of the AEWC, brought the service to its culmination with the installation of the newly-elected AMAA Board members.

# Alexander Lapshin Exposes Baku

**Continued from page 1**

Azerbaijani diversionists. And what is most important, why should Armenia exchange the murderers with me when I am not a citizen of Armenia"?

"Later, the authorities of Israel were also informed on the incident, who were also severely infuriated by Azerbaijani position", the blogger told.

Lapshin told that he first heard about that plan during an interrogation by Azerbaijani investigator from the Prosecutor General's Office.

"To say that I was just amazed at the absurd acts of the country in the hands of which I had appeared means to say nothing. I felt like an Afghan hostage representing the Taliban, moreover, they tried to bargain over me.

Russia, I am thankful for your principled stance. I can say the same for Israel. I am also thankful to Armenia for it did not step back".

Lapshin assessed the act of the two diversionists who killed 3 civilians and are arrested in Artsakh as an act of a jihadist movement member.

# Armenian Studies Program Conference

**Continued from page 1**

wealth concentrated in the hands of Armenians. Muslims, as the dominant class, were unable to keep up with Armenian progress and became resentful. Local notables thus took advantage of the Armenian massacres and used the opportunity to confiscate Armenian wealth.

Ugur Z. Peçe's lecture, "From Ballots to Barracks: The Conscription of non-Muslims at a Time of Parliamentary Politics in the Ottoman Empire, 1908-1912," examined debates surrounding Greek conscription in the Ottoman army using parliamentary records and Greek newspapers. Emre Can Daglioglu, in "Intra-Imperial Space and Anti-Armenian Violence in the Ottoman Empire: The Aghtamar Catholicos Khatchadur III and the 1895 Van Massacre," examined how Khatchadour III accrued social capital in the periphery and mobilized it against the Patriarchate in Istanbul. Janet Klein concluded the Conference with her novel study on "Armenian Minorityhood in Ottoman and Russian History and Historiography?", which compared the concept of "minorityhood" in Ottoman and Russian historiography.

A video of the entire Conference is available on Facebook @HyeSharzhoom.

# ՀԱՅԱՍՏԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՒ ԷՏՎԵՆԹԻՍԹ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ



*Հայաստան Համահայկական Հիմնադրամի ԱՄՆ Արեւմտեան Շրջանն ու Էտվենթիսթ Հէլթ Կլենտէյլ (Adventist Health Glendale) բժշկական կեդրոնը յաջողութեամբ աւարտեցին իրենց երրորդ բժշկական միացեալ առաքելութիւնը Հայաստանի մէջ: Լոս Անճելըսէն մեկնած աւելի քան 50 կամաւոր բժիշկներով եւ այլ արհեստավարժներով, մէկ շաբաթ տեւած առաքելութիւնը, որ կայացաւ Նոյեմբերեանի Հիւանդանոցը՝ հիւսիսային Հայաստանի Տաւուշի մարզին մէջ, Վրաստանի ու Ատրպէյճանի սահմաններուն մօտ, աննախընթաց էր իր տարողութեամբ ու բազմակողմանիութեամբ:*

*Առաքելութեան գործադրման եւ Էտվենթիսթի բժշկական ամբողջական կազմի ժամանումէն առաջ, մասնագէտներու կազմակերպիչ աշխատակազմ մը ուղարկուած էր Նոյեմբերեանի Հիւանդանոցը՝ հաստատութեան բժշկական ենթակառոյցը առաքելութեան համար թարմացնելու եւ պատրաստելու համար: Հիւանդանոցի պաշտօնէութեան օժանդակութեամբ, կազմակերպիչ աշխատակազմը բացաւ ու կարգաւորեց Հայաստան Հիմնադրամին կողմէ փոխադրուած գրեթէ չորս թոն բժշկական ու վիրաբուժական պիտոյքներ, սարքեր, եւ դեղորայք:*

*Շաբաթ, Սեպտեմբեր 16-ին, բժշկական ամբողջական կազմը ժամանեց եւ անմիջապէս միացաւ կազմակերպիչ աշխատակազմին՝ առաքելութեան մեկնարկման գծով վերջնական պատրաստութիւններ տեսնելու համար: Մինչեւ Կիրակի, Սեպտեմբեր 17-ի, այսինքն առաքելութեան առաջին օրուայ վերջաւորութիւնը՝ բժշկական աշխատակազմը արդէն 12 անընդմէջ վիրաբուժութիւն կատարած էր ... հաստատելով մրցանիշ մը՝ Հայաստանեան գիւղական շրջանի հիւանդանոցի մը մէջ մէկ օրուայ ընթացքին կատարուած վիրաբուժութիւններու թիւի իմաստով:*

*Բժշկական աշխատակազմին միացան Երեւանէն վեց բժշկական թեկնածուներ՝ երեք ընդհանուր վիրաբուժութեան եւ երեք թմրեցման (anesthesiology) թեկնածու, որոնք շուտով պիտի ամբողջացնեն իրենց մարզման վերջնական տարին: Առաքելութեան ամբողջ ընթացքին, այս թեկնածուները օգնեցին Էտվենթիսթի վիրաբուժներուն եւ սորվեցան անոնց աշխատանքէն: Այս թեկնածուներուն համար, մեծապէս հմուտ ու փորձառու բժիշկներու կազմի մը հետ աշխատիլը եզակի պատեհութիւն մըն էր:*

*«Թէեւ այս տարի չկրցայ մասնակցիլ Հայաստան կատարուած առաքելութեան, չափազանց հպարտ եմ մեր աշխատակազմի արձանագրած արդիւնքներով», յայտնեց Էտվենթիսթ Հէլթ Կլենտէյլի նախագահ եւ գլխաւոր գործադիր տնօրէն Քեւին Ռապըրթս:*



*«Տարուէ տարի, մեր Հայաստանեան բժշկական առաքելութիւնը կ՚ուռճանայ եւ աւելի ու աւելի մեծ թիւով մարդոց կեանքերը կը բարելաւէ: Աստուած օրհնեց մեզ 2017-ին, ինչպէս նախորդ երկու տարիներուն»:*

*«1992-էն ի վեր, որպէս Հայաստանի ու Արցախի զարգացման նուիրուած մեծագոյն կազմակերպութիւնը, Հայաստան Համահայկական Հիմնադրամը կ՚իրականացնէ ենթակառուցային զարգացման լայնածաւալ ծրագիրներ եւ կը հայթայթէ մարդասիրական օգնութիւն», յայտնեց Հիմնադրամի ԱՄՆ Արեւմտեան Շրջանի նախագահ Մարիա Մեհրանեան: «Նոյեմբերեան կատարուած բժշկական առաքելութիւնը, որ աննախադէպ է իր ծաւալով ու ծառայութիւններու բազմատեսակութեամբ, նուաճում մը եւս արձանագրեց Հայաստան Հիմնադրամին համար, այն իմաստով, որ առաքելութիւնը յաջողութեամբ պսակուեցաւ երրորդ յաջորդական տարին ըլլալով՝ Էտվենթիսթ Հէլթի հետ մեր հեռահաս գործակցութեամբ»:*

*Բժշկական առաքելութեան սկիզբէն՝ 2015-էն ի վեր, Տաւուշի շրջանին մէջ առողջապահական յառաջացած խնամքէ զուրկ հազարաւոր մարդիկ բժշկական բարձրորակ ծառայութիւններ ստացած են: Այս տարի, ինչպէս անցեալին, ճողուածքէ (hernia) եւ այլ հիւանդութիւններէ տառապող բազմաթիւ ագարակապաններ ու երկրագործներ կրցան աշխատանքի վերադառնալ՝ շնորհիւ Էտվենթիսթի վիրաբուժներու կատարած վիրաբուժութիւններուն:*



*«Խոնարհեցնող առանձնաշնորհում մըն է այսպիսի հոյակապ արհեստավարժներու խումբի մը մաս կազմելը», յայտնեց ոսկրաբան-վիրաբոյժ Վահան Ջեփքինեան: Նոյեմբերեանի Հիւանդանոցին մէջ առաքելութեան ընթացքին, Բժ. Ջեփքինեան աւելի քան 215 ոսկրաբանական դարմանում եւ վիրաբուժութիւն կատարեց:*

*Առաքելութեան տեւողութեան, լոկ հինգ օրուայ ընթացքին, 78 հիւանդներ վիրաբուժուեցան: Գործողութիւնները ներառեցին լեղապարկի վերացումներ, ճողուածքի յառաջացած դարմանումներ, եւ զանազան ուռեցքներու ոչնչացումներ:*

*Առաջնային խնամքի դարմանատունը 2,015 հիւանդ խնամեց, եւ բարձրորակ դեղեր հայթայթեց մնայուն հիւանդութիւններէ տա-*

Շար.ը էջ 19



# ԳԵՐՇ. ԴՈԿՏՈՐ ԱՒԱԳ ԱՐՔ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿԸ

ԽԱՉԻԿ ՃԱՆՈՅԵԱՆ



*Այս տարի կը լրանայ Իրաքի Հայց. Առաքելական եկեղեցւոյ Թեմի բազմավաստակ Առաջնորդ Գերշ. Դոկտոր Աւագ Արք. Ասատուրեանի քահանայագործութեան 40-ամեակը:*

*Օգտուելով Նորին Սրբազնութեան քաղաքս գտնուելու առիթէն, սրտանց կը շնորհաւորենք Իրաքի Թեմի Առաջնորդը՝ Գերշ. Դոկտոր Աւագ Արք. Ասատուրեանը, մաղթելով բարձրաստիճան հոգեւորականէն քաջառողջ, արեւշատ եւ երջանիկ օրեր:*

*Հայ ժողովուրդի պատմութեան ընթացքին, մեր ճակատագրական եւ օրհասական ամէնէն դժուար օրերուն եւ դէպքերուն ատեն, Աստուածային վերին տնօրինումով, կարգադրութեամբ ու կամքով, Աստուած մեզի տուած է հոգեւոր կամ աշխարհիկ՝ լուսամիտ, անձնազոհ եւ առաքելատիպ ղեկավարներ: Անոնք մեր ժողովուրդի համար պահապան հրեշտակներ եղան: Անոնք մեր ժողովուրդի համար վերապրումի եւ փրկութեան լաստեր եղան: Այս պատճառով է, որ մեր ժողովուրդը կրցած է չորս հազար տարիներ շարունակ պահել իր ինքնութիւնը, մշակոյթը պատմութեան ամէնէն դժուարին, կամ՝ խաղաղ օրերուն, շնորհիւ Աստուածապարգեւ այս ղեկավարներու եւ առաջնորդներու գերիմաստութեան:*

*Հայաստանեայց Առաքելական Մայր Եկեղեցւոյ մեր օրերու մեծավաստակ կղերականներէն մին է, Իրաքի հնամեայ Թեմի Թանկագին առաջնորդ՝ Գերշ. Դոկտ. Աւագ Արք. Ասատուրեան:*

*Արդարեւ, մեր սիրելի Գերշ. Տ. Աւագ Արք. Ասատուրեան Իրաքի Թեմին մատուցած մեծագործութիւններով, եւ Իրաքի բոլոր քրիստոնէական համայնքներուն ընդհ. քարտուղարի պաշտօնով եւ հանգամանքով կատարած աշխատանքներով, կրցած է իր կենդանութեան օրերուն իսկ, ապահովել իր անմահութիւնը եւ յաւերժականութիւնը եւ այս բոլորը Աստուծոյ եւ մեր ժողովուրդի փառքին համար:*

*Մօտ քառասուն տարի մօտէն ծանօթ ենք Աստուծոյ այս նուիրեալին: Ծանօթ ենք անոր նկարագրի գիծերուն, ծառայութեան, վաստակին, աշխատասիրութեան, բայց ամէ՛ն վեր եւ աւելի՝ իր Աստուածասիրութեան եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ հանդէպ ունեցած սիրոյն եւ հաւատարմութեան:*

*Գերշ. Տ. Աւագ Արք. Ասատուրեան եղաւ այն կղերականը, որ Իրաքի հայ գաղութին եւ հայ եկեղեցիին համար, վերջին 40 տարիներու փրկութեան, մխիթարութեան եւ հոգիի անդորրութեան աղբիւր եղաւ մեր գաղութի զաւակներուն, միաժամանակ Նորին Սրբազնութիւնը հակառակ տիրող պատերազմական եւ ահռելի վիճակին, այդ պայմաններուն իսկ, եկեղեցաշէն եւ ժողովուրդի հոգեւոր կեանքի փրկութեան եւ հարստութեան բազում լուսաշող գործերով չէնցուց այդ երկրին մէջ ապրող հայերուն եկեղեցական, հոգեւոր եւ գաղութային կեանքը:*

*Աւագ Սրբազան, աւազանի անունով Վազգէն, փոքր տարիքէն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին ծառայած է որպէս դպիր, կիսասարկաւագ: Ան աւարտած է քաղաքային ճարտարապետութեան բաժինը Ամերիկեան Համալսարանէն: Հետեւած է փիլիսոփայութեան դասընթացքներուն եւ Իլինոյի համալսարանէն ստացած է Մագիստրոս վկայականը: Եղած է ուսուցիչ եւ դասախօս Ամերիկեան Քոլէճի մէջ: Այս բոլորէն ետք, Աստուած ուրիշ առաքելութիւն մը սահմանած էր Վազգէնին, անոր ուրիշ՝ աւելի կարեւոր պաշտօն մը վստահիլ ուզած էր, որն է՝ ծառայել իր եկեղեցիին եւ իրաքահայ գաղութին:*

*Այդպէս ալ եղաւ: Զափահաս տարիքէն այս ճարտարագէտ ուսուցիչը, Աստուծոյ առաջնորդութեամբ սարկաւագ կը ձեռնադրուի, անկէ ետք Վարդապետ, Եպիսկոպոս եւ Արքեպիսկոպոս կը ձեռնադրուի, իր ժամանակին ամէնէն երիտասարդ Արքեպիսկոպոսը հանդիսանալով: Անշուշտ անկէ ետք ալ իր ուսումը շարունակելով Դոկտորական վկայականին կ'արժանանայ:*

*Իրաքահայ գաղութի 350 տարուայ պատմութեան ընթացքին, մենք առաջին անգամ ըլլալով, Իրաք ծնած եւ մեծցած հայ մը, որպէս կուսակրօն կղերական Առաջնորդ կ?ունենանք, յանձին՝ Գերշ. Տ. Աւագ Արք. Ասատուրեանին:*

*Ինչպէս յիշեցինք, Աւագ Արք. Իրաքի Թեմէն ներս եղած բոլոր տարիներուն, երկիրը պատերազմներու, խլրտումներու, յեղաշրջումներու մէջ էր: Եւ այդ բոլոր անապահով եւ աննկարագրելիօրէն սարսափելի եւ վախազդու օրերուն, Աւագ Սրբազան, պաշտօնավարութեան առաջին օրէն իսկ գործեց անվախօրէն, վճռակամութեամբ եւ մեծագոյն նուիրումով: Եղաւ մեր ժողովուրդի հետ, անոր մխիթարողը, ցաւերուն բալասան եղաւ, տառապողներուն յոյս ու հաւատք ներշնչելով: Այս բոլորին կողքին, Սրբազան Հայրը կազմակերպեց կազմալուծուած ծուխերը եւ եկեղեցիները, որոնց մեծ մասը մնայուն հովիւ չունէին: Իսկ եկեղեցիները անփառունակ վիճակ ունէին: Կազմակերպեց քահանայից քառամեայ դասընթացք մը, այս դասընթացքէն 16 համալսարանական երիտասարդներ չորս տարի քահանայական այս դասընթացքը աւարտելէ ետք, որպէս քահանաներ Իրաքի մէջ կը ծառայեն: Ասոնցմէ զատ, ուրիշ խումբ մըն ալ Ս. Էջմիածին ղրկելով կուսակրօն կղերականներ ձեռնադրուած են եւ անոնք այսօր որպէս Առաջնորդներ կը ծառայեն Ֆրանսայի, Ռումանիոյ, Հռոմի եւ եւրոպական այլ Թեմերէ ներս:*

*Աւագ Սրբազան կազմակերպեց Թեմի վարչական աշխատանքները, եկեղեցապատկան հաստատաբեր կալուածներու վիճակը, նոր շէնքեր կառուցելով, որոնց եկամուտներով նորոգուեցան գոյութիւն ունեցող եկեղեցիներ, ինչպէս նաեւ նոր եկեղեցիներու կառուցման ընդարձակ գործ կատարուեցաւ:*

*Նորին Սրբազնութեան մեծագոյն գործը եղաւ Իրաքի իշխանութենէն մեծ հողատարածք մը առաւ եւ հայերուն գերեզմանատունը հոն փոխադրել տուաւ: Ժամանակին մեծաբերան եւ պոռոտախօսներ քննադատեցին ազգային իշխանութիւնը եւ Սրբազանը այս քայլին համար: Հիմա բոլորը մեծագոյն գնահատանքով կը գովաբանեն այդ գործը:*

*Աւագ Սրբազանին օրերուն է որ հիմնովին վերանորոգուեցաւ եւ ընդարձակուեցաւ Իրաքի Թեմի ծերանոցը, որ մեր անտէր եւ որբ ծերունիներուն հոյակապ ապաստարանը կը հանդիսանայ:*

*Աւագ Սրբազանին իմաստուն կարգադրութեամբ, Իրաքի մէջ գործող հայկական ակումբներուն համար ազգային հողամասեր տրամադրուեցան, կառուցելու համար մեր հայկական ակումբները, որպէսզի մեր համայնքին զաւակները հայաբոյր այդ ակումբներուն մէջ հայօրէն ապրելու եւ հայ մշակոյթը պահելու եւ ծաղկեցնելու առիթ ունենան:*

*Եկեղեցւոյ պաշտօնաթերթ, կիրակնօրեայ դասընթացքներու կարգին, Աւագ Սրբազանին կապերուն եւ իշխանութեանց մօտ վայելած մեծ հեղինակութեան շնորհիւ, կարելի եղաւ վերատիրանալ մեր Թարգմանչաց Ազգային վարժարանի, որ շրջան մը պետութեան կողմէ կը ղեկավարուէր:*

*Արդարեւ, Հայց. Առաքելական Եկեղեցին, գլխաւորութեամբ Գերշ. Տ. Աւագ Արք. Ասատուրեանի եղաւ իրաքահայ բոլոր միութիւնները, յարանուանութիւնները միացնող շաղախը, ուր միասնականութիւն եւ բոլոր հաստատութիւններուն եւ միութիւններուն միջեւ սերտ ու սիրալիր յարաբերութիւններ կը տիրեն այդ երկրին մէջ:*

*Իրաքահայ գաղութի այս դժոխային ամէնէն դժուարին օրերուն, Գերշ. Տ. Աւագ Ասատուրեանի գլխաւորութեամբ, իր այլատեսակ, բազմաթիւ եւ բազմատեսակ օժանդակութիւնները հասցուց մեր յաւիտենական հայրենիքին երկրաշարժի օրերուն, անկախութեան առաջին տարիներու դժուարութեանց օրերուն եւ մեր լուսոյ խորան Ս. Էջմիածնին: Անոր համար է, որ Աւագ Արք. Ասատուրեան արժանացաւ հայրենի պետութեան մեծագոյն շքանշաններուն:*

*Նմանապէս մեր սիրելի Աւագ Սրբազանը իր պաշտօններուն եւ Իրաքի քրիստոնեաներու ղեկավարի հանգամանքով, ան եօթը անգամ տեսնուած է Հայ Կաթողիկէ Եպիսկոպոսապետ Պապին հետ, Անգլիոյ Քենթըրպըրիի Արքեպիսկոպոսին հետ, եւ բազմաթիւ այլ հոգեւոր պետերու հետ, արաբական երկիրներու իսլամ ղեկավարներու, Թագաւորներու, Նախագահներու եւ իշխանաւորներու հետ եւ ուր որ եղած է, որոնց հետ որ տեսնուած է Նորին Սրբազնութիւնը անպայման անդրադարձած է Հայոց Ցեղասպանութեան մասին: Ան իր Աստուածային իմաստութեան հետ, իր Թիկնեղ եւ պարթեւ կազմով, միշտ ալ խոր տպաւորութիւն թողած է զինք ունկնդրողներուն վրայ եւ հիացած անոր շնորհքին եւ վարքին վրայ:*

*Աւագ Սրբազան, հակառակ իր արտակարգ զբաղուածութեան եւ բազում պարտականութիւններուն, սերտ ու մշտատեւ կապի մէջ էր իր հանգուցեալ մօր, Տիրամայրի, Ամերիկա հաստատուած եղբօրը, անոնց զաւակներուն եւ բոլոր հարազատներուն եւ բարեկամներուն հետ, միշտ անոնց ուրախ եւ տխուր առիթներուն անոնց հասած է իր աղօթքներով, մխիթարական կամ շնորհաւորական խօսքերով:*

*Լոս Անճելըսի հայութիւնը միշտ ալ անձկութեամբ եւ մեծագոյն կարօտով կը սպասէն Նորին Սրբազնութեան, իր մէջ տեսնելով մեր գաղութի պատկերը, մեր պատուական գաղութի պատուաբեր եւ փայլուն երեսը: Ճիշդ ասոր համար է, որ երբ Գերշ. Դոկտ. Աւագ Արք. Ասատուրեան Լոս Անճելըս ժամանէ, Լոս Անճելըսի նախկին իրաքահայերը տօնական անխառն ուրախութեամբ կը դիմաւորեն զինք եւ կը փութան եկեղեցի իր մատուցած Ս. Պատարագին ներկայ ըլլալու եւ անոր սրտաշարժ քարոզներով լեցուելու:*

*Այս տարի, 2017-ին, իրաքահայ գաղութի բոլոր միաւորները, գլխաւորութեամբ Հայց. Առաքելական Եկեղեցիին, արժանավայել ձեռնարկով մը նշեցին Նորին Սրբութեան քահանայագործութեան 40-ամեակը:*

*Մենք ալ, Լոս Անճելըսի այս հեռաւոր ափերէն սրտանց կը շնորհաւորենք մեր Թանկագին Աւագ Սրբազանը, եւ սիրաջերմ զգացումներով իրեն կը մաղթենք կենսառողջ եւ արդիւնաշատ բեղուն օրեր, ըսելով՝ վարձքդ կատար, մշակ բարի եւ յարգարժան:*

NATIONAL NOTARY ASSOCIATION MEMBER
National Notary Association
Notary Public
Garine Depoyan
626-755-4773
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
ghdepoyan@gmail.com

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

# ԱՒԵՏԻՍ ՌԱԶՄԻԿԻ «ԿԵԱՆՔԻ ԿԱՐՈՒՍԵԼ - ՀՐԱՊԱՐԱԿԱԳՐԱԿԱՆ ԷՋԵՐ» ԳԻՐՔԸ

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

*Սուրիոյ Համա քաղաքի Նա՛ուրան (Ջուր վերամբարձող ճախարակ՝ դաշտեր ոռոգելու համար) յիշեցնող պատկերաւոր կողքով գիրք մը եւ անուն մը՝ Աւետիս Ռազմիկ, որուն հրապարակագրական յօդուածները մեզ յիշել կու տան ներհուն հրապարակագիր ու գրագէտ Արփիար Արփիարեանին անունը, անոր նման խիզախ, անոր նման ճշմարտախօս, անոր նման մայր հողին կապուած, անոր նման հայրենիքի եւ արտասահմանի հայ կեանքը ներկայացնող եւ կուսակիցը այդ անուանի գրագէտին:*

*Սփիւռքը անուանի տասնեակ մը հրապարակագէտներ ունեցաւ, որոնք կոչուած էին հայ կեանքին արեւելումը տալու: Այդ շարքին նորերէն եղաւ Աւետիս Ռազմիկը, որ իր նախնական եւ երկրորդական ուսումը իր ծննդավայր Պէյրութի մէջ ստանալէ յետոյ բարձրագոյն ուսումը ստացաւ Երեւանի Պետական համալսարանի պատմագիտական բաժնէն:*

*Ծնած է մտաւորական ընտանիքի մը մէջ. հայրը՝ բանաստեղծ: Կանուխէն գիրքերու աշխարհին մէջ կատաղի ընթերցող Աւետիս Փոշօղլեանը Ռազմիկ անունը որդեգրելով ոչ թէ դարձաւ ճակատներու վրայ փամփուշտ արձակող գինուոր, այլ՝ իր մայրենի լեզուի շինարար, բառերը արեւելումի յատկացնող ազգօգուտ վարպետ:*

*Աւետիս Ռազմիկ Երեւանի իր ուսումնառութենէն յետոյ Պէյրութի եւ Նիկոսիոյ մէջ (Կիպրոս) եղաւ ե՛ւ ուսուցիչ-դասախօս, ե՛ւ հրապարակագիր ու խմբագիր, հետեւելով իր կուսակից վարպետ Արփիար Արփիարեանին, ոչ թէ ընդօրինակելով զայն, այլ ունենալով խիզախի սեփական ձայն:*

*Ու երբեք զարմանալի չէ, որ Աւետիս Ռազմիկի յօդուածներուն կը հանդիպինք յաճախակիօրէն Պէյրութի Ս.Դ.Հ.Կ.-ի «Արարատ» օրաթերթին մէջ: Սփիւռքը այս անունով ունեցաւ կորովի հրապարակագիր մը՝ գիտակ իր լեզուին ու պատմութեան:*

*Եւ ահա, թէեւ քիչ մը ուշացումով, իր առաջին գիրքը՝ «Կեանքի Կարուսել», հայ կեանքի վերիվայրումները ներկայացնող, ըլլա՛յ փոքրացած Հայաստանի, ըլլա՛յ լայնածաւալ սփիւռքի մէջ:*

*Փոքր բառը ինծի յիշեցուց ժեներալ Տը Կոլի մէկ արտայայտութիւնը, երբ իրեն ըսած են. «Ձեր ատոմական ռումբը նարինջի չափ ալ չկայ, փոքր է», ժեներալին պատասխանը. «Այո, փոքր է, բայց ատոմական է»:*

*Մեր երկիրն ալ այսօր փոքր է, բայց տիրանալով իր անկախութեան, ձեռք բերած է մեծնալու յատկութիւն: Աւետիս Ռազմիկ՝ սփիւռքի զաւակ, իր հայրենիքի առօրեային կը հետեւի, շեշտելով, թէ հայը ունի մէկ հայրենիք, թափառումները լոկ քաղաքացիութիւն կը բերեն: Հիմա ակնարկ մը Աւետիս Ռազմիկի «Կեանքի Կարուսել» գիրքին:*

*Տպուած է Երեւանի մէջ այս տարի (2017 թ.), մեկենասութեամբ հրատարակիչ ու գրող՝ տէր եւ տիկին Յովսէփ Նալպանտեաններուն:*

*Այս 364 էջերուն վրայ տարածուող հատորին բովանդակութիւնը բազմապիսի է, բազմախօս՝ ինչպէս հայ կեանքը, կեանքը ընդհանրապէս:*




*Հատորը իր դռները լայն կը բանայ հեղինակին «Երկու Խօսք»ով, ուր կը կարդանք. «Թերթը հրապուրած է զիս երբ պատանի էի: Եւ 17 տարեկանէս աշխատակցած եմ մամուլին: Պէյրութի «Արարատ» օրաթերթը եղած է այն դաշտը, ուր հնարաւորութիւն տրուած է ինծի կատարելու առաջին փորձերս, եւ յետագային նուիրուելու հրապարակագրութեան՝ արդէն որպէս պատասխանատու խմբագիրի պաշտօնով (1994-2000 թ.)«:*

*Շնորհակալութեան ջերմ խօսքերէն յետոյ ուղղուած՝ «Արարատ»ին, իր ծնողաց՝ Սարգիս եւ Վիքթորիա Փոշօղլեաննե րուն, հրատարակիչ-գրող Յովսէփ Նալպանտեանին եւ Նազելի Էպէճեան-Նալպանտեանին, երախտագիտութեամբ կը բացուին դռները «Կեանքի Կարուսել»-ին Վահան Տէրեանով, Յովհաննէս Պլուզ Երզնկացիով (ԺԳ. դարու տաղասաց)՝ միջնադարեան հայերէնով, ու Ֆրիկով (ԺԳ. դարու բանաստեղծ).*

*Մէկին բեհեզ եւ ծիրանի,*
*Մէկին բրդէ շալ մի չանկնի...*

*Կը տեսնէք, որ Աւետիս Ռազմիկը իրա՛ւ գրականութեամբ մը կը բանայ իր հրապարակագիրի պարտէզին դուռը, լաւ իմանալով, որ հրապարակագրութիւնը կարելի է վերածել գեղարուեստական գրականութեան, ինչպէս Արփիարեանի մօտ էր, ինչպէս Ռազմիկը տեղ-տեղ կրցած է պատմուածքի վերածել իր գրածներէն բազում էջեր:*

*Մուտքէ մը յետոյ, ուր յիշուած է տաղանդաւոր գրող-խմբագիր Ռուպէր Հատտէճեանի «Յուշատետրերուն շարքը, կը յիշուի նաեւ գրող Կարօ Աբրահամեանի մէկ առաջարկը. «Աւօ՛ս, յուշերդ գրէ»: Աւօն մեծահասակ չէ, ի՞նչ յուշ գրէ:*

*Հատորին «Կարուսել» բաժինն ունի 226 յօդուած, էջ 9-105 տարածքին, սկսելով «Մեր Թաղերը Երէկ եւ Այսօր» մանրակրկիտ բացատրութիւններով, անցեալյուշ պատկերներով, երբ հին թաղերը իրենց ցեխակոլոլ փողոցներով մաքրուած են այսօր:*

*Խօսելով ճակատագիր հասկացողութեան մասին, հեղինակը կը շեշտէ. «Համեստօրէն աւելցնենք, կեանքի յաջողութիւնը դպրոցական օրերու յառաջդիմութենէն չէ, այլ՝ ժամանակ եւ դիպուած (Կեանքի Կարուսել) կ՛որոշեն ամէն ինչ»:*

*Հեղինակը, աւելի ուշ, այլ գործօններ եւս պիտի յուշէ: Ոմանք երգելով բարձրացան կախաղան, Փարամազին պէս, հոս հեղինակը կը շեշտէ երգելով ապրիլը՝ յանուն յաղթանակ ներու: Ծագումով հայ է՞ր: Հեղինակին համար կամ հա՛յ ես, կամ ո՛չ: Սուրբ Մեսրոպին համար կարելի՞ է ըսել ծագումով հայ:*

*Վճռական է Ռազմիկը:*

*Մարդ կրնա՞յ ունենալ երկու հայր: Ո՛չ: Կ՛ունենայ միայն մէկ հայր, ուրեմն նաեւ մէ՛կ հայրենիք, որ հայուն համար Հայաստանն է: Միւս երկիրները՝ բնակավայր, երբե՛ք հայրենիք: Ժամանակի գիտութիւնը վերջ տուաւ արուեստի մը՝ նամակագրութեան, ուր որքան կարօտներ կային ու տառապանք, նաեւ ոգեղինացնող խոհեր...*

*Եթէ Դ. Վարուժանին մայրը սա նամակը չգրէր, հետեւեալ գոհար քերթուածը լոյսին պիտի գա՞ր.*

*Ով իմ որդեակս պանդուխտ*
*Դեռ մինչեւ ե՞րբ պիտ՛ անծանօթ լուսնի տակ*
*Օրերդ անցին, դեռ մինչեւ ե՞րբ հէգ գլուխդ*
*Ես չըսեղմեմ լանջքիս տակ*
*Վրէժի զգացումէն ի՞նչ մնաց մեզի...*

*«Կեանքի Կարուսել»... ափսո՜ս, սկսած եմ նշմարել, որ վրէժը կամաց-կամաց կը բովանդակազրկուի, կ՛իմաստազրկուի եւ կը խամրի իր էութենէն: Այո՛, բայց քիչ յետոյ հեղինակը պիտի հաստատէ, որ ԱՍԱԼԱ-ն՝ հայ գաղտնի բանակը, վրէժ ըսելով պիտի Արեւմտեան Հայաստանը զէնքով առնել խոստանայ:*

*Մեր մէջ եւ քիչ մը ամէն տեղ կան կամաւորներ եւ կամազուրկներ: Աւետիս Ռազմիկ կամաւորներու առաջին շարքին տեղ գրաւած է:*

*Պայքար՝ հացի եւ արդարութեան համար, լացողին հաց չեն տար, միայն կռուողն է, որ պայքարով հացի տէր կը դառնայ:*

*Արեւելահայերը մեզի՝ այսինքն սփիւռքին, խրատ տուին, ինչո՞ւ կը կռուիք երեք կուսակցութիւն ներ...*

*Մենք այսօրուան Հայաստանին ի՞նչ խրատ տանք, երբ անկախ Հայաստանի մէջ 5-10 հոգի իրար մօտ քալով 80 կուսակցութիւն ստեղծած են: Խեւը խրատն ի՞նչ ընէ, սեւը սապոնը ի՞նչ ընէ:*

*Քերականութեան սխալ դասեր. «Մեզի սորվեցուցին մի՛ գողնար, երանի սորվեցնէին մի՛ գողցուիր»:*

*«Մեզի ըսին մի՛ սպաններ, երանի ըսէին մի՛ սպաննուիր: Բայց մեր հայրերը չսպաննեցին, ուրեմն սպաննուեցան զանգուածաբար (այդպէս չեղաւ Սարդարապատը, Արցախը)»:*

*Անթիլիասի վանքին մէջ հեղինակին երեք տարիները՝ հովուերգութիւն... գի բնութիւն եւ հայ վաղեմի մշակոյթ, ոգեղինացուցած է զինք, իսկ ուշ այցելութիւն մը չէ պարզած նոյն պատկերը: Ռազմիկ յուսահատողը չէ, կա՛յ Հայաստանը:*

*Երախտագէտ ըլլալը անցեալի եւ այժմու մեծերուն՝ գիտնանք թէ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ է: Իսկ երբ չես ուտեր՝ շուրջդ ուտողներ կը վխտան, նոյնիսկ կը ժպրհին ուտել հայրենիքդ, եթէ նոյնիսկ ապառաժէ ըլլայ:*

*Հոս արդէն հեղինակը իրաւունք ունի կոչ մը ուղղելու հայոց գաղտնի բանակ ԱՍԱԼԱ-ին. «Ո՞ւր էք ՏՂԱՆԵՐ, ՈՐ ԵԼԱՔ ՄԱՐՏԻ... որ հասած էիք Սթանպուլ եւ Անգարա...*

*Թող մեր մեծ հայրերը՝ ՏԷՏԷՆԵՐԸ, երկար ապրին ու գրեն իրենց յուշերը, որ կեանք հաղորդեն նորափթիթ սերունդներուն: Քարեր հաւաքելու ժամանակն է: Իսկ քարերը քարաշատ Հայաստանի քարերու պէտք ունի՞: Անշուշտ պէտք ունի, երբ մեր քարերը մեր հայու զաւակներն են՝ սփռուած աշխարհով մէջ: Ո՞վ ճիգ մը կ՛ընէ հաւաքելու մեր երկրին վրայ այդ փշրուող քարերը...»:*

*Այս բոլորին կողքին հեղինակին հերոսը՝ ՎԱԶԳԷՆ ՍԻՍԼԵԱՆ:*

*Հեղինակը կ՛եզրակացնէ. «2014-ին (քեզմով) աւելի հայացայ»:*

*Վիքթոր Հիւկոյի «Թշուառներ»-ուն մէջ Ժան-Վալժաններ փնտռեցինք: Մենք ունեցանք նմաններ, երբ «Օրէնքներու» ոստիկանութիւնը խեղճերուն, թշուառներուն եւ Ժան-Վալժաններուն համար էն միայն: Եւ երբ Ռուբէն Սեւակ գրած էր. «Դրամը աշխատողին չէ, այլ՝ գողցողին«: Նահատակի իր անգերեզման աւազուտքէն Ռուբէն Սեւակ, ձայնակցելով Աւետիս Ռազմիկին, կը գոչէ. «Այսօր ո՞ւր են մեր երկրին դրամները...»:*

*Մայրերու օրուան գովերգում: Աներկբայ երկրպագում ամէն տարուան Մարտի 21-ին: Նոյնպէս մեծարանք հայրենիքին ամէն, ամէն օր, զի մեր բոլոր մայրերուն մայրը՝ մեր մայրենի հայրենիքն է:*

*Այս բաժինին հետեւած են երեք գրութիւններ. «Աշխատանք, հող, բազմացում», «Մենք՝ սայաճիներս», «Ձեր կենացը՝ չինչին», երեքն ալ հասած գեղարուեստական պատմուածքի գրա կան ձեւին, դառնալով հատորին 65-րդ գրութիւնը:*

*Ըսած եղանք, բազմազան են, բազմապիսի՝ հատորին նիւթե րը, շաղ տրուած ողջ հայութեան կարուսելին թէ՛ վեր, թէ՛ վար:*

*Գլուխ Բ. ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՅՐԵՆԱԿԱՆ -*

*Ընդգրկած 109-224 էջերը երեսուն, նիւթերով նոյնքան եւ աւելի երփներանգ ու այլազան, սկսելով «Թումանեանին Նամակը Աւոյին, Աւոյին Նամակը Թումանեանին» նիւթով: Նամակը Պոլիսէն կը յղուի Աւետիք Իսահակեանին՝ ՀՕԿ-ի նախագահ Թումանեանէն, ուր Ամենայն Հայոց Բանաստեղծը կը խօսի Հայաստանի 1920-1921 թուականներու կացութեան մասին... «Կարճ ասեմ, մենք թէ դրսից, թէ ներսից քանդեցինք մեր երկիրը: Գլխաւորապէս մենք: Մենք եմ ասում, եւ սրա մէջ է ճշմարտութիւնը: Մի մասը խաչագող սրիկաներ, մի մասը գողեր ու աւազակներ, մի մասը ապիկար-թշուառականներ, եւ չերեւաց մի բազմութիւն, գոնէ մի խմբակ, որ վերածնուող երկրի շունչն ու բարոյական կարողութիւնը յայտնաբերէր:...*

*Եւ շարունակում է այժմ էլ, նոյն մարդիկը՝ նոյն ճանապարհներով: Եւ ոչ մէկը գոնէ անձնասպան չեղաւ, որ ապացուցանէր, թէ գոնէ ամօթ ու խղճմտանք կայ էս մարդկանց մէջ, կամ էս ժողովուրդի մէջ: Բայց ես ինչ եմ ասում, չկարողացան գոնէ վշտանալ կամ վշտացած երեւալ»:*

*Թումանեանագէտ, ակադեմիկոս Լեւոն Հախվերտեանը իր կարգին ըսած է. »Սրանք ամենացասումնալից տողերն են, որ ես կարդացել եմ Թումանեանից: Այս տողերում տրոփում է պարտուած հայրենիքի կորստեան ցաւը: Պարտուած հայրենիքի զաւակի հոգին ծառս է եղել ամէնքի ու ամէն ինչի դէմ, ապաշնորհ եւ ապիկար ազգային գործիչների դէմ յատկապէս«:*

*Հոս հեղինակը կ՛աւելցնէ. «Ես ալ, իմ հերթիս, սոյն նամակը կը գրեմ անդենականի բնակիչ անզուգական բանաստեղծին.*

*«Շատ սիրելի Յովհաննէս Թումանեան, նախ կը համբուրեմ վէս ճակատդ եւ սուրբ ձեռքերդ, ինչ որ նամակիդ մէջ գրած էիր 1921-ին, նոյնն է այսօր Հայաստանի վիճակը, թերեւս ալ աւելի վատ: Վստահ եմ, լսած ես, որ 1991-ին Հայաստան անկախացաւ եւ իրականացաւ մեր*

Շար.ը էջ 19

# «ՎԱՍ ԱՇՈՒՆԵԱ» (ՈՍԿԷ ԱՇՈՒՆ)

«Հայաստանը Աշխարհի Քաղաքակրթութեան Օրրանն է,
Արեւելքի Ամենաքաղաքակիրթ Ժողովուրդը»

**Ֆրանս Վերֆէլ**

ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

*Աշուն ...: Մեղմում էին Միհր արեւ աստուծոյ հրաշունչ ատրուշանի կրակի բոցերը, գնում երկիր մոլորակի հիւսիսային կողմն աշխարհի ծովերի ալեծուփ ալիքների սպիտակ ջրերի երեսներին շողիւն լոյս սփռում, կարմիր լոյսի հեղեղի հազար գոյնի գօտի կապում նրանց վրայ, վառուող հորիզոնից եկած անուշ հովիկները նրանց դէմքը շոյում: Արմին-հայեր հաւատում էին, որ ամէն առաւօտ արեւ աստուածը Արարատի գագաթից սկսում իր երթը, անցնում մոլորակի ճամբաներով, վերադառնում «Օրինաց Երկիր» սրբազան լեռնաշխարհի Վանայ ծովի ջրեր, բարձրանում նրա ափերի լեռների գագաթներից պայթած կրակով երեսը ցօղում: «Սրբազան Լեռնաշխարհ»-ի արարչական արմիններ իրենց «Արեւ որդի» էին անուանել, նրա հետ հասել աշխարհներ, ետ եկել իրենց Նահապետի երկիր: Երբ Միհր արեւ աստուածը սկսում էր առաւօտեան իր երթը, Աշտիշատի մեհեանի քուրմերը կանգնել մեհեանի առաջ, նրա առաջին լոյսի շողերով երեսները ցօղել:*

*Արեւ աստուած Միհրը, լոյսի անուշ ժպիտ, լոյսի շառագոյն համբոյր շաղում «Սրբազան Օրինաց Երկիր» լեռնաշխարհի երեսին, լոյսով գգւում դաշտերին իջած ցօղի մարգարիտեայ հատիկները, որոնք նրա շոյանքից հալւում, հողին են ընկնում: Արեւ աստուած Միհրը բնութեան յաւերժութիւնն է, տիեզերական արարչութեան պարգեւն է, որի մի շիւղը յաւիտեանն արժէ: Միայն Արմին-հայերն են իրենց Միհր արեւ աստուծոյ լոյսով ողջոյնում աշխարհի մարդկանց, «Բարի Լոյս», «Բարեւ» մաղթանքներով, ժպիտ ցանում նրանց սրտերին, որ այնտեղ բարութեան արարում լինէր:*

*Հաւատո՞ւմ էք, եթէ ասեմ, որ մի քանի անգամներ տեսել եմ, թէ ինչ ակնածանքով էին Հնդիկ մարդիկ մօտենում կրակին, ափերով լոյս քաղում նրա բոցերից, տանում երեսները լուանում, ակները շոյում: Լոյսի այդ պաշտամունքը նրանք իրենց հետ տարել էին մայր օրրան «Հայոց Սրբազան Լեռնաշխարհից», աւանդել սերունդներին:*

*Աշուն ...: Արմին-Հայ, հասել ես այս հեռու երկրի շէներ, ինչպէս ես աշունը դիմաւորում: Արի գնանք քու Արմինա-Հայաստան աշխարհի աշնանային այգիներ: Ծիածանի լոյսի հրդեհ է վառւում այնտեղ, նրա եօթը գոյների լոյսի հեղեղն է հոսում այնտեղ: Նրա թովչանքից հոգիդ պիտի զմայլի բնութեան սքանչանքով, լցուի խինդով: Փառաբանութիւն լինի Միհր արեւ աստուծոյն, որ իր կենսուժն է յորդում Հայոց աշխարհի այգիներին, փառաբանութիւն լինի Արմին-Հայ նախնիների հողի մշակներին, որոնք ծառ են պաշտել, որպէս խաչեր իրենց նախնիներին ծառ են հողի սրտին տուել: Լոյս է նրանց սաղարթներին, ծիածան գօտիներ լանջերին, ոսկի ապրջաններով զարդարուն թեւերը վեր պարզած աղօթում են արեւին: Կարմիր այտերով շիկնած խնձորը, սաթեայ տանձը, կարմրաթուշ դեղձը հովիկների համբոյրից հուռվէլներ են շշնջում: Յաւերժութեան խորհրդանիշ նռնենիների թեւերից նռներն են ճօճւում որպէս հրագունդեր: Հրաբխացել են նռները, պայթել են նռները, որոնց սրտերից կարմիր կայծեր են ժայթքում, արիւն է հոսում: Արմին-հայերի նախնիներ նռնենիներ էին տնկել աստուածների մեհեանների շուրջը, նորահարսերը նռներ էին զարկել իրենց նոր օճախների շէմերին, որ միշտ լոյս լինէր այնտեղ: Նուռ ... Արմինա երկրի, Արմին-հայերի կեանքի առեղծուածի խորհրդանիշն է այն:*

*Աշուն ...: Արի գնանք խաղողի այգիներ, մայրացած որթատունկերն են կրթնել յենասիւների լարերին: Ոստերի տերեւների արանքներից արեւի կրակից շիկնած խաղողն է ժպտում: Աշուն, խաղողն է հասուն, լոյսով լեցուն հատիկները կարծես ահա կը պայթեն, դէմքդ կը ցօղեն անուշ բոյրով, շրթներդ քաղցր համով, հայրենի երկրի՝ «Արեւահամ Բարն» է այն: Խաղող քաղի՛ր, մի վախենար, նրա կարմիր կրակը չի այրի մատներդ, հրճուի՛ր նրա լոյսի հրեղէն ցոլքով: Ճաշակի՛ր այն, Մայր Անահիտ աստուածուհու պարգեւն է, Արմինա-Հայաստան աշխարհի արեւի համը, լուսնեակի անուշ դէմքի սպիտակ լոյսը, հայրենի հողի բիւրը, աստղամերձ լեռների ընդերքից ժայթքած ջրերն են այնտեղ: Հնձաններում քամում են նրա հիւթը, լցնում կարասներ, նրա սրտի կրակն է պոռթկում, դուրս ժայթքում, պղտորւում ... ուժասպառ հանգչում: Աստուածների ըմպելիք գինի է այն, որը խորանների առաջ խոնարհած նորապսակների շուրթերին սէր է հոսում, բանաստեղծներին տիեզերական թռիչք պարգեւում, բանաստեղծութեան արարում լինում, իրենց նախնիների ոստանների անունները իրենց ճակատներին՝ աշխարհներ գնում:*

*Արբեցի՛ր քու Արմինա-Հայաստան աշխարհին իջած աշնան հէքիաթով, ոսկէ աշունով, խաչուած քու միլիոնաւոր նախնիներին դու էլ ծառեր տնկիր: Դերեւս մանչ, Արմենակ հօրս հետ ծառեր եմ տնկել Մուսա Լերան իմ հայրենի լեռների լանջերի դարաւանդներին, ծառեր տնկել, հայրենի երկրի մայր ոստանի տանս առաջ այգի արարեցի, նրա հողում ծիրանենի, թզենի, խնձորենի, թթենի, կեռացի, սալորի, դեղձի ծառեր տնկեցի, որոնց յուշից լացում է հոգիս: Թշուառական, անօրէն դրացիներից փախայ, այնպէս ինչպէս հայկական լեգէոնի «Կապորալ» Արմենակ հայրս Թուրքից փախաւ: Գնացի մայր ոստանի օտարուած այգիս, միայն մի ծառ էր կանգուն, տանձի հսկայական մի ծառ էր դարձել, խեղճացել: Առանց խաղողի ողկոյզների՝ կիսամեռ էին թարմաներին յենած որթատունկերը, համբուրեցի բոլորին, արցունք հոսեցի նրանց վրայ, որ իրենց տէր Պօղոսի աւիւնից ու նրանց հողին տուած Արմենակի յուշերից նորէն կենդանանային, նոր տէրը նկատելով լացս, կանչեց: «Պօղոս, ինչ արեցի նրանք չյուռթեցին, ներող եղիր, մօտեցիր տանձ պոկիր, տար զաւակներիդ, ճակատս ափերով պահած՝ փախայ ...:*

*Աշուն ...: Արմին-Հայ, Ջանգեզուրի «Սիգապանծ» լեռների լանջերին աշնան հրդեհ է բռնկած, արի գնանք նրա լոյսը լցնենք մեր սրտերին: Մի՝ վախենար, շանթերի զարկած հրդեհ չէ, ծառերի սաղարթների ամառային արեւի ամբարած կրակն է այն: Լեռների լանջերից կարմիր հեղեղ է հոսում անդնդախոր ձորեր, անտառների հէքիաթային հրաշախաղ է այն: Ծառերի յոգնատանջ տերեւներն են շշուկով ընկնում հողին, անտառի երգն է, ունկնդրիր այն, տես ինչքա՜ն անդորր պիտի իջնի հոգուդ: Աշնանը այդ անտառներում որսի ենք ելել, մեր հրացանների արձակած փամփուշտները անզօր էին եղել հասնելու քարափներին բազմած «Կղթար»-ներին հասնելու: Հեռուից պիտի նշմարէիր խնձորենի, տանձենի, սալորենի, հոնի, գկերի արեւոտ ծառեր, ասում են վայրի, ո՜չ, մայր բնութիւնն է արարել այն, մարդիկ են նրանց շիւերը տարել, տնկել հողին, ազնուացրել: Մօտեցի՛ր ծառերին, նրա սաղարթներից ժպտացող պտուղներն են հասուն: Երբ հովիկները նրանց այցի են գալիս՝ օրօրւում են բերքից ճիւղակոտոր եղած ոստերը, դու էլ ձեռքերդ վեր պարզած աղօթիր մայր բնութեան արարչութեանը: Առաւօտեան ցօղն նրանց երեսներին՝ տանձ, խնձոր, սալոր քաղիր: Մտիր անտառի ձորակներ, հոնենիներ են այնտեղ, կայծեր են կախուած նրանց վարսերից, հոնն է այն, այդքան կարմիր կրակ ո՞րտեղից ... արեւից էին այն քաղել:*

*Արմին-Հայ, բացի քու մայր ոստանում ո՞րտեղ աշնան տօնախմբութիւն կատարւում: Հրազդան Մարգադաշտ, Հրազդան գետի վերին լանջին՝ 60-70 հազար նստատեղ, այն քիչ էր տարիներ առաջ մէկ միլիոն ու աւելի քաղաքի բնակիչներից ֆութպոլասէրների մրցումներ դիտելու եկած մարդկանց համար: Տասնըմէկ Արմին Հայ դիւցազուններ, թեւերը սոթքած մարգադաշտ ելել, վազում էին, հակառակորդը չէր կարողանում հասնել նրանց, հեռուից զարկում էին գնդակին, այն սուրում էր հրէ գիւնդի նման, մխրճւում դարպասի ցանց, ասուն էին, թէ երբեմն այն պատռւում էր: Ախ, բազում յաղթանակների այդ կանչերի յուշը մինչեւ հիմա հոգիս լցնում է խինդով: Ասում են հիմա դարպասին զարկող չկա, դիտող չկայ, նստատեղերը անմարդ: Մարգադաշտում ոսկէ աշնան տօնախմբութեան էր եղել, երեւի հիմա ... ՈՉ:*

*Մարգադաշտի դիմաց եկեղեցի է, 1827 թուականին այն չկար, պարսիկ Սարտար խանի բերդն էր այնտեղ: Ռուսը իր երթին եկել էր զաւթելու նաեւ Կովկասը, հասել արեւելեան կողմն Հայոց աշխարհի: Թնդանօթներն էին շարան-շարան կանգնել բերդի դիմացի Հրազդան գետի ափին: Գոռացել էին թնդանօթները, փլուել էին բերդի հողէ պատերը, Հայ աշխարհազօրայինները Ռուսի զինուորի հետ գրոհել էին, նուաճել բերդը, ծաւալուած յախուռն մարտերով, իրենց խանի հետ վռնտել էին բերդապահ պարսիկ զինուորներին: Յետագային, բանտի էին վերածել բերդը, որտեղ Զարենց, ու բազում մտաւորականներ, զօրապետներ սպաննուել:*

*Հոկտեմբեր ամսուայ երկրորդ Կիրակի օրը Հրազդան մարգադաշտում «Ոսկէ Աշուն» էին տօնախմբում: Սուրբ Սարգիս եկեղեցու բարձունքի նեղլիկ ճամբայով հազար-հազար Արմին-հայեր իջնում Հրազդան կիրճ, նրա քարէ կամուրջով անցնում Հրազդան գետի միւս ափ, բարձրանում մարգադաշտ: Նրա լանջից ներքեւ գետի հունից ջրանցք էր սկիզբ առել, այն գնում հասնում էր Էջմիածնի դաշտեր, ոռոգում հողը, բարիք արարում մշակին: Արմինա երկրի Իշպուինի թագաւորի որդի՝ Մէնուա արքայի բացած ջրուղին էր, Իլտարունի էր կոչել այն: Տուշպա-Վան ու նրա տարածքներ ջուր հոսելու համար նաեւ բազում ջրանցքներ արարել: Հազար-հազար Արմին-հայեր մարգադաշտ եկել, չկար պարապ նստատեղ, ով իմանար դեռ ինչքան մարդիկ դրսում տոմսակ էին փնտռելու, իրենք էլ մասնակցելու «Ոսկէ Աշուն» հէքիաթի տօնահանդէսին: Աղմկում էր, երգում էր մարգադաշտը, խինդի հրավառութիւնն էր պայթել այնտեղ: Այդ տօնախմբութիւնը իրենց հեթանոս նախնիների բնութեան պաշտամունքի, այգիներում ու արտերում հասունացած բերքի, Արածանի գետի ափի Նաւասարդի տօնախմբութեան յուշերը չէի՞ն:*

*Մարգադաշտի գլխաւոր մուտքի դարպասն է բացւում, թմբկահարների շարքերը բմբուկ զարկում, վազքուղիով անցնում փարաւոնների երկիրը նուաճած հիքսոսների երկանիւ կառքին բազմած, աշնան երփերանգ լոյսի շրջազգեստով Արմինուհի գեղուհին, նազանի աջ ձեռքով համբոյր ճամբում մարգադաշտի արեւորդիներին, որոնք ոտքի ելած բուռն ծափերով ողջոյնում նրան, ծաղկեփունջեր նետում նրա վրայ, կառքն ու վազքուղին ծաղկալոյսով էին ողողուել: Մի պահ կանգնել էր կառքը, նժոյգը գլուխը թեքած դէպի մարգադաշտ՝ ողջոյնել մարդկանց: «Ոսկե Աշուն» գեղուհին մարգադաշտի ոլորապտոյտ ուղիով անցնում, Հհայոց հին աստուածները Արարատի ձիւնոտ գագաթից սպիտակ թիթեռներ հոսել «Աշնան Գեղուհի»ի վարսերին:*

*Ձիերի սմբակների տրոփիւններ, մարգադաշտի վազքուղիով անցնում քառանիւ կառք, ոստանի երգիչներն էին նրանց վրայ, ձեռքերի թափահարումով ողջունում մարգադաշտը: Օֆելեան է կառքին կանգնած՝ մեղմիկ հովիկները քրքրում են հազար գոյնի շրջազգեստը, Հայոց աշխարհի երգի փերի, Հայ երգի չգերազանցուած «Թագուհի» էր, նրա կողքին էին Վարդուհին, Լուսիկը, Վալեան, Ռուբէնը, Յովհաննէսը, «Թաթուլ Ալթունեան»-ի անուան երգի-պարի համոյթի երգիչներ: Իջնում կառքերից, հազար ու մի ծաղկի անձրեւ էր տեղում նրանց վրայ: Գնում բարձրանում մարգադաշտի վրայ կառուցուած պատուանդան: Երգիչ-երգչուհիների Հայոց գուսանների, աշուղների, երգահանների ժողովրդական երգերի կատարումների հրավառութիւն էր, մարգադաշտի շարքերին խինդի հեղեղ էր, մարգադաշտի երգերի հնչիւնները հոսում Իլտարունի-Հրազդան գետի ջրերին, գնում Մայր Արաքսի ջրերին համբոյր շաղում, որ նա էլ հրճուէր, ոչ թէ «Քայլամոլոր» գնար, խինդից զարկէր ափերին, փրփրակէզ ժպտար: Գուսաններ՝ Հաւասի, Շահէն, Աշոտ իրենց նախնիների Գողթան գաւառի, Արարատի լանջերի ոգուց երկնած հայրենիքի սիրոյ գովքի երգերն էին հնչում: Մարգադաշտի գորգի վրայ տղաների ու աղջիկների պարախմբեր էին: Իրենց նախնիների շէների պարերն էին, ելեւէջում էին նրանց շարքերը, փրփրում էին*

Շար.ը էջ 19

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ ՈՒՏԵԼԻՔԻ ԶԳԱՅՆՈՏՈՒԹԻՒՆԸ-Allergy

Կարգ մը փոքրիկներ ուտելէ ետք կը զգան սիրտխառնուք, քերուըտուք կամ որեւէ այլ անկանոնութիւն: Ծնողքը գինք կ'ուղղեն զգայնոտութեան-allergy մասնագէտի: Կարգ մը քննութիւններ կատարելէ ետք մասնագէտ բժիշկը կը կազմէ ուտելիքներու ցանկ մը, որ կը պարունակէ փոքրիկին համար արգիլուած ուտելիքներ, որոնք կը համարուին զգայնոտութեան պատճառը: Հարցը կը բարդանայ, երբ կարգ մը փոքրիկներ նոյնիսկ բժիշկին ցուցմունքներուն հետեւելէ ետք դարձեալ ցոյց կու տան զգայնոտութեան նշաններ: Կը կատարուի երկրորդ քննութիւն եւ յայտնի կը դառնայ թէ զգայնոտութեան պարագան կարծուածէն աւելի բարդ է: Արգիլուած ուտելիքներու ցանկը կը մեծնայ:

Հարցը հոս այն է, որ կարգ մը քննութիւններ ճիշդ արդիւնքները չեն տար: Սխալ քննութիւն կատարելու պարագային մենք կը ստանանք սխալ ախտորոշում: Հազարաւոր մարդիկ իրենք զիրենք հեռու կը պահեն կարգ մը ուտելիքներէ սխալ ախտորոշում կատարելէ ետք:

Մասնագէտներ կը յայտնեն թէ շատ մը պարագաներու մանկաբոյժը անծանօթ է այս սխալներուն: Այս քննութիւնները 20 տարիէ ի վեր կ'օգտագործուին: Սխալ ախտաճանաչման պատճառով շատ մը երեխաներ կ'ունենան ճնշուած-stressed կեանք մը: Երեխաներ եւ անոնց ծնողները կ'ըլլան անհանգիստ-anxious, սխալ ուտելիք չուտելու եւ կ'ըլլան միշտ զգոյշ արգիլուած ուտելիք չուտելու համար: Ախտորոշումը պէտք է կատարուի ճիշդ ձեւով մարդոց կեանքին մէջ յաւելեալ բարդութիւններ չստեղծելու համար:

## ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԸ ԲՆՈՒԹԵԱՆ ԻՐԱԿԱՆ ՀՐԱՇՔՆ Է

Եգիպտացորենը միակ լայն սպառում ունեցող ուտելիքն է, որուն բոլոր մասերը ոսկի կը պարունակեն, 100 կրամ հատիկները կը պարունակեն 0.5 միքրոկրամ Au, մինչ մարդու մարմնի պահանջարկը կը տարուբերի 2-4 մկ սահմաններուն մէջ:

Ոսկիի ազդեցութիւնը մարմնին վրայ՝

* Չափահաս մարդու մարմնին մէջ կայ մօտ 10 մկ Au, որուն մօտաւորապէս կէսը կը գտնուի ոսկորներուն մէջ, մնացեալը լեարդին ու երիկամունքներուն մէջ:

Ոսկիի կենսաբանական դերը մարդու մարմնին մէջ կարօտ է յետագայ ուսումնասիրութեան, սակայն յայտնի են որոշ օգտակար յատկութիւններ:

* Անիկա կը խթանէ մարմնի մէջ պղինձի իւրացումը:
* Կը նպաստէ խոնաւցնող յատուկ նիւթերու աշխուժացման:
* Յատուկ հաշուարկուած չափերը կը կիրարկուին աթերոսքլերոզի, օսթէոխոնտրոզի, փարոտոնդոզի, լեարդի հիւանդութիւններու, ընկճախտի պարագային:
* Ոսկին կը զօրացնէ արծաթի հակաբորբոքային յատկութիւնները, ունի հակավարակային ազդեցութիւն:
* Կը բարձրացնէ դիմադրողականութիւնը:

Ոսկիի եւ եօտի համադրութիւնը.

* Եօտացուած ոսկին յայտնի է իբրեւ հակակարծրախտային (սքլերոզ) դեղորայք, որ չունի հակառակ ազդեցութիւններ եւ յաճախ կը կիրարկուի ծերացող մարմնին բնորոշ հիւանդութիւններու բուժման համար: Անիկա հնագոյն ժամանակներէն յայտնի միջոց է:
* Ոսկիի տարբեր՝ աղային միացումներու հիմքին վրայ կը պատրաստուի դեղորայք որոշ հիւանդութիւններու, ինչպէս փսորիազի հետեւանքով յառաջացած արթրիտի բուժման համար: Նման դեղերը կրնան յառաջացնել թունաւորում՝ չարաշահելու պարագային:

## ԿԵԱՆՔԻ «ԻՄԱՍՏԸ ԳՏՆԵԼԸ» Կ'ԵՐԿԱՐԷ ԿԵԱՆՔԻ ՏԵՒՈՂՈՒԹԻՒՆԸ

Կեանքի իմաստ գտնելն ու նպատակ ունենալը հաստատ կը բարձրացնէ անոր որակը, սակայն արդեօ՞ք անիկա նաեւ կ'երկարէ կեանքի տեւողութիւնը: Նոր հետազօտութիւնը կ'ըսէ՝ "Այո":

Հետազօտութիւնը իրականացնող գիտնականները ուսումնասիրած են մինչեւ 65 տարեկան 9050 բրիտանացիի տուեալներ:

Զանոնք բաժնած են չորս խումբի՝ ըստ կեանքէն բաւարարուածութեան աստիճանի եւ կեանքի գիտակցուած իմաստի գոյութեան՝ ամենաբարձր ցուցանիշներով մասնակիցներէն մինչեւ ամենացածը եւ ուսումնասիրած են 8.5 տարուան ընթացքին: Հետազօտութեան արդիւքները գնահատելէ առաջ արդիւնքները ճշգրտած են ըստ տարիքի, սեռի, հասարակական տնտեսական կարգավիճակի, ֆիզիքական առողջութեան, ճնշման աստիճանի, ծխելու կարգավիճակի, ֆիզիքական աշխոյժութեան, ալքոլի օգտագործման, որպէսզի բացառեն գործօնները, որոնք կրնան ազդել մեծահասակ մարդու առողջութեան ու բարեկեցութեան վրայ:

Հետազօտութեան աւարտին, կեանքէն ամենաբարձր բաւարարուածութեամբ խումբէն մահացած է մասնակիցներուն 9%-ը, մինչ ցած բաւարարուածութեամբ խումբէն մահացած է մասնակիցներուն 29%-ը: Բոլոր կողմնակի գործօնները հաշուի առնելով՝ գիտնականները պարզած են, որ կեանքէն ամենաբարձր բաւարարուածութեամբ մասնակիցները 30%-ով պակաս հաւանականութիւն ունէին այդ 8 տարուան ընթացքին մահանալու եւ ապրած են միջինը 2 տարի աւելի՝ կեանքը շարունակելու ցած հաւանականութեամբ մասնակիցներուն համեմատ:

Գիտնականները կը պնդեն, որ կան բազմաթիւ զբաղումներ, որոնք մեծահասակ մարդու կեանքը կը լեցնեն իմաստով ու նպատակներով՝ այգեգործութիւն, խոհարարութիւն, թոռներու դաստիարակութիւն, ընկերներուն եւ ընտանիքին օգնել, եւ այլն:

## ՆԱԽԱՆՇԱՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԸ ՅՈՒՇԵՆ ԱՂՋԿԱՆ ՄԸ ՍԻՐԱՀԱՐՈՒԱԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Եթէ աղջկան մը մօտ նկատելի են հետեւեալ նախանշանները, ուրեմն վստահաբար կարելի է ըսել, որ ան սիրահարուած է եւ յանուն իր ընտրեալին պատրաստ է դիմել իւրաքանչիւր խենթութեան:

Սիրահարուածութեան ընթացքին կնոջ աչքերը կը սկսին փայլիլ, կ'ուզէ յաճախ ժպտալ, սէր տալ բոլորին, որպէսզի անոնք նոյնպէս ուրախ ըլլան: Այս ժամանակ կը նկատուի նաեւ ցրուածութիւն:

Ցանկութիւն կը յառաջանայ հիանալի տեսք ունենալ օրուան ամէն պահուն՝ նոյնիսկ խանութ երթալու ընթացքին, քանի որ աղջիկը կը կարծէ, որ հաւանաբար այդ նոյն վայրկեանին սիրածը պիտի յայտնուի իր ճամբուն վրայ: Աղջիկը կը գնէ նոր զգեստներ, հագուստներ, շպարի միջոցներ, կը փոխէ իր ոճը, սանտրուածքը: Նոյնիսկ կը սկսի հետեւիլ իր մարմնի կազմուածքին՝ այցելելով մարզասրահ կամ սկսելով մարմնամարզութեամբ զբաղիլ:

Մշտապէս ցանկութիւն կ'ունենայ հեռաձայնելու կամ հաղորդագրութիւն գրելու անոր՝ թէկուզ առանց առիթի, պարզապէս գիտնալու համար, թէ ինչով զբաղած է ան եւ ի՞նչ կը ծրագրէ ընել երեկոյեան:

Հետաքրքրութիւնը կը մեծնայ աստղաբաշխութեան նկատմամբ եւ եթէ այնտեղ որեւէ բացասական միտք գրուած ըլլայ, սիրահարուած աղջիկը չի հաւատար՝ մտածելով, որ սխալմունք եղած է:

Պատկերասփիւռ դիտելու փոխարէն ան ժամանակ կ'անցնէ իր սիրելիին հետ: Անհասկնալիօրէն նախանձի զգացում կ'ունենայ:

Սիրահարուած աղջիկը անսպասելիօրէն ձեռք կը բերէ նոր հետաքրքրութիւններ, օրինակ՝ կը դառնայ ֆութպոլասէր, կը համաձայնի երթալ ձկնորսութեան, կը խօսի ինքնաշարժներու մասին եւ այլն: Օրուան ընթացքին քանի մը անգամ կը փոխուի անոր տրամադրութիւնը՝ բնականաբար անսահման երջանկութենէն մինչեւ ջղային տեսարաններ:

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ
## ՍՆՆԴԱԿԱՆՈՆՆԵՐՈՒ ԺԽՏԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ ՁԵՐ ՈՒՂԵՂԻՆ ՎՐԱՅ

Սննդականոնի հետեւիլը դարձած է նորաձեւութիւն: Մարդիկ կ'այցելեն սննդականոնի մասնագէտներու, կը հետեւին խիստ ցուցմունքներու բարեձեւ մարմին ունենալու համար: Երբեմն այդ սննդականոնները կրնան ժխտական հետեւանքներ ունենալ մեր ուղեղի գործունէութեան վրայ: Ուղեղին նախասիրած ուտելիքներն են իւղով հարուստ, քիչ ածխաջրածին-carbohydrate պարունակողները: Ածխաջրածին պարունակող ուտելիքները՝ գոց գոյն շաքարը, քինոան, լման հացը եւ այլն կրնան երկար ժամանակի վրայ վնասել մեր ուղեղին եւ պատճառել շատ մը հիւանդութիւններ ինչպէս ալցհայմըր, տիմենթիա, adhd, գլխու ցաւեր: Այս ուտելիքներու օգտագործումը նուազեցնելով եւ լաւ քոլեսթերոլ պարունակող ուտելիքներ օգտագործելով մենք պիտի օգնենք մեր ուղեղի լաւ աշխատանքին: Ըստ մասնագէտներու շաքարի շատ օգտագործումը եւ վատ քոլեսթերոլ պարունակող ուտելիքներու օգտագործումն է ուղեղի եւ սրտանօթային անհանգստութիւններու իսկական պատճառը:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* $50,00 * $100,00 (first class) for USA
$ 125,00 (Air Mail) for Canada.
$ 250,00 (Air Mail) Overseas.
Name: -------- ------------------------------------
Address: -------------------------------------------
City: --------- State:--------- Zip Code:------
Country: --------------
Tel :----------------------- Email: --------------------------

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

## «Մանչեսթեր Եունայթեդը» Լոնտոնում Պարտուեց «Չելսիին»



*Անգլիական Պրեմյեր լիգայի 11-րդ տուրում «Մանչեսթեր Եունայթեդը» Լոնտոնում նուազագոյն հաշուով պարտուեց «Չելսիին»:*

*Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը ընդգրկուել էր Ժոզէ Մոուրինիոյի գլխաւորած թիմի մեկնարկային կազմում: Առաջին խաղակէսը հարուստ էր կոլային պահերով, բայց աւարտուեց 0:0 հաշուով: 2 թիմերն էլ ունեցան դարպասը գրաւելու իրական հնարաւորութիւններ, որոնք օգտագործել չյաջողուեց:*

*Երկրորդ խաղակէսում «Չելսին» աւելի լաւ տեսք ունէր, իսկ 55-րդ րոպէին բացեց հաշիւը: Գլխի անթերի հարուածով աչքի ընկաւ սպանացի յարձակուող Ալւարօ Մորատան, որին 5 պաշտպաններով խաղացող «Մանչեսթեր Եունայթեդի» խաղացողներն առանց հսկողութեան էին թողել տուգանային հրապարակում: Բաց թողած կոլից յետոյ Ժոզէ Մոուրինիոյի թիմը չկարողացաւ լուրջ ինչ-որ բան առաջարկել մրցակցին եւ կրեց երկրորդ պարտութիւնն ընթացիկ առաջնութիւնում:*

*Հենրիխ Մխիթարեանը վառ գործողութիւններով աչքի չընկաւ եւ փոխարինուեց 62-րդ րոպէին:*

*«Մանչեսթեր Եունայթեդը» 23 միաւորով «Տոտենհեմի» հետ բաժանում է 2-3-րդ տեղերը եւ արդէն 8 միաւոր է հետ առաջատար «Մանչեսթեր Սիթիից»: «Չելսին» 22 միաւորով բարձրացաւ չորրորդ տեղ:*

*«Էվերտոնը» սեփական դաշտում 3:2 հաշուով պարտութեան մատնեց «Ուոթֆորդին», որը երկրորդ խաղակէսում յաղթում էր 2:0 հաշուով:*

## «Մանչեսթեր Եունայթեդի» Երկրպագուները Քննադատել են Հենրիխ Մխիթարեանին

*«Լիվերպուլի» եւ Անգլիայի հաւաքականի նախկին պաշտպան Ջեյմի Կարագերը «Մանչեսթեր Եունայթեդի» եւ Լոնդոնի «Չելսիի» միջեւ Պրեմյեր լիգայի 11-րդ տուրի խաղից յետոյ քննադատել է Հենրիխ Մխիթարեանին, որը Ժոզե Մոուրինիոյի գլխաւորած թիմի մեկնարկային կազմում հանդէս էր եկել 62 րոպէ:*

*«Մանչեսթեր Եունայթեդը» 10 ֆուտպոլիստներով էր խաղում՝ դաշտում ունենալով Հենրիխ Մխիթարեանին»,- Կարագերի խօսքը մէջբերում է thepeoplesperson.com-ը:*

*Լոնտոնում կայացած եւ «Չելսիի» յաղթանակով (1:0) աւարտուած հանդիպումից յետոյ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպանին սոցիալական ցանցերում քննադատել են նաեւ «Մանչեսթեր Եունայթեդի» երկրպագուները, որոնք պնդում են, որ Մխիթարեանը տեղ չունի թիմի մեկնարկային կազմում:*

## «Ռեալը» Յաղթեց Խոշոր Հաշուով

*Սպանական Պրիմերայի 11-րդ տուրում Մադրիդի «Ռեալը» սեփական դաշտում 3:0 հաշուով առաւելութեան հասաւ «Լաս Պալմասի» նկատմամբ: Արքայական ակումբից առաջին խաղակէսում հաշիւը բացեց պրագիլացի կիսապաշտպան Կազեմիրոն, իսկ ընդմիջումից յետոյ աչքի ընկան սպանացիներ Մարկօ Ասենսիոն ու Իսկոն:*

*Այս յաղթանակից յետոյ Զինեդին Զիդանի գլխաւորած թիմը վաստակեց 23 միաւոր եւ հաւասարուեց երրորդ տեղում գտնուող Մադրիդի «Աթլետիկոյին»: Առաջատար «Բարսելոնան» ունի 31 միաւոր, իսկ երկրորդ տեղում ընթացող «Վալենսիան»՝ 27:*

## Գերմանիայի Առաջնութիւն. Բաւարիան Յաղթեց Դորտմունդին «Դեռ Կլասիկեր»-ում

*Գերմանիայի առաջնութեան 11-րդ տուրի կեդրոնական խաղում ախոյեան Բաւարիան Դորտմունդում 3-1 հաշուով պարտութեան մատնեց Բորուսիային: Բաւարիայի կազմում աչքի ընկան Արյեն Ռոբենը, Ռոբերտ Լեւանդովսկին եւ Դավիդ Ալաբան, իսկ Բորուսիայից միակ պատասխանը կոլը խփեց Մարկ Բարտրան:*

*Յաղթանակի շնորհիւ Բաւարիան 26 միաւոր վաստակեց եւ 4 միաւորով գերազանցում է երկրորդ տեղում գտնուող Լեյպցիգին:*

*Նշենք, որ Անչելոտիի հեռացումից եւ Յուպ Հայնկեսի նշանակումից յետոյ միւնխենեան թիմը միայն յաղթանակներ է տարել բոլոր մրցաշարերում:*

### ԱՄՈՒՍՆԱՑԵԱԼՔ

*ԳԷՈՐԳ ՄԱՆՈՒԿԵԱՆ Ընդ ՃԷՆԻՖԸՐ ՊԱՂՏԱՏԼԵԱՆ*

*4 Նոյեմբեր, 2017 Փասատինա*

*Այս առթիւ մեր ջերմ եւ սրտագին շնորհաւորութիւններն ու բարեմաղթութիւնները ամուսնացեալ զոյգին եւ անոնց ընտանեկան համայն պարագաներուն:*

## Աշխարհի Գաւաթ. Էդգար Ստեփանեանն՝ Արծաթէ Մեդալակիր




*Հայաստանը ներկայացնող Էդգար Ստեփանեանն արծաթէ մեդալակիր է դարձել հեծանւահրապարակի աշխարհի գաւաթի խաղարկութիւնում:*

*Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայում ընթացող մրցաշարի սկրեչ մրցաձեւում Հայաստանի առաջատար հեծանւորդը զիջել է միայն Բելգիայի ներկայացուցիչին, յայտնում է ՀԱՕԿ-ի մամուլի ծառայութիւնը:*

## Ատրպէյճանի Պասքետպոլի Ֆեդերացիան Հայաստանի Դէմ Բողոքով Դիմել է ՖԻԲԱ-ին



*Պասքետպոլի տղամարդկանց Ա. լիգայի կանոնաւոր առաջնութեան խաղերը նաեւ Արցախում անցկացնելու պատճառով Ատրպէյճանի պասքետպոլի ֆեդերացիան դիմել է Պասկետպոլի միջազգային ֆեդերացիային (ՖԻԲԱ)՝ Հայաստանին պատժելու պահանջով, քանի որ ըստ նրանց, Արցախում իրաւունք չունենք անցկացնել Հայաստանի առաջնութեան խաղեր:*

*Այս մասին NEWS.am Sport-ի թղթակցի հետ զրոյցում ասաց Ստեփանակերտի «Արցախ» բասկետբոլային ակումբի սպորտային տնօրէն Արեգ Վաթեանը:*

*Հոկտեմբերի 21-ին Հայաստանում եւ Արցախում մեկնարկած պասքետպոլի տղամարդկանց Ա. լիգայի կանոնաւոր առաջնութեանը մասնակցում է 7 ակումբ՝ «Ուրարտու» (Երեւան), ՖԻՄԱ (Երեւան), «Շիրակ» (Գիւմրի), «Արթիկ» (Արթիկ), «Ինժիներ» (Երեւան), «Գրանդ Սպորտ» (Երեւան) եւ «Արցախ» (Ստեփանակերտ):*

*Ստեփանակերտում կայացած Ա. լիգայի երկրորդ տուրում «Արցախի» խաղին ներկայ է եղել նաեւ Արցախի Հանրապետութեան նախագահ Բակօ Սահակեանը, ինչը մեծ արձագանք է ունեցել ատրպէյճանական մամուլում:*

## Մոսկուայի «Արարատը» Միաւորներ է կորցրել

*Ֆուտպոլի Ռուսաստանի Երկրորդ դիւիզիոնի առաջնութեան «Կեդրոն» գօտու մրցաշարի 16-րդ տուրում Մոսկուայի «Արարատը» հիւրընկալուելիս կոլազուրկ ոչ ոքի է խաղացել Նովոմոսկովսկի «Խիմկիի» հետ:*

*Հայկական ակումբը շարունակում է անպարտելի մնալ եւ 42 միաւորով գլխաւորում է մրցաշարային աղիւսակը՝ 13 միաւոր գերազանցելով երկրորդ տեղում գտնուող «Ռյազանին»:*

## ԵԱ. Հայաստանի Հաւաքականը Դուրս Մնաց Մեդալային Պայքարից

*Յունաստանում աւարտին մօտեցող շախմատի Եւրոպայի թիմային առաջնութեան վերջին տուրից առաջ Հայաստանի հաւաքականը զրկուեց մրցանակային տեղ գրաւելու հնարաւորութիւնից:*

*Նախավերջին՝ 8-րդ տուրում Հայաստանի հաւաքականը ոչ ոքի խաղաց Լեհաստանի թիմի հետ եւ 9 միաւորով բաժանում է 12-17-րդ տեղերը:*

*Վերջին տուրից առաջ առաջատար դարձաւ Ատրպէյճանի հաւաքականը, որը 3:1 հաշուով անակնկալ յաղթանակ տարաւ ռուսների նկատմամբ եւ վաստակեց 13 միաւոր: Ռուսաստանն ու Ուկրաինան 12-կան միաւորով բաժանում են 2-3-րդ տեղերը, իսկ Գերմանիան, Թուրքիան ու Խորուաթիան ունեն 11-ական միաւոր: Հունգարիան, Ռումինիան, Սպանիան, Իսրայէլն ու Անգլիան վաստակել են 10-ական միաւոր:*

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով
հեռաձայնել՝ (626) 398-0506

## ՄԱՀԱՑԱԾ Է ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՄՇԱԿ՝ ԱԶՆԻՒ ԱԼԹՈՒՆԵԱՆԸ



Ցետ կարճատեւ հիւանդութեան Պէյրութի մէջ իր մահկանացուն կնքած է երկար տարիներու կրթական մշակ եւ հայերէն լեզուի ուսուցչուհի՝ Ազնիւ Ալթունեանը: Այս մասին «Արեւելք» տեղեկութիւն ստացաւ Պէյրութի իր աղբիւրէն:

Ազնիւ Ալթունեան մասնակցած է հայահոծ շրջանի մշակութային կեանքին եւ շնորհաշատ գործունէութիւն ծաւալած է մանաւանդ «Նոր Սերունդ» մշակութային միութեան շարքերէն ներս:

Ալթունեան եղած է անդամ ՍԴՀԿ «Տխրունի» ուսանողական միութեան եւ ապա անդամակցած է Հնչակեան կուսակցութեան շարքերուն: Հանգուցեալը նաեւ գնահատելի աշխատանք տարած է Հաճնոյ հայրենակցական միութենէնէն ներս:

Որպէս հայերէն լեզուի ուսուցչուհի դասաւանդած է Ազգային Ռուբինեան վարժարանէն ներս, նուիրուելով մատղաշ սերունդի ազգային եւ հայեցի դաստիարակութեան գործին:

Թաղման եւ յուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Երկուշաբթի 6 Նոյեմբերին, Պատաուի շրջանի Սուրբ Յարութիւն եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ եւ ամփոփուեցաւ Պուրճ Համուտի ազգային գերեզմանատան մէջ:

Այս տխուր առթիւ «Արեւելք» իր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի պարագաներուն եւ մանաւանդ պէյրութհայ մշակութային գործիչ եւ դերասան Ղազարոս Ալթունեանին:

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԱԶՆԻՒ ԱԼԹՈՒՆԵԱՆԻ մահուան տխուր առիթով (մահացած Պէյրութ) Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնն ու անդամները իրենց խորազգաց վշտակցութիւնները կը յայտնեն նուիրեալ մշակութային գործիչի եւ մանկավարժի ընտանեկան համայն պարագաներուն եւ պաշտօնակիցներուն:

## ՀԱՅԱՍՏԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՒ ԷՏՎԵՆԹԻՍԹ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

Շարունակուած էջ 13-էն

ռապողներուն: Դարմանատան աշխատակազմը կ՚ընդգրկէր սրտաբաններ, թոքաբաններ, մանկաբոյժներ, ջղաբաններ, ախտաբաններ, եւ բջջաբաններ:

Տրուած ըլլալով Հայաստանի գիւղական շրջաններուն մէջ մասնագիտական բժշկական միջոցներու ընդհանուր պակասը, կիներու առողջապահութիւնը տակաւին մեծապէս թերի կը մնայ հոն: Այս նկատի ունենալով, Հայաստան Հիմնադրամի եւ Էտվենթիսթի բժշկական առաքելութիւնը նաեւ կատարեց Փափ սմիրներ (Pap smears) եւ կենսազննումներ (biopsies)՝ Նոյեմբերեան քաղաքին եւ շրջակայքի գիւղերէն գրեթէ հարիւր կիներու համար: Էտվենթիսթի ախտաբանները աշխատեցան Նոյեմբերեանի Հիւանդանոցի տարրալուծարանը՝ պատրաստելով կենսազննման նմոյշները եւ արձանագրելով արդիւնքները. ապա մասնագէտ բժիշկները կը մեկնաբանէին այդ արդիւնքները եւ ըստ այնմ կը խորհրդակցէին հիւանդներուն հետ: Այս քայլերու իւրաքանչիւր շարքը կ՚ամբողջացուէր մի քանի ժամուայ ընթացքին միայն. այլապէս այս քայլերը պիտի տեւէին 20-էն 30 օր, տրուած ըլլալով շրջանի բժշկական կեդրոններու սահմանափակ միջոցները:

Առաքելութիւնը դարձեալ պատեհութիւն մը հանդիսացաւ՝ ոչ միայն բարելաւելու Նոյեմբերեանի Հիւանդանոցի բժշկական ենթակառոյցն ու կարողութիւնները, այլ նաեւ մասնագիտական մարզում շնորհելու եւ հիւանդանոցէն ներս բժշկական գերազանցութեան երկարատեւ ու կայուն ժառանգ մը ստեղծելու: Շնորհիւ առաքելութեան, ոչ միայն աւելի քան 2,000 հիւանդներ դարմանուեցան, այլ նաեւ բազմաթիւ տեղացի բժիշկներու ու վիրաբուժներու առիթը տրուեցաւ մաս կազմելու լայնածաւալ ծրագրի մը՝ յօգուտ իրենց համայնքներուն:

OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

## ԱՒԵՏԻՍ ՌԱԶՄԻԿԻ «ԿԵԱՆՔԻ ԿԱՐՈՒՍԵԼ»

Շարունակուած էջ 15-էն

դարերու երազը, բայց ափսո՜ս, ահա 21 տարիէ ի վեր (այժմ 26) Հայաստանի իշխանութեան կը տիրեն աւազակներ, թալանչիներ, ու քրէական յանցագործներ: Երէկուան խաչագողներ պետական լծակներու շնորհիւ կեղեքեցին ժողովուրդը, թալանեցին երկիրը, ազգին պատկանող հարստութիւնները իւրացնելով՝ գումարները փոխադրեցին արտասահման: Վերջերս Հայաստանի երկրորդ նախագահը Յունաստանի մէջ կղզի գնեց, անշուշտ ոչ թէ ազգին համար, այլ՝ իր անձնական հաճոյքին, անշուշտ ժողովուրդէն կողոպտած գումարներով: Այժմու նախագահին եղբայրը՝ Սաշիկը, միլիոնատէր է, անշուշտ ոչ իր քրտինքով, այլ՝ ժողովուրդը կեղեքելով»:

Այսպէս կ՚երկարի Ռազմիկին նամակը՝ գոյներու խտացումով: Բայց...

- Լսողը ո՞վ... խուլերը կը լսե՞ն:

Նամակը կը վերջանայ համբոյրներով՝ աւդենականէն անդենականին:

7 Հոկտեմբեր 2012

Աւետիս Ռազմիկ, անդենականը պատասխանած է նամակիդ իր ողջ գրականութեամբ, զոր չորս գործի վերածել անհրա ժեշտ է: Հիմա բոլորիս պաշտելի Չարենցին պատգամը (գա ւակդ Չարենց անուանած ես - Թ.Թ.). «ՈՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ՔՈ ՄԻԱԿ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ ՔՈ ՀԱՒԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԷՋ Է», զոր ամէն օր կը կրկնենք՝ առանց ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ...

Շարունակելով խօսքերդ, առաւօտի պէս պայծառ Թումանեանը անուանած ես «Մարդկութեան Ախոյեանը», Խրիմեան Հայրիկը՝ «Սուրբ Երրորդութիւն«՝ զէնք ու մշակոյթով, Պարոյր Սեւակը անլռելի՝ «Տաղանդները Ջեն Ծերանար», Շահան Շահնուրը՝ «Սերունդներ որոնք աշխարհ պիտի գան արտերկրի մէջ՝ պիտի ըլլան օտար բանիւ եւ գործով, կամայ թէ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, մեղա՜յ, մեղա՜յ Արարատին, իսկ օտարացանք Արծիւ Անդրանիկէն», իսկ ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆԸ՝ «Հայաստան ասելիս այտերս այրւում են, Հայաստան ասելիս հասակս ծաղկում է...»

Նաեւ՝ «Պէպօ Սիմոնեանի կեանքի վերջակէտով զգացինք մեծ բացակայութեան մը վիշտը: Ինք անհրաժեշտութիւն մըն էր»: Խաչի եւ գրիչի ռազմիկն ալ հոս է՝ հայր Անդրանիկ Կռանեանն իր «Մասիս» թերթով:

Համազօր անուն մը, Շաւարշ Միսաքեաններու, Արփիար Արփիարեաններու, Անդրանիկ Ծառուկեաններու կողքին, Աւետիս Ռազմիկ, ռազմիկ գրող, հրապարակագիր: Վերի անունները կը յայտնաբերուին տուածդ հետեւեալ բառապաշարին մէջ. «Առաքելատիպ սխրանք», «Մեղա՜յ, մեղա՜յ Արարատին», «Հայրենիքը հերոսամայր է«, «Մշտապայծառ համաստեղութիւն», «Սէրը կը սրբէ հոգիին ժանգը», «Մեսրոպապաշտ», «Կենդանութեան իսկ դասական», «Գեղադիպուկ խօսք», «Ցարահունչ ղօղանջ», «Թափառայած կեանք», «Հայրենաբոյր աւանդոյթ», «Պահել հրիտակը մեծերուն», «Ամենայն Հայոց գաղափարախօս», «Յուզաթաթաւ զգացումներով», «Ոգեղէն ներկայութիւն», «Դրօշմաթուղթէն մեզ արդար մարտի կը կոչէ հայոց Կարի պալտին», «Բախտախաղերու ախոյեաններ», «Շքանշանի արտադրամաս քիչ մը հոս ու հոն», «Այսօրուան հերոսը ունի ճոխ յիշոցներ», «Գարշահոտ բառապաշար», «Ջուրկ է ամօթէ ու խիպէ», «Հայրենիքը խծբծող է»:

Իսկ իրաւ գրողը՝ «Հայրենի հողին եւ հովին, բնութեան, լերան ու ձորին, գետի կարկաչին, ժայռ ու քարին, կածանին ու արա հետին, ծերպին ու ծմակին, ամպին ու ցորենին, սօսիին, բարտիին եւ ուռենիին երգիչն է»:

ԳԻՐՔԵՐՈՒ ՄՏԵՐՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Կալեծփիս գինովցած հայ գիրքի Անթիլիասական ցուցահան դէսներու մէջ հանդիպելով սեղանապետ Թումանեանին, սեղանակիցներ Վահան Տէրեանին, Ղազարոս Աղայեանին, Պերճ Պռօշեանին, Շիրվանզադէին, Գէորգ Բաշինջաղեանին, Աւետիք Իսահակեանին, Աւետիս Ահարոնեանին, խօսիլ կու տաս բոլորը, հարց ալ կու տաս, թէ անոնք գաղափար մը ունի՞ն Արշակ Ջօպանեանի անպատուհան սենեակին մասին...

Երեւանի մէկ կորած ծայրին գրքաղացի ալ կը հանդիպիս, գրքաղաց, որ գոռոցով գիրքեր կ՚աղայ, որ մարդիկ արտազնոցի մէջ օգտագործեն թուղթի վերածուած այդ գիրքերը... Այդ գիրքերուն մէջ Աւետարաններ ալ կան, Պրէժնեւի ճառերն ալ կան, Պուշկինի գործերուն կողքին... Մեղա՜յ, մեղա՜յ սուրբ Մեսրոպին, հայերէն գիրքեր ալ կան... Ցուցահանդէսէն կը փրկես Ռուբէն Սեւակին երկերու հատորը ու կոչ կ՚ընես, որ փրկուին գիրքերը գրքաղացի պտոյտէն...

Ինը հատորներու մասին ունիս անկեղծ խօսքերդ որպէս գրախօսական:

Ուրեմն, կը շարունակուի հայ գիրքին տպագրուիլը:

Դուն ողբացող մը չես, այլ՝ ողջունողը հայ գիրքի լոյս ընծայումին, լաւին բարեկամը, վատը արհամարհողը, ոչ թէ անիծողը:

Վատը արդէն անիծուած է:

Ինչպէս երկու մանչ ունեցար, այդպէս ալ, Աւետիս Ռազմիկ, առաջին այս գիրքդ մինակուկ ՉՄՆԱՑ:

## «ՎԱՍ ԱՇՈՒՆԵԱ» (ՈՍԿԷ ԱՇՈՒՆ)

Շարունակուած էջ 16-էն

Նրանց շարքերը, շարքերից ցած էին հոսում պարմանուհիներ, կարծես ծառերից ընկած աշնան հազար գոյների տերեւներ լինէին, որոտագին ծափահարում էր մարգագաշտը: Գեղամայ ծովակի ջրերի լոյսն էր աշտարակների վրայից հոսում մարգագաշտ, դեռ երկար պիտի ցնծային: Թմբուկ էին զարկում, ծիրանափողեր հնչում, տղաների ու աղջիկների պարերի խառը խմբեր, ձեռքերը ճախրած աստղերին, դոփում էին գետինը, թող աշխարհի սարքերը գրանցէին հայոց ոստանից պայթած ցնծութիւնը, նրանց լինելիութեան յաւերժութեան լոյսը: Աշնան, ու Նաւասարդի հէքիաթի ցնծութեամբ էին արբեցել Արմին-հայերը, լոյսի ու երգի հեղեղ էր մայր ոստանում:

ARMENIA FUND'S 20th INTERNATIONAL THANKSGIVING DAY

# TELETHON 2017

NOVEMBER 23




LIVE BROADCAST 10AM-10PM PST

| CENTRAL CALIFORNIA | SOUTHERN CALIFORNIA | SAN FRANCISCO & BAY AREA | LAS VEGAS |
|---|---|---|---|
| KGMC OTA Ch. 43.6 and Ch. 13.1<br>Comcast Xfinity Ch. 375<br>Northland Ch. 2 and Ch. 9<br>Noor TV Ch. 31.7 | Armenian Channels<br>&<br>KVMD Network | KTSF OTA Ch. 26.1<br>DirecTV Ch. 26<br>Dish Network Ch. 26<br>Comcast Ch. 8<br>AT&T U-verse Ch. 8 | ArMount TV |

12 HOUR LIVE WEBCAST AT WWW.ARMENIAFUND.ORG

Facebook.com/ArmeniaFund Twitter.com/ArmeniaFund instagram.com/ArmeniaFund YouTube.com/ArmeniaFundUS

ArmeniaFund

VISIT & DONATE: www.ArmeniaFund.org or Call:1-800-888-8897